

Ռ. Խ. ՄԿՐՏՁՅԱՆ

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՂԱԴՐԻՋՆԵՐԻ  
ԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՌԱՋԱԲԱՆ

Ինչպես ամեն մի լեզու, այնպես էլ հայերենը, ունի իր բա-  
ռակազմական ուրույն միջոցները, որոնք քննության առարկա են  
դարձել շատ լեզվաբանների աշխատություններում:

Հայ աեանավոր լեզվաբան Ա. Այտընյանն իր նշանավոր քե-  
րականության մեջ կատարել է հայոց լեզվի բառապաշարի բառա-  
կազմական ու իմաստաբանական քննությունը<sup>1</sup>: Խոսելով բարդ  
բառերի մասին, նա նշում է դրանց մեկից ավելի արմատներից  
բաղադրված լինելը: Այտընյանն առանձին ուշադրություն է դարձ-  
րել հոդակապով և անհոդակապ, ինչպես նաև շաղկապներով միա-  
ցած բաղադրիչներ ունեցող բարդություններին՝ նշելով նաև դրանց  
տարբեր խոսքի մասերից կազմված լինելը: Քննական քերականու-  
թյան հեղինակը, ճիշտ կերպով, բարդության առանձին տեսակ է  
համարել կրկնավորները և քննել է կրկնավորների հնչյունափոխա-  
կան որոշ դեպքեր, իսկ հարադրական բայերը նա համարել է ո-  
ճեր և հստակ չի ընդգծել դրանց բայական արժեքը<sup>2</sup>:

Անդրադառնալով բարդությունների իմաստային առանձնա-  
հատկություններին՝ Ա. Այտընյանը նշել է, որ բայակրկնավորնե-  
րը ցույց են տալիս գործողության երկարությունը, շարունակու-  
թյունը, կրկնությունը, իսկ մակբայի կրկնությունն արտահայտում  
է կրկնվող բառով արտահայտված հատկանիշի սաստկացում<sup>3</sup>:

1 Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն  
լեզվի հանդերձ ներածությամբ ու հավելվածով, Վիեննա, 1866, էջ 303—310:

2 Նույն տեղում, էջ 317:

3 Նույն տեղում, էջ 250—251:

Աշխարհաբարի քերականներից մեկ ուրիշը՝ Ստ. Պալասան-  
յանը, բարդ բառերը քննելիս, հիմնական հարցերում հետևել է Ա.  
Այտրնյանին: Սակայն նա այլ մոտեցում է ցուցաբերել հարադը-  
րական բայերի հարցում, դրանք համարելով բարդություն մի տե-  
սակ և դիտելով որպես ինքնուրույն բայեր: Պալասանյանը գրում  
է. «Արևելյան Հայոց լեզվին առանձին զարդ ու գեղեցկություն են  
տալիս գոյականով կամ բայի արմատով ու բայով կազմված բա-  
ղադրյալ բայերը և ոճերը, որոնցից ոմանք միայն բաղադրական  
ձևով կարող են վարվիլ, ուրիշները մեկ բառով էլ: Այնուհետև,  
բերելով համապատասխան օրինակներ, ցույց է տալիս վերլուծա-  
կան ու համադրական ձևերով արտահայտված բայերի իմաստա-  
յին տարբերությունները (քաշ տալ—քաշել, թափ տալ—թափել)»<sup>4</sup>:

Բարդ բառերի ուսումնասիրությունը նոր աստիճանի բարձ-  
րացրեց անվանի հայագետ Մ. Արեղյանը: Նա իր «Հայոց լեզվի  
տեսություն» մեծարժեք աշխատության մեջ տվել է հայերենի  
բարդ բառերի բազմակողմանի ուսումնասիրությունը: Պրոֆ. Ա.  
Բեղյանն իր ուսումնասիրությունը կատարել է հարուստ փաստա-  
կան նյութի հիման վրա և տարբերակել է բարդ բառերի երեք տե-  
սակ՝ իսկական բարդություններ, հարադրական բարդություններ,  
կցականներ: Հետագա հայ լեզվաբանները հիմնականում ընդու-  
նեցին Մ. Արեղյանի դասակարգումը, միայն մի տարբերությամբ՝  
իսկական բարդություններին հակադրեցին անիսկականները, ո-  
րոնց մեջ մտնում են հարադրական բարդություններն ու կցական-  
ները:

Արեղյանն իր աշխատության մեջ քննել է նաև բարդ բառերի  
բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները, նշելով, որ  
գոյականով արտահայտված առաջին բաղադրիչը կարող է ունե-  
նալ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական,  
գործիական, ներգոյական հոլովների նշանակություն<sup>5</sup>:

Հայոց լեզվի բառային կազմի, այդ թվում նաև բարդ բառերի  
ուսումնասիրությանն առանձին ուշադրություն է դարձրել Ա. Մուր-  
վալյանը: Նա հանգամանորեն քննել է բարդ բառերի տեսակները,  
դրանց իմաստային, ձևաբանական, բառակազմական առանձնա-  
հատկությունները<sup>6</sup>: Բարդությունների բաղադրիչների շարահյուս-

<sup>4</sup> Ստ. Պալասանյան, Ընդհանուր տեսություն նոր գրավոր լեզվի հայոց, Թիֆ-  
լիս, 1870, էջ 19:

<sup>5</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 201—206:

<sup>6</sup> Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955:

սական փոխհարաբերությունների վերաբերյալ Ա. Մուրվալյանը նշել է, որ առաջին բաղադրիչը երկրորդի նկատմամբ կարող է լինել խնդիր, պարագա, որոշիչ, հատկացուցիչ<sup>8</sup>:

Բառաբարդման տեխնիկայի ու բտրդ բառերի քննությամբ զբաղվել է նաև պրոֆ. Գ. Սևակը իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» աշխատության մեջ, ուր կցական բարդությունների վերաբերյալ դրում է, որ դրանց բաղադրիչները կարող են միմյանց նկատմամբ գտնվել ենթակա-ստորոդյալ, հատկացուցիչ-հատկացյալ, որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությունների մեջ<sup>9</sup>:

Հայերենի բայական բարդություններն իրենց խորը և դիտական ուսումնասիրությունն են գտել Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» և Ա. Մարգարյանի «Հայերենի հարադիր բայերը» աշխատություններում: Նրանք իրենց աշխատություններում հանգամանորեն քննել են հայերենի զուգադրական ու հարադրական բայերը: Զուտ բայական բաղադրիչներից կազմված հարադրական բայերը պրոֆ. Ա. Աբրահամյանը անվանել է զուգաբայական հարադրություններ<sup>9</sup>, իսկ պրոֆ. Ա. Մարգարյանը, դրանք ներկայացրել է զուգադրական բայեր տերմինով<sup>10</sup>:

Զուգադրական բայերը հատուկ են հայերենին հնագույն ժամանակներից: Գրաբարի զուգադրական բայերի մասին արժեքավոր դիտողություններ ունի Ա. Այտընյանը: Նա զուգադրական բայերը բաժանում է երեք խմբի. Մի խմբի մեջ մտնում են հավասարապես խոնարհվող բաղադրիչներով բայերը՝ փութա էջ, եկն եհաւ: Երկրորդ խմբի մեջ մտնում են այն բայերը, որոնց միայն առաջին բաղադրիչն է խոնարհվում (վրիպեցին ասել, գտանէր ունել), իսկ երրորդ խմբում անցյալ դերբայը հանդես է գալիս նույնանշան դիմադոր բայի հետ (անցեալ գնայր, արկեալ տարաւ)<sup>11</sup>:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 220, 225—227:

<sup>9</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 167—168:

<sup>10</sup> Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Գ. Ա. Երևան, 1962, էջ 190:

<sup>11</sup> Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1965, էջ 279:

<sup>11</sup> Վ. Չալիխեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ եւ յաւելվածով, աշխատասիրեալ ի. Հ. Արսէնէ Վ. Այտընեան, Վիեննա, 1885, էջ 433:

Ա. Այտընյանը դրել է զուգադրական բայերի ուսումնասիրության հիմքը և շնայած մինչև վերջ չի հասցրել նրանց ուսումնասիրությունը, բայց հարցի առաջաշումն արդեն մեծ նվաճում է հայ քերականական մտքի պատմության մեջ: Ա. Այտընյանը զուգադրական բայերը անվանել է բայական ավելադրություններ<sup>12</sup>:

Գրաբարի զուգադրական բայերին անդրադարձել է նաև ակ. Հ. Աճառյանը: Նա բայերի միատեղ գործածության նպատակը համարում է բայի իմաստի զորացնելը<sup>13</sup>:

Մ. Աբեղյանը զուգադրական բայերն ուսումնասիրելիս մեծ ուշադրություն է դարձրել իմաստային կողմին՝ նշելով մեկից ավելի բայերի իբրև մեկ բառ գործածվելը, որը հանդես է բերում իմաստային առանձնահատկությունների: Մ. Աբեղյանը գրում է. «Միացած մի ընդհանուր նշանակություն են ստանում հաճախ երկու բայի հարադրությունները: Այս դեպքում էլ կից բայերն առնրվում են իբրև մեկ բայ և գրության ժամանակ երկուսի միջև ստորակետ դնելն ավելորդ է»<sup>14</sup>:

Մ. Աբեղյանը զուտ բայական հարադրությունները համարում է հարադրական բարդության մի տեսակ՝ ներկայացնելով դրանք իրենց իմաստային առանձնահատկություններով: Մեծանուն հայագետի նշած ուղիով են գնացել հետագա լեզվաբանները:

Լեզվաբանական գրականության մեջ զգալի վեճերի տեղիք է տվել հարադրական բայերի բառային բնույթի հարցը, քանի որ նրանք շիման եզրեր ունեն մի կողմից բառակապակցության, մյուս կողմից՝ դարձվածաբանության հետ: Հարադրական բայերը երբեմն ներկայացվում են որպես բառակապակցություններ<sup>15</sup>, և նրանց բաղադրիչները համարվում են ինքնուրույն, անկախ բառեր, իսկ ուրիշները գտնում են, որ հարադիրն ու բայը ներկայացնում են մեկ բառային ամբողջություն<sup>16</sup>:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 434:

<sup>13</sup> Տե՛ս Հ. Աճառյան, ԼՔ, հ. 4, Երևան 1961, էջ 437:

<sup>14</sup> Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 173:

<sup>15</sup> Н. Р. Галперин, Е. Б. Черкасская, Лексикология английского языка, М., 1959, стр. 154; А. И. Смирницкий, Лексикология английского языка, М., 1956, стр. 205—207; Л. С. Пейсиков, Вопросы синтаксиса персидского языка, М., 1959, стр. 288—290.

<sup>16</sup> Е. Ф. Ворно, М. А. Кащеева, Е. В. Малишевская, И. А. Потапова, Лексикология английского языка, Л., 1955, стр. 79—88; М. Д. Степанова, Словообразование современного немецкого языка, М., 1953, стр. 296.

Սակայն հայ լեզվաբանության մեջ հարադրական բայերի բառական բնույթի հարցը վեճերի ու տարակարծությունների տեղիք չի տվել:

Ինչպես տեսնում ենք, հայ քերականագիտության մեջ բարդությունը, որպես բառակազմական տիպ, ուսումնասիրել են շատ լեզվաբաններ: Սակայն նրանք իրենց աշխատություններում հիմնականում ուսումնասիրել են բարդ բառերի բառակազմական, ձևավորանական ու իմաստային առանձնահատկությունները, և մինչև այժմ չկա մի ամբողջական ուսումնասիրություն բարդ բառերի բաղադրիչների ներքին, իմաստային փոխհարաբերությունների քննության վերաբերյալ: Մասնակիորեն հարցին անդրադարձել են պրոֆ. Ա. Աբրահամյանը և պրոֆ. Ա. Մարդարյանը: Ընդ որում, նրանք հիմնականում քննել են բարդություններով արտահայտված բայերը և ուսումնասիրել են բայական բաղադրությունների բաղադրիչների ներքին կապերն ու հարաբերությունները:

Անշուշտ այս աշխատությունները լրիվ չեն ընդգրկում հայերենի բառապաշարում հանդես եկող բարդությունները: Ասվածից հետևում է, որ հայոց լեզվի բառապաշարի զգալի մասը կազմող բարդ բառերի բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունների քննությունը ամբողջական ուսումնասիրության նյութ չի դարձել և հայագիտության տակավին բավարար չափով չլուսաբանված հարցերից մեկն է:

Այստեղից էլ բխում է սույն աշխատության անհրաժեշտությունը, որի նպատակն է քննել բարդ բառերի բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում:

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից և երեք գլուխներից:

Առաջին գլխում քննվում են բարդ բառերին առնչվող մի քանի ընդհանուր հարցեր՝ բարդ բառերի դասակարգումը, դրանց կառուցվածքային վերլուծությունը և բարդ բառերի տրամաբանական կառուցվածքի բացահայտումը:

Այստեղ փորձ է արված տալ բարդ բառերի նոր դասակարգում, քանի որ եղածն իրեն չի բավարարում և շատ դեպքերում հակասությունների ու տարակարծությունների տեղիք է առաջացրել:

Ժամանակակից հայերենի փաստական նյութի քննության հիման վրա բարդությունների դասակարգումը կատարել ենք, ելնելով նրանց կառուցվածքային այն հատկանիշից՝ թե բարդու-

թյան բաղադրիչները ինչպես են հանդես դալիս՝ միասնաբար և հնչապես մեկ բառային ամբողջություն են ներկայացնում, թե՛ իրարից անջատվում են զգալի արտասանական դադարով, որը գրավոր խոսքում արտահայտվում է անջատ գրությամբ:

Հարցին մոտենալով այս տեսակետից, նշել ենք բարդությունների երկու տեսակ՝ համադրական և վերլուծական: Համադրական բարդությունների մեջ մտնում են իսկական բարդությունները<sup>17</sup> և կցականները, որոնց թվին են պատկանում նաև համադրական կազմությամբ կրկնավորները. իսկ վերլուծականների մեջ՝ հարադրական բարդություններն ու վերլուծական կազմությամբ կրկնավորները:

Հաջորդ երկու գլուխներում համապատասխանաբար քննվում են համադաս բաղադրիչներով բարդ բառերը և ստորադաս բաղադրիչներ ունեցող բարդությունները:

Տրվում է բարդ բառերի բաղադրիչների իմաստային-գործառական վերլուծություն, իսկ հարկ եղած դեպքում նաև բարդ բառերի ու դրանց բաղադրիչների փոխաբերական կիրառությունները:

Ուսումնասիրության մեջ մեծ տեղ է գրավում երկարմատ բարդությունների քննությունը, քանի որ դրանք գերակշռող են ժամանակակից հայերենում: Չի անտեսված նաև եռարմատ, քառարմատ բաղադրիչներով բարդ բառերի հոդավորիչների իմաստային փոխհարաբերությունների քննությունը:

Աշխատության մեջ կատարված է քննվող նյութի համաժամանակյա ուսումնասիրություն: Նախ բարդ բառերը վերլուծված են ըստ անմիջական բաղադրիչների, ապա տրված են դրանց իմաստային ընդգրկումներն ու փոխհարաբերությունները: Հնարավորության սահմաններում աշխատել ենք բարդությունները և դրանց բաղադրիչները ներկայացնել ըստ իմաստային դաշտերի և տալ նրանց շարահյուսական ու ձևաբանական վերլուծությունը: Ասում ենք հնարավորության սահմաններում, քանի որ բարդ բառերը բացելիս չկա մի օբյեկտիվ չափանիշ և նման դեպքերում հաճախ դիմում ենք ինտուիցիային, բացի այդ, միշտ չէ, որ հնարավոր է լինում տալ բարդ բառին համապատասխան շարահյուսական փոխակերպը: Վերջինս տրվում է բարդ բառերի բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունների ուսումնասիրությունն ավելի ամբողջական ու հիմնավոր դարձնելու համար:

<sup>17</sup> Տերմինը վերցրել ենք ավելի հարմարը շունենալու պատճառով:

Բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները բացահայտելիս կատարել ենք այսպիսի խմբավորումներ՝

1. Շարահյուսորեն համազոր բաղադրիչներով բարդություններ:

2 Ստորադաս բաղադրիչներով բարդ բառեր: Վերջին խմբի մեջ մտնում են.

ա) նախադասության գոյականական անդամին լրացնող ստորադաս բաղադրիչներով բարդ բառերը: Սրանց գերադաս բաղադրիչը հիմնականում գոյական է և արտահայտում է առարկա, որպես այդպիսին դիտված հասկացություն, իսկ ստորադասվող բաղադրիչներն արտահայտում են հատկանշային հարաբերություններ:

բ) նախադասության բայական անդամին լրացնող ստորադաս բաղադրիչներով բարդ բառերը, որոնցում ստորադասվող բաղադրիչներն արտահայտում են գերադաս բաղադրիչի ցույց տված գործողության հետ կապված առարկաներ (խնդիր-խնդրառու հարաբերություն) և հանգամանքներ (պարագայական հարաբերություններ):

Աշխատությունը շարադրելիս խուսափել ենք առանց փաստական նյութով հիմնավորելու վերացական ենթադրություններ անելուց: Անհրաժեշտ փաստերը վերցրել ենք մեր գրողների ստեղծագործություններից, Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ից, ինչպես նաև ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի առաջին և երկրորդ հատորներից:

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ  
ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ լեզվաբանական գրականության մեջ բարդ բառերը սահմանվում են որպես մեկից ավելի հիմնական ձևույթներից կազմված բառեր: Այդ սահմանումը էական փոփոխություն չի կրել սկսած Դ. Թրակացու մեկնիչներից մինչև մեր օրերը:

Հայերենի բառապաշարի մեջ զգալի տեղ են գրավում սովորական շարահյուսական կազմություններից առաջացած բարդությունները. ինչպես՝ վրեժ առնող—վրիժառու, այս օր—այսօր, հոր եղբայր—հորեղբայր, ֆաջ և աբի—ֆաջաբի և այլն: Սակայն դրանց կողքին քիչ չեն այն բարդ բառերը, որոնք առաջացել են

արդեն եղած կաղապարների նմանակութեամբ: Այսպես, օրինակ՝ մարդաշատ բարդութեան կաղապարով կարող են կազմվել այլ բարդ բառեր, ինչպես՝ կանաչաշատ, փառաշատ, մրգաշատ և այլն: Համաքանութեամբ բարդ բառեր կազմվում են նաև մեր օրերում. ինչպես՝ հեռուստադիտող, երկրաշուրջ, հեռուստակենտրոն և այլն:

Բարդութեան կազմի մեջ մտնող արմատները (հիմնական ձև-վույթները) իրենց ինքնուրույնութեան տեսակետից բազմազան են: Դրանց մի մասը կարող է արտահայտել կոնկրետ ավարտված իմաստ և ունենալ ինքնուրույն գործածություն: Այսպիսիք են սու-զանավ, բարձրագագաթ, տերևախիտ, փառաբեկոր և այլ բարդու-թյուններում նալ, բարձր, տերև, խիտ, փառ, բեկոր բաղադրիչնե-րը: Իսկ արմատների մի մասը միայն ընդհանուր նյութական ի-մաստ է արտահայտում, ինքնուրույն բառային գործածություն չունի և միշտ հանդես է գալիս ուրիշ ձևույթների հետ միասին: Դրանք, փաստորեն, չունեն բառական ինքնուրույնություն և հան-դես են գալիս միայն բաղադրություններում. ինչպես՝ գրավաճառ, ձեռնամուխ, մանրագնիկ, հոգեզմայլ, վարձանատույց, իրաւա-մեծ, ուժասպառ, կարկաչանոս, հոգնատանջ, ինքնաբուխ, տերե-վաթափ և այլ բարդ բառերի վաճառ, մուխ, գնիկ, հատույց, մեծ, սպառ, հոս, տանջ, բուխ, թափ բաղադրիչները:

Վերևում նշված ինքնուրույն, անկախ բառային գործածու-թյուն ունեցող հիմնական ձևույթները արմատական բառեր են, իսկ վերջինները սոսկ արմատներ են:

Բառի աճման դեպքում արմատական բառը կարող է հնչյու-նափոխվել (ջրմուղ, շնագայլ, գրագետ): Ի դեպ, պետք է նշել, որ նույն արմատական բառը տարբեր բարդություններում կարող է հանդես գալ ինչպես հնչյունափոխված, այնպես էլ չհնչյունափոխ-ված ձևերով: Ինչպես, օրինակ՝ ջրմուղ, մսաջուր, շնագայլ, ջրա-շուն, սրտաբեկ, առյուծասիրտ, հնգամյա, տասնհինգ և այլն:

Այսպիսի դեպքերում գործ ունենք արմատների և նրանց հնչ-յունափոխված ձևերի՝ արմատների տարբերակների հետ: Արմա-տի տարբերակը բարդ բառերի մեջ կարող է հանդես գալ բա-ռակազմում, բառամիջում, բայց ոչ բառավերջում, քանի որ հա-յերենում շեշտն ընկնում է վերջին վանկի ձայնավորի վրա, իսկ շեշտակիր ձայնավորները հնչյունափոխության չեն ենթարկվում: Ինքնին հասկանալի է, որ արմատի տարբերակը անկախ բառային գործածու-թյուն չունի:

Բայց երբ բարդության առաջին եզրի վերջին վանկի ձայնավորներն են ա, ո, ք (գրաբարյան ք) հնչյունները, ապա բառի ածման դեպքում նրանք մեծ մասամբ չեն փոխվում. ինչպես՝ բաժակաճառ, դրամագլուխ, բոսորագույն, մոլորաֆայլ, ցողաթաթախ, մեծապատիվ, հեռատես և այլն:

Այս երևույթը բացատրվում է նրանով, որ արդի հայերենում ա, ո, ք (գրաբարյան ք) ձայնավորները մեծ մասամբ չեն հնչյունափոխվում: Հետևաբար, վերջին վանկում նշված ձայնավորներն ունեցող արմատները հանդես են գալիս շհնչյունափոխված ձևով և չունեն տարբերակներ:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է բարդ բառերն ըստ բաղադրության եղանակի բաժանել երկու տեսակի՝ իսկական և անիսկական: Անիսկական բարդությունների մեջ մտնում են կցական, հարադրական և կրկնավոր բարդությունները: Հարադրականի մի առանձին տեսակն են ներկայացնում բաղճյուսական հարադրությունները:

Իսկական բարդություններին բնորոշ են համարվում հետևյալ հատկանիշները.

1. Իսկական բարդության բաղադրիչները միշտ լինում են միացած, օրինակ՝ հրացան, թղթաղբամ, բաժակաճառ, ֆաբրեկո, պայծառաղեմ և այլն: Սակայն կառուցվածքային այս հատկանիշն ունեն նաև կցական բարդությունները. ինչպես՝ աբղուզադ, տասնվեց, կեսօր, մեկտեղ, ծայրեծայր, հորեղբայր և այլն:

Անիսկական բարդության մյուս տեսակների (հարադրականների ու կրկնավորների) բաղադրիչները հանդես են գալիս անշատ, իրարից բաժանվում են զգալի արտասանական դադարով, պահպանելով իրենց ձևական անկախությունը, որը գրավոր խոսքում արտահայտվում է մի դեպքում բաղադրիչների անշատ գրվելով (դուրս դալ, սիրտ տալ, երես տալ), մյուս դեպքում՝ միացման գծիկով (մեծ-մեծ, սուր-սուր, առատ-առատ, գնալ-գնալ և այլն):

2. Իսկական բարդության ամենաբնորոշ առանձնահատկությունն է համարվում նոր իմաստ արտահայտելը. այսինքն՝ իսկական բարդությունն արտահայտում է մի այնպիսի նոր իմաստ, որը չունեն նրա բաղադրիչները առանձին գործածվելիս: Այլ կերպ ասած, բարդության արտահայտած իմաստը չի ստացվում նրա բաղադրիչների իմաստի մեխանիկական գումարից, այլ բարդ բառն ամբողջությամբ արտահայտում է իր բաղադրիչներից ավելի իմաստ. փայտահատ չի նշանակում փայտ և հատել, այլ՝ անձնավո-

րություն, որը փայտ է կտրում, մայրամուտ չի նշանակում մայր և մտնել, այլ՝ արևի մայր մտնելը: Նույն ձևով դիմախաղ նշանակում է դեմքի մկանների համապատասխան շարժումների միջոցով որոշակի զգացումներ և տրամադրություններ արտահայտելու արվեստ (ԺՀԼԲԲ): Դասընկեր՝ միևնույն դասարանում սովորող, դասարանային ընկեր, դասացուցակ՝ յուրաքանչյուր դասարանի օրվա կամ շաբաթվա դասերի կարգը ցույց տվող ցուցակ (ն. տ.):

Սակայն իսկական բարդությանը բնորոշ համարվող բաղադրիչների անկախ, ինքնուրույն իմաստի չպահպանվելը, նրանց իմաստից ավելի, նոր իմաստ արտահայտելը ի հայտ են դալիս նաև անիսկական բարդությունների գերակշռող մասում: Բերենք օրինակներ<sup>18</sup>. այբուբեն—հեծելազոր, առևտուր—գնելու և վաճառելու տնտեսական գործողություն: Այբուբեն—որևէ լեզվի բոլոր տառերի ամբողջությունը՝ սահմանված կարգով դասավորված: Անցուդարձ—1. երթևեկություն, մի տեղով գնալ գալու: 2. Իրադարձություն, դեպք: Ասուլիս—1. զրույց, խոսակցություն: 2. Բանավեճ գրականագիտական հարցի շուրջը: Դասդասել—դասերի՝ խմբերի վերլուծել, դասավորել, խմբավորել: Եռուգեռ—1. աշխույժ շարժում, անցուդարձ: 2. Ոգևորություն, խանդավառություն: Կկու (կու+կու) նշանակում է թռչունի տեսակ, քել-քել (թելերի բաժանված, առանձին-առանձին), երեխա-երեխա—միամտաբար, թեթևամիտ: Արևմտահայերենում հոս նշանակում է այստեղ, իսկ հոս-հոս՝ թեթևամիտ: Թել, հոս, երեխա բառերի կրկնությամբ կազմված բարդություններում կատարվել է իմաստային անցում առարկայի գաղափարից հատկանիշի գաղափարին: Սովորաբար կրկնավորներին և նրանցից կազմված վցականներին հատուկ է նաև իմաստային տարբեր երանգավորումներ առաջացնելը (բառիմաստի սաստկացում՝ մեծ-մեծ, հոգնակիություն՝ մառդ-մառդ, գործողության բազմակիություն՝ թովռալ, վազվզել, բաշխում՝ մեկ-մեկ):

Ինչ վերաբերում է հարադրական բարդություններին, որոնց մեծ մասը (հարադրական բայերը) դարձվածաբանական միավորներ են, ապա ինքնին հասկանալի է, որ նրանք արտահայտում են բոլորովին նոր իմաստ, քան ունեն բաղադրիչներն առանձին-առանձին: Օրինակներ՝ սիրա տալ, աչքով աճել, գլուխ տալ, ձեռք առնել, ջուր ծեծել և այլն:

<sup>18</sup> Օրինակները վերցված են ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի 1—2 հատորներից:

Պետք է նշել, որ դարձվածաբանական արժեք չունեն մի շարք հարադրական բայեր, որոնց մեջ բաղադրիչները պահում են իրենց բառային իմաստները: Այդպիսի բայերի հարադիր մասն արտահայտում է տարածական հարաբերություն, ինչպես՝ դուրս գալ, մոտ գալ, ներս մտնել, վայր ընկնել, վեր ելնել, ներս ընկնել և այլն:

Այսպիսով, իսկական բարդությունն անիսկականից տարբերող իմաստային վերոհիշյալ առանձնահատկությունը հանդես է գալիս նաև անիսկական բարդությունների գերակշռող մասում:

Մյուս կողմից՝ կան իսկական բարդություններ, որոնք բոլորովին էլ իրենց բաղադրիչներից ավելի իմաստ չեն արտահայտում, ինչպես՝ ֆաղանմուտ, լայնաբնակ, խառնաշփոթ, երկարատև, վայելագեղ, մշտադալար, հեզահկուն, տխրադալուկ, բախժանուշ, լուսապայծառ, մշտաբուն, սրտանոթային, հեռաձայն, փաղցրանուշ և մի շարք այլ իսկական բարդություններում, որոնց իմաստները հավասար են բաղադրիչների արտահայտած իմաստին՝ առանց իմաստային հավելումի:

3. Իսկական բարդության մյուս առանձնահատկությունն է համարվում այն, որ նրա բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը մթազնած է և անմիջականորեն չի դրսևորվում: Սակայն բարդության բաղադրիչների շարահյուսական կապի մթազնումը ևս հանդես է գալիս ոչ միայն իսկական (ուրվանկար, գոյատևել, նկարագրել, գիտսփռողով, ծաղրանկար), այլև անիսկական բարդություններում՝ շուտ գալ, տեղի ունենալ, ծառս լինել և այլն): Դեռ ավելին, շատ ավելի հեշտ է որոշել գիտաժողով, ծաղրանկար, զվարթածայն, վարդաժպիտ, շիրմափառ և շատ ուրիշ իսկական բարդությունների շարահյուսական կապը՝ որոշիչորոշյալ, քան գործ ածել, պար գալ, վիզ առնել, փուն մտնել, ծունկ շոփել հարադրական բարդությունների շարահյուսական կապը, որովհետև նրանցում շարահյուսական հարաբերության զգացումը չափազանց մթազնած է:

4. Իսկական բարդության բաղադրիչները մեծ մասամբ միանում են ա հոդակապով<sup>19</sup> (սրտաբուխ, վշտաբեկ, հողագուրկ, հեզանկուն): Իսկական բարդության բաղադրիչները միացնող ա հոդակապը մասամբ հանդես է գալիս նաև անիսկականների մեջ:

<sup>19</sup> Մ. Արեղյան, Նշվ. աշխ., էջ 189:

ինչպես՝ մեծամեծ, նորանոր, մոտամոտ, ջերմաջերմ, շառաչառ և այլն<sup>20</sup>,

Ուրեմն բաղադրիչների հոդակապով միանալը ևս իսկական բարդության մենաշնորհը չէ։ Բացի այդ, իսկական բարդությունը կարող է չձևավորվել հոդակապով (ջրկիր, պատշառ, քառաշ, խուռնեքամ, գաղթօջախ, սղոցատամ, մշուուրախ, հեքաբձակ և այլն)։

5. իսկական բարդությանը բնորոշ է համարվում նաև հնչյունափոխությունը<sup>21</sup>, նրա առաջին բաղադրիչի վերջին վանկի ձայնավորը (ի, ու, է) մնալով անշեշտ, մեծ մասամբ փոխվում է, ինչպես՝ երկիր-երկրագունդ, հուր-հրակայուն, պարտեզ-պարտիզ-պան և այլն։

Սակայն հնչյունափոխված ձևեր ունենում են նաև կրկնավորները և նրանցով կազմված կցականները. օրինակ՝ մարդ-մուրդ, սուտ-մուտ, մանր-մունր, չափչփել, ծավծմել և այլն։

Ինչպես տեսանք, վերոհիշյալ հատկանիշները՝ բաղադրիչներից ավելի իմաստ արտահայտելը, բաղադրիչների միասնական լինելը, նրանց շարահյուսական կապի մթագնումը, հոդակապով ձևավորվելը, հնչյունափոխությունը, թեև բնորոշ են իսկական բարդություններին, բայց դրանք հանդես են գալիս նաև անիսկական բարդությունների մեծ մասում։

Նշանակում է բարդ բառերի դասակարգումը իսկականների և անիսկականների ոչ միշտ է իրեն արդարացնում։ Շատ հաճախ դասակարգվող միավորները հիմնական հատկանիշներով իրար չեն հակադրվում, մինչդեռ դրանք լինելով բարդության տարբեր տեսակներ, պետք է ունենան առնվազն մեկ տարբերակիչ հատկանիշ։

Բարդության մի տեսակը հանդես է բերում մյուսի հատկանիշները, և ստեղծվում են այնպիսի ընդհանրություններ, որ հաճախ դժվար է լինում որոշել, թե բարդության ո՞ր խմբին է պատկանում այս կամ այն բարդ բառը։ Դրա պատճառն այն է, որ բարդ բառերի դասակարգման սկզբունքը ճիշտ չէ։ Բարդության տեսակները որոշելիս ճիշտ չի ընտրված տարբերակիչ հատկանիշը։ Ավելի նպատակահարմար է բարդ բառերի դասակարգումը կատարել, ելնելով նրանց կառուցվածքային առանձնահատկու-

20 Ա. Մուրվալյան, նշվ. աշխ., էջ 152։

21 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 189։

թյուններից, այն բանից, թե բաղադրիչներն ինչպե՞ս են հանդես գալիս. միասին, որպես մեկ բառական ամբողջություն, թե՞ անջատ (պահպանում են իրենց ձևական անկախությունը, բառային շեշտը և միմյանցից անջատվում են արտասանական դադարով):

Ըստ այդմ՝ բարդ բառերը կարելի է բաժանել երկու ընդհանուր տեսակի՝ համադրական (առանձնասենյակ, քաջուշան, այսօր, տասնհինգ) և վերլուծական (ֆուն մտնել, երես տալ, առատառատ, արագ-արագ):

Համադրական բարդության բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար և ունեն բառային մեկ միասնական շեշտ: Իսկ վերլուծական բարդության բաղադրիչները հնչապես մեկ բառային ամբողջություն չեն ներկայացնում, իրարից բաժանվում են արտասանական դադարով և պահում են իրենց բառային շեշտը՝ գրային առումով ներկայացնելով առանձին միավորներ:

#### ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համադրական բարդությունների մեջ կարելի է խմբավորել իսկական բարդությունները և կցականները: Բարդության այս տեսակի բաղադրիչները, ի տարբերություն վերլուծականների, հանդես են գալիս միասնաբար: Ամբողջ բարդությունն ունի մեկ շեշտ, որը հայերենի ընդհանուր կանոնի համաձայն ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա (ամրակուռ, ջրաշուշան, սրբատաշ, կեսօր և այլն): Միայն առանձին դեպքերում կցականները, բացի հիմնական շեշտից ունենում են նաև թույլ շեշտ. ինչպես՝ անցուղարձ, առևտուր, կերուխում և այլն:

#### Իսկական բարդություններ

Իսկական բարդություններն աչքի են ընկնում բաղադրիչների միասնականությամբ, նրանք կորցնում են իրենց թե՛ ձևական և թե՛ իմաստային անկախությունը և հիմնականում անկախ բառային գործածություն չունեն:

Ինչպես բարդությունների մյուս տեսակները, այնպես էլ իսկական բարդությունները ծագում են բառերի շարահյուսական կապակցություններից: Կան նաև բարդություններ, որոնք այդպիսի ծագում չունեն, այլ կազմվել են եղած ձևերի նմանակությամբ: Օրինակ՝ հեռուստացույց, հեռուստադիտող, հեռուստակայան,

տիեզերանավ, տիեզերակայան և այլն: Իսկական բարդության բաղադրիչների շարահյուսական կապը կարող է լինել համադասական և ստորադասական: Այսպես՝ մեծուպայծառ, ճիսաբանչ, վայելչագեղ, ամրակուռ և այլ բարդությունների բաղադրիչները կապված են համադասական հարաբերությամբ, իսկ կավածեփ, սրտաբուխ, լիալուսին, լայնաթիկունք և այլ բարդություններում բաղադրիչների հարաբերությունը ստորադասական է:

Բարդության մեջ բաղադրիչները կարող են միանալ հոդակապով և առանց հոդակապի: Ժամանակակից հայերենում հոդակապի դեր է կատարում ա ձայնավորը, որի ծագման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Այդ տեսակետներից մեկի համաձայն ա հոդակապի ծագումը կապված է բարդության առաջին բաղադրիչի վերջում հանդես եկող ա ձայնավորի հետ (մեծատուն)<sup>22</sup>, Մյուս տեսակետի համաձայն ա հոդակապը համարվում է փոխառություն իրանական լեզուներից<sup>23</sup>, որի հնարավորությունը ժխտում է է. Գ. Թումանյանը, վկայակոչելով ա հոդակապի հանդես գալը այնպիսի հնագույն բուն հայերեն բառերում, ինչպիսիք են՝ \*միառասան-մետասան, \*միակիներ-մեկներ և այլն<sup>24</sup>,

Հոդակապը մեր լեզվում հանդես է գալիս ավանդաբար, սովորության ուժով: Դժվար է նշել մի օրենք, որը ցույց տար, թե ո՞ր դեպքում կարելի է օգտագործել հոդակապ և ո՞ր դեպքում՝ ոչ:

Հոդակապի առկայությունը ժխտող միայն մեկ օրենք կարելի է նշել՝ բարդության երկրորդ եզրը ձայնավորով սկսվելիս հոդակապ չի դրվում՝ մշտուրախ, ժպտեբես, գաղթօջախ, լուսեբես և այլն:

Ժամանակակից հայերենում շատ քիչ դեպքերում հանդես է գալիս ե հոդակապը. ինչպես՝ այցետոմս, հաշվեկշիռ, հաշվենկատ, ծաղկեփունջ, հաշվեմատյան: Հայերենում այն ունի երկու դրսևորում.

ա) Մի դեպքում ե հոդակապը ի+ա>ե հնչյունափոխության արդյունք է (այգի+ա+պան>այգեպան, դինի+ա+տուն>գինետուն, ոսկի+ա+պսակ>ոսկեպսակ և այլն):

<sup>22</sup> Մ. Արևելյան, նշվ. աշխ., էջ 190:

<sup>23</sup> A. Meillet, Esquisse d'une grammaire de comparée l'arménien classique, 2-me ed., Vienne, 1936.

<sup>24</sup> Э. Г. Туманян, Древнеармянский язык, М., 1971, стр. 160.

բ) Մյուս դեպքում այն համաբանության արդյունք է, որն առաջացել է վերոհիշյալ ձևերի նմանակությամբ (հաշվեկշիռ, հաշվեկատ, հաշվեմատյան, այցետուս, ծաղկեփունջ և այլն):

Իսկական բարդությունները կարող են կազմվել տարբեր խոսքի մասերից<sup>25</sup>:

1. Երկու գոյականի բաղադրումից, որից սովորաբար ստանում ենք՝

ա) նոր գոյականներ՝ հատակագիծ, դիմագիծ, ձյունակույտ, լեռնաշղթա և այլն:

բ) Ածական անուններ՝ ձյունափայլ, արևկող, դարչնագույն, փափուկ, առյուծասիրտ և այլն:

2. Գոյականի և ածականի բաղադրումից կազմվում են բարդ բառեր, որոնք ցույց են տալիս առարկայի հատկանիշ (անձրևախառն, սրտաբաց, հոգեխռով, սաղարթախիտ):

3. Շատ տարածված են գոյականի և բայարմատի (բայահիմք) բաղադրությամբ կազմված բարդ բառերը՝ նման բարդություններից ստացվում են նոր ածականներ ու գոյականներ (մարդասեր, ակնաթուղ, ոսկեզօծ, մսակեր, երկաթակետ, մանկավարժ և այլն):

4. Գոյականի և բայի բաղադրությամբ կազմվում են նոր բայեր (սահմանափակել, զանգահարել, նետահարել, քիթեղապատել, ձևափոխել, նկարագրողել):

5. Գոյականի և կապի սերտաճմամբ առաջացած կաղապարով<sup>26</sup> կազմվում են գոյականներ, ածականներ. ինչպես օրինակ՝ կոնատակ, ոտնատակ, բլրանման, գյուղամեջ, սրտամոտ, տողամեջ, տողատակ և այլն:

6. Ածականի և գոյականի միացումով կազմվում են.

ա) Գոյականներ՝ լիալուսին, հարթավայր, վերնաշուն, կիսագունդ, կարմրահոդ և այլն:

բ) Ածականներ՝ մեծամիտ, մեղմաձայն, խուռներամ, թուլակամ, բազմալեզու, բարեգութ և այլն:

7. Ածականների բաղադրությամբ կազմվում են ածականներ. ինչպես՝ ֆաջանմուտ, հիաստանչ, վայելչագեղ, ամրակուռ են:

8. Որպես ածականներ են հանդես գալիս նաև այն բարդ բա-

25 Հմմտ. Մ. Արևիյան, նշվ. աշխ., էջ 202—204:

26 Ընդունել վերապահումով, որովհետև կաղապարի մեջ միացնող ձայնավորը չի քնդգրկված:

ռերը, որոնց առաջին բաղադրիչը ածական է, երկրորդը՝ բայարմատ: Այդպիսիք են՝ նորընտիր, մեծախոս, դուրանավատ, նորբանկա, ստախոս, գեղազարդ, նորավարտ, պերճախոս և այլ բարդութիւններ:

9. Բարդութեան առաջին եզրում ածական, իսկ երկրորդ եզրում բայական բաղադրիչ ունեցող բարդ բառերը հանդես են դալիս որպէս բայեր՝ սրախոսել, բարեհաճել, չարաշահել, վատարանել, բարեխոսել, փառալերել և այլն:

10. Մեծ թվով բարդ բառեր են կազմվում նաև թվականի ու մյուս խոսքի մասերի միացումից:

ա) Թվական + գոյական կաղապարով կազմվում են առարկա և հատկանիշ ցույց տվող բառեր. ինչպես՝ երկանիվ, ճնջաթև, եռանկյուն, քառանկյուն, փառաճառու և այլն:

բ) Ավելի հազվագեպ են թվականի ու ածականի, ինչպես նաև թվականի ու բայարմատի բաղադրութեամբ կազմված ածականները: Այսպես, օրինակ՝ եռաբարդ, երկփողանի, միակողմանի, փառատուփ և այլն:

Նշված բարդ բառերը ավելի քիչ են, քանի որ քիչ են հանդիպում նաև այդ խոսքի մասերի շարահյուսական կապակցութիւնները, որոնց սերտաճումը կտար բարդ բառ: Պատճառն այն է, որ մեծ մասամբ կարիք չի լինում գործողութեան կամ հատկանիշի գաղափարը արտահայտել որոշակի թվով. գործողութեան չափը սովորաբար արտահայտվում է մակբայներով, իսկ առարկայի հատկանիշի առավելութիւնը կամ պակաս լինելը՝ ածականի համեմատութեան աստիճաններով:

11. Հայերենի բառապաշարում կան նաև դերանունների ու մյուս խոսքի մասերի միացութեամբ կազմված բարդ բառեր.

ա) գերանուն + գոյական բաղադրութեամբ կազմվում են ածականներ՝ ինքնահավան, այլաձև, այլադեմ և այլն: Գոյականներ՝ ինքնամոռացում, ինքնափնադատութիւն, ինքնամերկացում և այլն:

բ) Ածականներ և գոյականներ են կազմվում դերանվան ու բայարմատի միացումից, ինչպես՝ ինքնաբո, Խամուլ, ինքնահոս, Խասեր, այլասեր, ինքնահավան, իրարամերժ, ինքնամոռաց և այլն:

գ) Դերանուն + ածական բառակազմական կաղապարով կազմվում են նոր ածականներ՝ ինքնավստահ, Խամուլ, յուրահատուկ և այլն:

12. Ժամանակակից հայերենում կենսունակ են բայարմատի և գոյականի միացմամբ կազմված բարդ բառերը, որոնք մեծ մասամբ հանդես են գալիս որպես գոյականներ՝ գրատախտակ, դրդասլատհառ, աշխատասենյակ, մարզադաշտ, հանգստավայր, գծապատկեր և այլն:

13. Որպես բարդ բառի բաղադրիչ կարող են հանդես գալ նաև մակբայներն ու կապերը, որոնք, միանալով գոյականի հետ, կազմում են նոր գոյականներ, ինչպես՝ հեռուստատեսություն, հեռազգայություն, կանխորոշություն, կանխագուշակություն, նախասենյակ, հետգրություն և այլն:

Մակբայները կարող են բայի հետ կազմել նոր բայեր. ինչպես, օրինակ՝ առաջարկել, ետադիմել, նախագծել, հետաձգել, հեղախոսել և այլն. իսկ բայարմատի հետ կազմում են ածականներ՝ առաջադեմ, ետամնաց, առաջընթաց, միջանկյալ և այլն:

#### Կցական բարդություններ

Այս բարդության մեջ բաղադրիչները նույնպես միասնաբար են հանդես գալիս, բայց նրանց ձևական և իմաստային անկախությունը նախորդների համեմատությամբ ավելի զգալի է, քանի որ կցական բարդության բաղադրիչները մեծ մասամբ կարող են ունենալ անկախ բառային գործածություն. Օրինակներ՝ հորեղբայր, եռուզեռ, այսօր, այդպես, ծայրեծայր և այլն:

Շատ կցականներ առաջացել են կրկնավոր և բաղճյուսական հարադրական բարդություններից. ինչպես՝ ծայրեծայր, մեծամեծ, առևտուր, կերուխում, եռուզեռ և այլն:

Կցականներ նույնպես կարող են կազմվել տարբեր խոսքի մասերի թե՛ համադասական և թե՛ ստորադասական շարահյուսական կապակցություններից. այդպիսիք են՝ եռուզեռ, կերուխում, տասնհինգ, առևտուր, հորեղբայր, այստեղ, կեսօր և շատ ուրիշ բարդություններ: Շատ կցական բարդություններ առաջացել են որոշիչ-որոշյալի շարահյուսական կապակցությունից (այսօր, կեսօր, մեջտեղ, այսինչ, այնտեղ և այլն): Իսկ մի շարք կցականներ առաջացել են հատկացուցիչ-հատկացյալի կապակցություններից, ինչպես՝ հորեղբայր, տանտեր, տանտիկին, ֆեռուդի և այլն:

Ծնթակա-ստորոգյալ կապակցությունը հանդես է գալիս էջմիածին, որևէ, ինչևէ և այլ բառերում: Կան հնացած քերականա-

կան ձևերով կազմված կցականներ՝ վերջիվերջո, օրստօրե, օրեց-օր, որդոցորդի, այսուհետև և այլն:

Թվականներից կազմված կցական բարդություն բաղադրիչները միմյանց հետ կապված են համադասությունամբ՝ տասնհինգ, տասնվեց, երեսունմեկ և այլն:

Տարածված են բայարմատ+բայ (ծգծգել, գգգգել, վազվզել և այլն), դոյական+դոյական (այրուծի, կերուխում, աչքունք և այլն), ածական+դոյական (կեսօր, ծայրանդամ, վատագույն և այլն), թվական+թվական (տասնհինգ, տասնվեց, քսանմեկ) կաղապարներով կազմված կցական բարդությունները: Հինդ որում, բայարմատ+բայ կաղապարով կազմված կցական բարդությունները հիմնականում բայական կրկնավորներն են, որոնցով հարուստ է հայոց լեզուն (վերլուծական կազմությամբ բայակրկնավորները կթննվեն վերլուծական բարդ բառերի բաժնում):

Ավելի սակավադեպ են դերանուն +դերանուն, ձայնարկություն+ձայնարկություն կաղապարներով կցական բարդությունները. ինչպես՝ օրինակ՝ այսինչ, այնինչ, ախուվախ, վայվայ, հոպոպ, կուկու և այլն:

Կցականներ են կազմվում նաև ածական+ածական (սուսուփուս, ծոտուփուտ, սուտուփուտ, նոռունոռ, բարձրաբարձ), մակբայ+մակբայ (վերովաւր, դեսուդեն, դեմուդեմ) կաղապարներով: Ժամանակակից հայերենի համար հնացած են դերանվանական ու բայական բաղադրիչներ ունեցող կցականները, ինչպես՝ ովկէ, ինչկէ, որկէ, որոնք միանում են շաղկապով. հնացած են նաև զուտ բայական բաղադրիչներով և շաղկապով կազմված կցականները՝ ելկէջ, երթեկէկ, առետուր և այլն:

Մի շարք կցականների բարդ լինելը շատ հաճախ չի գիտակցվում, քանի որ նման բարդությունների բաղադրիչների առանձին լինելու գաղափարը մթազնված է, տեղի է ունեցել պարզեցում: Այդպիսի բառեր են՝ կսկիծ, քաւքաւ, հագագ, խոպոպ, հայթայթել, փայփայել, հեկեկալ և այլն:

#### ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Ինչպես արդեն ասվել է, վերլուծական կազմությամբ բարդությունները այն բարդ բառերն են, որոնց բաղադրիչները չնայած հնչապես մեկ բառային ամբողջություն չեն կազմում, պահում են իրենց բառային շեշտերը (հիմնական և թույլ), գրային

առումով ներկայացնում են առանձին միավորներ, բայց ունեն մեկ բառի նշանակություն:

Այդպիսիք են հարադրական բարդությունները և կրկնավորները:

#### Հարադրական բարդություններ

Վերլուծական բարդ բառերը կազմված են մեկից ավելի բաղադրիչներից և ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները: Ծագելով բառերի սովորական շարահյուսական կապակցություններից և ձևով բերելով նոր բառային նշանակություն՝ հարադրական բարդությունները հանդես են բերում բազմաթիվ ու բազմատեսակ հարաբերություններ և իմաստային կապեր: Վերլուծական բարդության բաղադրիչների միջև դրսևորվող կապերն ու հարաբերությունները պայմանավորում են ամբողջ բարդության իմաստը:

Հարադրական բարդության բաղադրիչները պահում են իրենց ձևական անկախությունը, բայց արտահայտում են մեկ իմաստ: Այսպես, օրինակ՝ քառե տալ (բարեկ), լյար գալ (պարել), զնացող-եկող (այցելու, հյուր), բաց անել (բացել) և այլն:

Այս բարդությունների բաղադրիչները կարող են լինել համադաս և ստորադաս:

Հարադրական բարդությունների բաղադրիչները իրար հետ կապակցվում են հետևյալ եղանակներով:

ա) Որևէ շաղկապով կամ նախդիրով. օրինակ՝ ճայր ու ուղի, ժամանակ ևս ժամանակ, մերթ ընդ մերթ, օր ու գիշեր, կետ առ կետ և այլն:

բ) Առանց կապակցական հատուկ միջոցի: Այս դեպքում հարադրական բարդության բաղադրիչները կապող միջոցը նրանց իմաստային մերձավորությունն է, քանի որ նրանք իրարից անջատվում են փոքրիկ արտասանական դադարով, որը ըրավոր խոսքում արտահայտվում է անջատ դրույթամբ կամ դժիկով. ինչպես, օրինակ՝ ձեռք տալ, արժանի լինել, գուգվել-գարդարվել, թողնել-հեռանալ, գիշեր-ցերեկ, յոթ-ութ և այլն:

Ծանոթություն—Հարադրական բարդության այս տեսակը, որի բաղադրիչները համադաս են և իրար միանում են շաղկապով, բաղադրիչների իմաստային կապով, հայ լեզվաբանության մեջ ընդունված է անվանել բաղահյուսական հարադրություններ:

Քաղհյուսական հարադրության բաղադրիչները հաճախ համանիշ բառեր են կամ էլ իմաստով իրար մոտ են լինում՝ հավ ու հիվ, աճ ու դռդ, թողնել-հեռանալ և այլն:

Հստ բաղադրիչների բնույթի հարադրությունները լինում են անվանական և բայական:

#### Անվանական հարադրություններ

ա) Գոյականով կազմված հարադրություններ. այս հարադրությունների բաղադրիչները սովորաբար մոտ նշանակություն ունեցող գոյականներ են, որոնք միանալով շաղկապով կամ գծիկով, արտահայտում են մեկ բառի նշանակություն: Այսպես, օրինակ՝ տուն ու տեղ, աճ ու դռդ, կեր ու խում, վար ու ցանք, օր ու գիշեր, ձյուն-ձմեռ, բույս առ բույս, տուն առ տուն և այլն:

բ) Ածականով կազմված հարադրությունների բաղադրիչները միանալով շաղկապներով, բաղադրիչների իմաստային մերձավորությամբ (որը գրավոր խոսքում արտահայտվում է միացման գծիկով) հանդես են գալիս որպես մեկ բառ (լռիկ-մնջիկ, կար-միր-կանաչ, թաց ու շոք, լուռ ու մունջ, ծանր ու թեթև, լավ ու վատ, կարգին-սարգին):

գ) Անվանական հարադրություններ են կազմվում նաև թվականով, ինչպես՝ չորս-հինգ, վեց-յոթ, տասը-քսան, երկու-երեք, քսան-երեսուն և այլն:

ծ) Կան շաղկապներով և եղանակավորող բառերով կազմված հարադրական բարդություններ, ինչպես՝ կամ թե, միայն թե, քան թե, ապա թե ոչ, կարծես թե, ասես թե, մանավանդ որ, քանի որ, թեկուզև և այլն:

#### Բայական հարադրություններ

Բայական հարադրությունների մեջ են մտնում հարադրական բայերը և բայական զուգադրությունները՝ զուգադրական բայերը: Հարադրական բայերը սովորաբար կազմվում են բայից ու հարադիր բաղադրիչից. ինչպես՝ սիրտ տալ, քաց անել, գլուխ քերել, ձեռք առնել և այլն:

Հնարավոր է, որ բարդության երկու բաղադրիչներն էլ բայական լինեն. ինչպես՝ գուգվել-գարդարվել, թողնել-հեռանալ, ավելի-քափել և այլն: Այսպիսի բարդությունները հայ լեզվաբանության մեջ հայտնի են զուգադրական բայեր անվանումով:

Հարադրական բայերը հանդես են բերում ամենաբազմազան առանձնահատկություններ. մի դեպքում հարադիրն է որոշում բայիմաստը միտք անել, լաց լինել, ականջ դնել և այլն, մյուս դեպքում բայն է պահում իր նշանակությունը (դուրս դալ, ներս մտնել, վեր ելնել և այլն), երրորդ դեպքում երկու բաղադրիչներն էլ զրկվում են իրենց բուն իմաստից և միասին հանդես են դալիս բոլորովին նոր նշանակությամբ (սիրտ տալ, սիրտ անել, թև առնել, գլխի ընկնել և այլն)։

Բայական հարադրությունների մեջ, ըստ բաղադրիչների բնույթի, կարելի է տարբերել հետևյալ խմբերը.

ա) Վերացական նշանակություն ունեցող բայով (անել, լինել, դառնալ և այլն) և դոյական հարադիրով կազմված հարադրական բայեր, որտեղ զոյականը բնորոշում է բայի ինչ անելը, ինչ լինելը։ Այդպիսի հարադրություններ են՝ միտք անել, լաց լինել, դարդ անել, գիր անել և այլն։

Գոյականը բայի հետ մտնում է բազմատեսակ կապակցությունների մեջ, առաջ գալով հիմնականում բայի ու զոյականի շարահյուսական կապակցություններից, որոնք ժամանակի ընթացքում բաղադրիչների մերձեցմամբ ըմբռնվել են իբրև հարադրական բայեր։ Գոյականը հարադրության մեջ կարող է հանդես գալ տարբեր հոլովներով ու տարբեր շարահյուսական կապերով (ականջ անել, աշխարհ գալ, գործ անել, աչքի ընկնել, խելքից հանել, աչքից ընկնել, ամոթով անել, աչքով անել և այլն)։

բ) Բավական մեծ թիվ են կազմում ածական հարադիրով բայերը, որոնք հանդիսանում են ածական+բայ շարահյուսական կապակցության իմաստային հետագա մերձեցման արդյունքը։ Այսպես, օրինակ՝ արժանի լինել, անտես անել, անպատիվ անել, ազատ լինել, ֆաղցր աճել, գաճընկեց անել և այլն։

գ) Հարադրական բայերի մեջ պետք է առանձնացնել նաև դերանվանական հարադիր ունեցողները։ Սրանք էլ առաջացել են հայերենում գործող բառակազմական օրենքներով՝ դերանվան և բայի շարահյուսական կապակցություններից։ Հարադրական բայերի կազմությանը մասնակցում են հատկապես անձնական ու փոխադարձ դերանունները։

Դերանուններով կազմված հարադրություններ են՝ իրար անցնել, իրար քերել, իրարով անցնել, իրենով անել, իրար գալ և այլն։

դ) Թվականը շատ քիչ է հանդես գալիս որպես հարադիր։ Թվական հարադիրով են կազմված հետևյալ հարադրական բայերը՝ մեկ անել, մեկ լինել, հազար ասել, չորս անել և այլն։

ե) Մեծ թիվ են կազմում մակբայական և կապական հարադիր ունեցող հարադրական բայերը, որոնց մեջ հարադիր մասը ցույց է տալիս գործողության կամ եղելության տեղը և ունենում է մեծ մասամբ տարածական նշանակություն։ Այդպիսիք են՝ դուրս գալ, ներս մտնել, մեջ ընկնել, առաջ գնալ, ետ կանչել և այլ հարադրական բայերը։

Տեղ, առաջ բառերը բարդության մեջ հանդես են գալիս ինչպես որոշիչ հոդով, այնպես էլ առանց հոդի<sup>27</sup> (տեղ ապ, տեղը գցել, առաջն առնել, առաջ ընկնել)։ Իսկ տակ բառը հանդես է գալիս միայն հոդով և ունի գոյականի նշանակություն՝ արտահայտելով տարածական հարաբերություն (տակը տալ, տակն առնել, տակը փռել)։

Այլ դեպքերում հոդը փոխում է հարադրության իմաստը կամ էլ քայքայում է այն<sup>28</sup>։

Օրինակներ՝ Գարեգին, այն ծրագիրը, որ գու ևս կազմվել, դու էլ պետք է գլուխ բերես (ՄԽ)։ Ես գիտեմ՝ ինչ է բերել քո գլուխը եղբայրդ (ՀԹ)։ Եվ, ով գիտի աշխարհի բանը, մեկ էլ տեսար եկան և բանը գլուխ եկավ (ԱԲ)։ Ասի՝ ... քո տունը քանդվի, էսենց բան եկավ գլուխս (ՀԹ)։ Խոսում էր անկապ, ինչ որ գալիս էր գլխումը (ՄԽ)։

Նշված օրինակներում հոդը փոխել է հարադրության իմաստը, գլուխ բերել նշանակում է՝ որևէ գործ հաջողությամբ ավարտել՝ վերջացնել, իսկ գլուխը բերել՝ փորձանքի ենթարկել։

Գլուխ գալ առաջին օրինակում նշանակում է հաջողվել, հեշտությամբ ավարտվել, երկրորդ օրինակում գլուխ գալ նշանակում է՝ հիշել մտաբերել (ԺՀԼԲԲ)։

Որոշ դեպքերում էլ հոդը քայքայում է բարդությունը. այս երևույթն ակնառու դարձնելու նպատակով բերենք բարդության հարադիր մասի առանց հոդի և հոդով գործածության օրինակներ։

— Դու տար, կասես որ ես չեմ կարողանում դրանք կարգին խնամել, մեկ է ժամանակ չունեմ դրանց հետ գլուխ դնելու (ՄԽ)։ Արուսը գլուխը դրել էր նրա ուսին ու հեկեկում էր (ն. տ.)։

27 Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 172։

28 Նույն տեղում։

Գոհ է սուլթանը, որ գլուխ հանեց էսքան հեշտությամբ էս դործը դժար (շթ)։ Աշխենը գլուխը դուրս էր հանել լուսամուտից (նԴ)։ Գլուխը դնել, գլուխը հանել զույգերը համապատասխան օրինակներում հանդես են գալիս որպես սովորական բառակապակցություններ, որովհետև ամեն մի բաղադրիչ հանդես է գալիս որպես քերականորեն ձևավորված առանձին բառ, որ կարող է ազատ կերպով տեղափոխվել և բառակապակցության յուրաքանչյուր բաղադրիչ նախադասության առանձին անդամ է հանդիսանում։

զ) Հայտնի է ձայնարկությունների և նրանց հարող բնաձայնությունների մասնակցությունը հարադրական բարդությունների կազմությանը (ախ ֆաշել, վալ տալ, ախ ու վախ անել, օֆ անել, աբգ անել, փիշտ անել, հաֆ անել և այլն)։ Հարադրական բայերում ձայնարկությունները, հանդես գալով որպես հարադիր մաս, իրենց հատուկ զգացական, զգացմունքային նշանակություններն են հաղորդում հարադրվող բային, որը դժվար չէ նկատել հետևյալ օրինակներում՝ ախ ֆաշել, օֆ անել, վալ տալ և այլն։

Բերենք բնագրային օրինակներ.

էն որ հառաչում ու ախ եմ քաշում,  
էն ո՞ւմ եմ կանչում (շթ)։

Խեղճ Մանուշը վալ է տալիս  
վալ է տալիս, լալիս, լալիս (շթ)։

Անկողնում տապակ-տապակ էր գալիս, օֆ անում, մի կողմից մյուսը դառնում (ԱԲ)։

Բնաձայնությունները հարադրական բային հաղորդում են բնաձայնական նշանակություն։ Սրանք հիմնականում կազմվում են անել, տալ բայերով (հաֆ անել, ֆրոթ անել, դըխկ անել, ֆիս տալ, միառու անել) և գործածական են խոսակցական լեզվում։

Ինչպես տեսնում ենք, հարադրական բայերի կազմության մեջ ավելի արդյունավետ են այն խոսքի սասերը, որոնք սովորաբար ավելի ճկուն հարաբերությունների մեջ են մտնում բայ խոսքի մասի հետ. այն է՝ դոյականը, ածականը, թվականը, մակբայը։ Ավելի քիչ հանդես են գալիս դերանունները, ձայնարկություններն ու բնաձայնությունները։

Դերանունը սովորական պայմաններում շատ բազմազան հարաբերությունների մեջ է մտնում բայի հետ, բայց հարադիր բայ

կազմելիս նրա դերը նվազում է, քանի որ ամենից շատ որպես հարադիր հանդես են դալիս առարկայի, հատկանիշի տարբերակված իմաստ արտահայտող խոսքի մասերը, իսկ դերանունը, ինչպես հայտնի է, արտահայտում է առարկայի կամ հատկանիշի ընդհանուր, շտաբերակված իմաստ:

Հայերենի բառապաշարի զգալի մասը կազմող հարադրական բայերը դուրս չեն մնացել հայ լեզվաբանների տեսադաշտից և բազմիցս ուսումնասիրվել են նրանց կողմից<sup>29</sup>:

Բառահարադրությունը մեր լեզվի բառային կազմը հարըստացնելու կարևոր միջոցներից մեկն է, որը պայմանավորվելով հայերենում գործող օրենքներով, հարստացնում է լեզվի բառապաշարը՝ տալով նրան թարմություն, կենդանություն, շունչ:

Հարադիր բաղադրիչը, բայական բաղադրիչի հետ մտնելով ավելի սերտ կապերի մեջ, քան սովորական շարահյուսական կիրառություններում, հանդես է գալիս որպես մեկ բառային միավոր, որը ցուցաբերում է բային հատուկ էական հատկանիշներ, որոշ տարբերություններով միայն, որոնք պայմանավորվում են հարադրական բայերի ձևաբանական կառուցվածքով և իմաստաբանական յուրահատկություններով:

է) Հայերենի հարադրական բայերի մեջ առանձին խումբ են կազմում զուտ բայական բաղադրիչներից կազմված բարդությունները՝ զուգադրական բայերը. ինչպիսիք են՝ թողնել-ճեռաճալ, պաճել-մեծացնել, ավել-մաքել, ծել-ծաղկել, զուգվել-զարդարվել, մեռնել-պրծնել և այլն:

Հարադրական բայերը ձևական (հնչյունական) և իմաստային այնպիսի սերտ կապերի մեջ չեն, ինչպես համադրական բայերը, բայց այդ հիմք չի տալիս մտածելու, թե անշատ դրվող բաղադրիչներից կազմված ձևերը բառային ինքնուրույն միավոր չեն կարող լինել: Իրականում, նրանք ինքնուրույն բառային միավորներ են, ունեն իրենց հատուկ ձևը և իմաստը, իհարկե, որոշ առանձնահատկություններով, որոնք նրանց ավելի ճկուն ու արտահայտիչ կիրառվելու հնարավորություններ են տալիս: Բայական հարադրության հարադիր մասի ու բայական մասի կապակցությունը բոլորովին էլ պատահական ու ձևական չէ: Նրանք իրար հետ կապվում են իմաստով՝ կազմելով բառային մեկ միություն և

29 Ա. Այթընյան, նշվ. աշխ.: Մ. Արեղյան, նշվ. աշխ.: Ա. Արեմեամյան, նշվ. աշխ.: Ա. Մաքաթրյան, նշվ. աշխ.:

միասին հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ:

Հարադրական բայերի բառական մեկ միավոր լինելու օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ նրանք ունեն մեկ բառային շեշտ: Ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, հարադրական բայերի միավանկ բաղադրիչներից շեշտվում է նախադաս բաղադրիչը (ցո՛ւյց տալ, քա՛փ տալ: Իսկ բազմավանկ բաղադրիչների դեպքում հարադրական բայն ունի երկու շեշտ. մեկը՝ թույլ, որն ընկնում է բայական բաղադրիչի վրա, մյուսը՝ ուժեղ (ընկնում է հարադրի բառի վերջին վանկի ձայնավորի վրա), ինչպես՝ ա-կա՛նջ դնե՛լ, գլո՛ւխ հանե՛լ<sup>30</sup>:

Որպես մեկ բառական միավոր, իրենց արտաքին (հնչյունական) և ներքին (իմաստային) առանձնահատկություններով հանդես են գալիս նաև անվանական բաղադրիչներ ունեցող հարադրական բարդությունները (թև ու քիկունք, լաց ու կոծ, լուտ ու մուկ և այլն): Այսպիսի բարդություններում բաղադրիչների առանձին-առանձին ունեցած իմաստները մթազնված են, և նրանք երկուսով նոր իմաստ են ձևաբ. բերում:

#### Կրկնավորներ

Վերլուծական կազմության մեջ բարդ բառերից են նաև կրկնավոր հարադրությունները: Այս բարդության բաղադրիչները սովորաբար նույն բառի կրկնությունն են: Կրկնավոր բարդության բաղադրիչները միանում են ու, և շաղկապներով, նախդիրներով, բաղադրիչների իմաստային մերձավորությամբ, որը գրավոր խոսքում արտահայտվում է գծիկով, կամ ուղղակի գրվում են կողք-կողքի, առանց որևէ կետադրական նշանի (տեսակ-տեսակ, փունջ-փունջ, ես ու ես, իսկ և իսկ, գունդ առ գունդ) և այլն:

Կրկնավորների հարցին անդրադարձել է Ա. Այտընյանը, նշելով տարբեր խոսքի մասերից կրկնավորներ կազմելու հնարավորությունը<sup>31</sup>:

Անվանի հայագետ Մ. Աբեղյանը կրկնավորները համարում է հարադրության մի առանձին տեսակ. «Հարադրության մի առանձին տեսակն է նույն բառի կրկնությունը, որով կազմվում են կրկնավոր բայերը»<sup>32</sup>:

30 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1930, էջ 20:

31 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 247:

32 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 180:

Կրկնավոր բարդություններն ունեն իրենց իմաստային առանձնահատկությունները: Նրանք կարող են արտահայտել գործողության տեղանկություն, բազմապատկություն (գնալ-գնալ, վազել-վազել), քանակի մեծացում, հոգնակիություն (փունջ-վունջ, ոսկոր-մոսկոր, մարդ-մարդ), բաշխում (ճիւղ-ճիւղ, խումբ-խումբ, մեկ-մեկ), իմաստի սաստկացում (շատ-շատ, սուր-սուր, մեծ-մեծ):

Բառակազմական այս միջոցը՝ բառակրկնությունը, կարևոր դեր է կատարում մեր լեզվի բառային կազմը հարստացնելու գործում:

Կրկնավոր բարդությունները հանդես են գալիս իբրև ածական, բայ, մակբայ, թվական և կարող են կազմվել տարբեր խոսքի մասերից՝ գոյականներից, ածականներից, դերանուններից և այլն:

Հետ բաղադրիչների բնույթի կրկնավորները լինում են.

1. Գոյականի կրկնությամբ կազմված բարդությունների Այսպիսի բաղադրություն ունեցող բարդ բառերը մեծ մասամբ լինում են ածականներ և մակբայներ: Այսպես, օրինակ՝ խումբ-խումբ, փունջ-փունջ, շարք-շարք, գույք-գույք և այլն: Գոյականի կրկնության ժամանակ երբեմն բաղադրիչները կապվում են առ նախդիրով ինչպես՝ գունդ առ գունդ, ժամանակ առ ժամանակ, տող առ տող և այլն:

2. Դերանունների կրկնությամբ կազմված բարդ բառեր: Այս դեպքում հաճախ հանդես է գալիս ու շաղկապը: Դերանունների կրկնությունն ավելի քիչ է հանդիպում (ֆեզ ու ֆեզ, ով ու ով, ինչ ու ինչ, մենք ու մենք և այլն):

3. Ածականի կրկնությամբ կազմվում են նոր ածականներ, որոնք արտահայտում են կրկնվող բառի իմաստի սաստկացում՝ ծանր-ծանր, խիտ-խիտ, կապույտ-կապույտ, բարձր-բարձր և այլն:

4. Մակբայի կրկնությամբ կազմված բարդություններ. բառիմաստի սաստկացում են արտահայտում նաև մակբայի կրկնությամբ կազմված բարդությունները՝ ուշ-ուշ, արագ-արագ, հեռու-հեռու, վեր-վեր և այլն:

5. Թվականների կրկնությամբ բարդ բառեր. շատ տարածված են թվականների կրկնությամբ բաղադրված բարդությունները, որոնք բազմակիության հետ միասին ստանում են նաև բաշխական նշանակություն. ինչպես՝ մեկ-մեկ, աասը-աասը,

ճագար-ճագար և այլն, Այս դեպքում ևս հանդես է գալիս առ նախ-դիրը՝ մեկ առ մեկ:

6. Կրկնավոր բայերը ցույց են տալիս գործողության ինտենսիվություն, տևականություն. ինչպես, օրինակ, ծախել-ծախծխել, ֆաշել-ֆաշֆշել, ճեռանալ-ճեռանալ, գնալ-գնալ և այլն, Ավելի տարածված են կրկնավոր հարադիր ունեցող բայերը, ինչպես՝ ավալ-թավալ լինել, վեր վեր թռչել, սլափափ սլափափ աճել և այլն:

7. Կրկնավոր բարդության բաղադրիչները կարող են լինել նաև անխսկական կապեր, որոնք մակբայի նշանակություն են ձևոք բերում և նախադասության մեջ արտահայտում են պարագայական հարաբերություններ. ինչպես՝ մեջ-մեջ, քով-քով, պես-պես, մոտ-մոտ, տակ-տակ, վրա-վրա և այլն, Նշված կապերը մեծ մասամբ ունեն գոյականական ծագում, նրանց մեջ զգալի է տարածական հարաբերության իմաստը: Փաստորեն, դրանք այնպիսի կապեր են, որոնց բառային իմաստը երկփեղկված է և կարող են գործածվել իբրև կապեր ու մակբայներ:

Վերացական իմաստ ունեցող և միայն վերաբերություն արտահայտող կապերից, որոնց մեջ բոլորովին, գոնե նվազագույն չափով, չկա առարկայական կամ հատկանշային իմաստ, կրկնավորներ չեն կազմվում:

Կրկնավոր հարադրություններ չեն կազմվում նաև շաղկապներից, շնայած դրանք հանդես են գալիս կրկնված ձևով (և՛ ... և՛, կա՛մ... կա՛մ, թե՛ ... թե՛, է՛լ ... է՛լ): Բայց սրանք բառական ինքնուրույն միավորներ չեն, այլ նշված շաղկապների ազատ հորժածություններ, որոնցով ընդգծվում է այս կամ այն շաղկապի իմաստը: Բացի այդ, նրանք ձևաբանորեն խոցելի են, քանի որ ընդմիջվում են նախադասության կազմում հանդես եկող այլ բառերով: Նույնը կարելի է ասել նաև եղանակավորող բառերի կրկնությունների մասին, նրանց կրկնությունը ևս բարդ բառ չի կազմում:

Օրինակներ՝ Գորգի վրա դրված համրիչի հինդ ջարը սառել էին ու ցույց էին տալիս եղբ. Մանգասարովների առևտրական հզորությունը քե՛ն՝ Կարմրաքարում, քե՛ն՝ հարևան գյուղերում (ԱՔ), Տիտոսը, որ ամենից շատ հենց այդ օրերին էր վազվզում, ցրիվ հորթերը հավաքում, կանչում, սուլում, վազելիս սայթաքում, վազելիս լաց լինում և հայհոյում հորթի հրճվանքն էլ, տիրոջն էլ (ԱՔ): Կամ մեռնել այդտեղ, կամ էլ վերջնականապես ջախջախել

այս թշնամուն (Մ.): Բազենյանը, հակառակ Թեկլեին արած իր խոստմանը, չեկավ ո՛չ այդ օրն երեկոյան և ո՛չ հետևյալ օրը (ՆԴՄ):

8. Ձայնարկությունները առանձնապես աչքի չեն ընկնում յառակազմության մեջ: Ձայնարկությունների կրկնությամբ կաղմըվում են սակավաթիվ բարդություններ. ինչպես՝ ախ ու վախ, ախ ու վիշ (հառաչանք), հայ-հայ (լավ վիճակ), վայ-վայ (վատ վիճակ): Վերջին երկուսը հանդիպում են՝ ռայ-հայը գնաց, վայ-վայը մնաց՝ արտահայտության մեջ: Մնացած դեպքերում մեծ մասամբ ձայնարկությունների կրկնությունը բառային արժեք չունի, դրանց արժեքը միայն ոճական է: Օրինակներ՝ օօ՛հ, օ՛հ, օ՛հ, էդ ծառաների բանն էլ մի ասի,—էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը (ՀԹ): Վա՛յ, վա՛յ, Մո՛սի ջան, ինձ մի սպանիր (ՀԹ): Զա՛ն, ջա՛ն մատաղ, ջա՛ն,—արտասանեց պառավ Մարանը և հորանջեց (ՆԴ):

9. Բնաձայնությունների կրկնությունը նույնպես ցույց է տալիս բնության երևույթների, առարկաների, կենդանիների արձակած ձայների բազմակիություն (ծիվ-ծիվ, կու-կու, դում-դում, ֆշ-ֆշ և այլն): Միայն առանձին դեպքերում են նրանք բառային արժեք ձեռք բերում, ինչպես կու-կու դարձել է կկու (թռչունի անուն), քիռ-քիռ՝ քրքիռ, որտեղ տարնամանության հետևանքով առաջին բաղադրիչի մեջ ո-ն դարձել է ր: Օրինակներ՝ Հետո դում-դում, մի ձայն եկավ, լազր մի զորավոր ձայն (ԱԲ): Մի՛վ, ծի՛վ, ծի՛վ, ծիվ, ա՛յ հովիվ, ինչո՞ւ կաթդ անհաց ես ուտում, ա՛ռ այս հացը, բրդիր կաթի մեջ և կեր (ԱԽ):

Կրկնավոր բարդության բաղադրիչները, բացի և, ու շաղկապներից, կարող են միանալ ըստ, ի, գ, առ նախդիրներով, չ մասնիկով, հա բառով՝ օրքստօրե, խառնիխուռն, գունդ առ գունդ, ունեցած-չունեցած, գնա հա գնա, ամպ ու զամպ և այլն:

Բառակրկնությունը իր հիմքում շարահյուսական երևույթ է և ունի ոճական արժեք, բայց ինչպես տեսանք, բառերի կրկնության հետևանքով որոշ դեպքերում կազմվում են նոր բառեր. այդպիսի բառակրկնությունն արդեն ստանում է բառակազմական արժեք:

#### ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բարդ բառերի կառուցվածքային հատկանիշն է նրանց մեկից ավելի հիմնական ձևերի հոգավորված լինելը: Ընդ որում,

բարդության կազմում հանդես եկող ձևույթները կարող են ունենալ տարբեր փոխհարաբերություններ, որոնց բացահայտման համար անհրաժեշտ է տվյալ բառը ենթարկել բառակազմական վերլուծության: Բառակազմական վերլուծությունը բացահայտում է բառի կառուցվածքը լեզվի զարգացման տվյալ ժամանակաշրջանում, նրա կազմի մեջ մտնող հոգավորիչների փոխհարաբերությունները, ինչպես նաև տվյալ բառի այս կամ այն բառակազմական տիպին պատկանելը:

Բառակազմական վերլուծության առաջին քայլն է ձևույթային վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս բառը, որպես որոշակի կառուցվածքային միավոր, համեմատել մյուս բառերի հետ, ինչպես նաև նույն կառուցվածքն ունեցող այլ բառերի ու նրանց հատուկ քերականական ձևերի հետ: Զևույթային վերլուծության ժամանակ տարբերակվում են հիմնական ձևույթները, որոնք հանդիսանում են բառի իմաստային միջուկը և երկրորդական ձևույթները, որոնք կարող են զանազան նշանակություններ ունենալ և, դրվելով հիմնական ձևույթների վրա, տարբերակել բառիմաստներ կամ նոր տարբերակումներ տալ դրանց:

Հիմնական (արմատական) ձևույթները կարևոր դեր են կատարում բառակազմության մեջ: Դրանք յուրաքանչյուր լեզվում ներկայացնում են սահմանափակ թիվ և կազմում են բառի հիմնական մասը: Լինելով բառի բաղադրիչներից հիմնականը՝ արմատական ձևույթը շատ դեպքերում ամբողջական բառ չէ, քանի որ շունի քերականական ձևավորում, Շատ հիմնական ձևույթներ (արմատներ) կարող են հանդես դալ որպես բառեր: Նման դեպքերում նրանք անկախ գործածություն ունեն, որը հանգեցնում է բառիմաստի տարբերակման, այլ կերպ ասած, անկախ գործածություն ունեցող արմատական ձևույթները արտահայտում են բառիմաստ և ունեն առանձին քերականական ձևավորում: Ինչպես արդեն հայտնի է, ալսպիսի բառերը կոչվում են արմատական կամ պարզ բառեր՝ ջուր, եռը, հագ, ֆառ, մեկ և այլն: Դժվար չէ նկատել, որ արմատական բառերը միաձևույթ են:

Հանդես բերելով բառային մակարդակի միավորի առանձնահատկությունները՝ բառիմաստ, անկախ ինքնուրույն գործածություն և ձևավորում, պարզ (արմատական) բառերը կազմում են բառապաշարի փոքր մասը: Բառապաշարի մեջ զգալի տեղ են գրավում բաղադրյալ բառերը, որոնք կարող են կազմված լինել

մեկից ավելի ձևույթներից և ներկայացնել բառային մակարդակի ավարտուն միավորներ:

Հետևաբար, թե՛ բազմաձևույթ, թե՛ միաձևույթ բառերը բառային մակարդակի ավարտուն միավորներ են և այդ առումով հակադրվում են արմատին, որը լինելով բառի հիմնական մասը և բառիմաստի կրողը, արտահայտում է ընդհանուր իմաստ և կոնկրետանում, անկախ գործածություն է ձեռք բերում երկրորդական ձևույթների միջոցով: Այսպես, օրինակ՝ խոս, կարդ, հեռ, աս արմատները դառնում են անկախ գործածություն ունեցող բառեր միայն երկրորդական ձևույթների միջոցով՝ խոս-ել, խոս-ուն, կարդ-ալ, հեռ-ու, հեռ-ա-վոր, հեռ-ա-ճալ, աս-ել, աս-ող և այլն:

Մյուս կողմից, արմատը չի կարող բաժանվել ավելի փոքր իմաստակիր միավորների, իսկ բառերի մեծ մասի համար (բացի պարզ բառերից) այն բացառված չէ (թագ-ա-վոր, ան-գլուխ, դավ-ա-դիր և այլն):

Բառակազմական վերլուծության (ներառյալ նաև կազմի բացահայտման) դեպքում նպատակահարմար է կիրառել անմիջական բաղադրիչների մեթոդը: Այս մեթոդը լայն կիրառություն ունի ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ և հանդիսանում է լեզվաբանական հիշյալ ուղղության ամենամշակված մեթոդներից մեկը: Ըստ այդ մեթոդի լեզվական յուրաքանչյուր միավոր բաժանվում է անմիջական բաղադրիչների, մինչև իմաստակիր նվազագույն միավորին (ձևույթին) հասնելը<sup>33</sup>, ինքնին հասկանալի է, որ բարդ բառի անմիջական բաղադրիչները այն հոդավորող հիմնական միավորներն են (ջր||կիր, հեռ||ա||գիր, ջր||ա||ծին և այլն):

Բարդ ածանցավոր բառերի հոդավորիչների մեջ առանձնանում են նաև ածանցները, որպես առանձին բաղադրիչներ. ինչպես՝ հեռ||ա||խոս||ա||վար||ուհի, հնչ||յուն||ա||կապ||ա||կց||ություն, ան||քընն||ա||դատ,|| երկ||լեզվ||յան և այլն<sup>34</sup>, ինչպես երևում է օրինակ-

33 К. А. Левковская, Теория слова, принципы его построения и аспекты изучения лексического материала, М., 1962, стр. 30.

34 Հոդակապ ունեցող բարդություններում դժվար է Կ հնչյունը ձևույթ համարել, քանի որ որևէ իմաստ չունի, այն ուղղակի իրար է միացնում բարդության առանձին բաղադրիչները, հանդես գալով իմաստակիր միավորների միջև որպես կապող օղակ: Տե՛ս է. Ազալյան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 80.

ներից, բարդ բառերը կարող են ստանալ նախածանցներ և վերջածանցներ, վերջածանցները զգալի դեր են կատարում բարդության վերջին եզրի ձևավորման մեջ, դրանց շնորհիվ հաճախ որոշվում է նաև ամբողջ բարդ բառի տեղը ձևաբանական մակարդակի միավորների շարքում: Այլ դեպքերում դա կատարվում է նաև քերականական մասնիկների միջոցով. ինչպես՝ դասակարգել, կանխագուշակել, առաջադիմել, վերնագրել, հիմնադրել և այլն: Նշված և նման այլ բարդ բառերը, առանց կասկածելու, կարելի է մտցնել բայական համակարգի մեջ:

Նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչների կողմից մշակված անմիջական բաղադրիչների մեթոդն օգնում է ավելի ճիշտ որոշելու բառի կառուցվածքը, և մանավանդ, նրա բաղադրիչների փոխհարաբերությունները: Այն կիրառվում է տարբեր կառուցվածքներ (շարահյուսական, բառակազմական) վերլուծելու համար: Ելնելով այս մեթոդի ընդհանուր սկզբունքից, բարդ կառուցվածքը բաժանվում է ավելի փոքր հատվածների, առանց հաշվի առնելու իմաստային կողմը: Առանձին դեպքերում վերլուծությունը կատարվում է խիստ ձևական սկզբունքներով, որը, իհարկե, քննադատելի է և թյուրիմացությունների տեղիք է տալիս, որովհետև շատ դեպքերում խիստներ առաջնորդվելով սոսկ ձևական սկզբունքներով, գտնում են, որ լեզուն կազմված է ազատ և կապված ձևույթների զանազան հարաբերություններից: Այս տեսակետից բարդ բառը չեն տարբերում բառակապակցություններից, եթե տվյալ բառը բաղադրյալ է: Մյուս կողմից, չի զգացվում բառի և ձևույթի տարբերությունը, եթե բառը բաղադրյալ չէ<sup>35</sup>:

Իրականում բառը լեզվական ինքնուրույն միավոր է, որը հակադրվում է լեզվական համակարգի մյուս միավորներին, հնչույթներին, ձևույթներին, նախադասությանը: Առաջինները զուրկ են իմաստից և ծառայում են բառերի նյութական ձևավորումը ապահովելուն, իսկ ձևույթները, լեզվի իմաստակիր նվազագույն միավորներն են, որոնք շատ դեպքերում զուրկ են իմաստային ու ձևական ինքնուրույնությունից: Մինչդեռ նախադասությունը լեզվի համեմատաբար ավելի ավարտուն միավոր է, քան բա-

<sup>35</sup> Г. Глиссон, Введение в дескриптивную лингвистику, М., 1959, стр. 43. К. А. Левковская, Тесня слова, стр. 30.

որ, և կարող է արտահայտել միտք, դատողություն, մի հատկանիշ, որից զուրկ է բառը:

Ձևությամբ վերլուծության ժամանակ իմաստային կողմի անտեսումը սխալ է: Ուստի լեզվական իմաստակիր միավորների բնույթը պարզելիս անհրաժեշտ է կատարել կառուցվածքային-իմաստային վերլուծություն, որովհետև դրանք ներկայացնում են ձևի և բովանդակության միասնություն:

Ժամանակակից լեզվաբանության մեջ, բառի կառուցվածքային հատկանիշները բնութագրելիս, խոսվում է նաև բառի խորության ու երկարության մասին: Այնքան, որքան բառի խորությունը որոշվում է նրա ձևայինների քանակով<sup>36</sup>, ապա բարդ բառերի ձևային վերլուծությունը կատարելիս հարկ ենք համարում մի քանի խոսք ասել այդ մասին: Բարդ բառերն ինքնին ենթադրում են մեկից ավելի հիմնական ձևայինների առկայությունը: Հայերենում ավելի կենսունակ են երկարմատ բարդ բառերը, ուստի բարդ բառերի նվազագույն խորությունն է 2. Ինչպես՝ ջր-հոս, ծով-ա-փառ, ուս-ա-գող, լայն-երիզ և այլն: Երկու հիմնական ձևայիններից կազմված բարդություններից բացի, ժամանակակից հայերենում կան նաև եռարմատ ու քառարմատ բարդ բառեր, իսկ եթե նկատի ունենանք, որ վերջիններս ունենում են նաև քերականական ու ածանցական իմաստներ արտահայտող ձևայիններ, ապա կարող ենք ասել, որ բարդությունները դասվում են իրենց խորությամբ աչքի ընկնող բառերի շարքում: Այսպես, օրինակ՝ գր-ա-դարան-ա-վար-ունի բարդ բառի խորությունն է 4, լեզվ-ա-կատուց-վ-ած-ք-ային բարդ ածանցավոր բառի խորությունն է 7, ապ-ա-դաս-ա-կարգ-այն-աց-վ-ել բառինը նույնպես 7 և այլն:

Ինչ վերաբերում է բառի երկարությանը, ապա այն որոշվում է բառի մեջ ընդգրկված վանկերի քանակով<sup>37</sup>: Այսպես օրինակ՝ գո-վեր-գել բարդ բառի երկարությունն է 3, հու-շա-նը-վեր բառինը՝ 4, է-լեկ-տրա-մե-քե-նա-շի-նա-կան բառինը՝ 9 և այլն:

Բառի խորությունն ու երկարությունը փոխադարձաբար կապված են միմյանց հետ, որովհետև բառի ձևայինները կարող են վերածվել վանկերի՝ ցույց տալով բառի երկարությունը: Մեծ մասամբ, եթե բառը բազմաձևային է, ապա նաև բազմավանկ է:

<sup>36</sup> В. А. Москович, Глубина и длина слов в естественных языках, ВЯ, 1967, 6, стр. 18.

<sup>37</sup> Նույն տեղում:

Դեպքերի ճնշող մեծամասնության մեջ բառի երկարությունը գերազանցում է խորությունը, քանի որ (բացի նրանից, որ ձևույթները կարող են լինել բազմավանկ) բառը վանկատելիս հանդես են գալիս նաև գաղտնավանկերը, իսկ հոգակապը, որը ձևույթ չի համարվում, կարող է հանդես գալ որևէ վանկի կազմում: Այսպես՝ բառաբանագրություն բառի խորությունն է 4, երկարությունը՝ 7, գաղտնագրություն բառի խորությունն է 3, երկարությունը՝ 5, խնամկարչություն բառի խորությունն է 4, երկարությունը՝ 6 և այլն: Այս և նման փաստերը վկայում են այն մասին, որ հայերենի բառակազմական միջոցները՝ բառաբարդումն ու ածանցումը, զգալի դեր են կատարում բառի խորության ու երկարության ավելացման մեջ՝ նոր ձևեր ընդգրկելով բառի կազմում:

Արդեն նշվել է, որ ձևույթային վերլուծությունն անհրաժեշտ է բարդության կազմիչները պարզելու համար և այն առաջին քայլն է բարդ բառերի բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունները բացահայտելու ճանապարհին:

Բարդ բառի կառուցվածքային վերլուծությունը կատարելիս դժվար չէ նկատել, որ բառաբարդումը որոշ առումով հարում է շարահյուսությանը, այնքան, որքան բարդ բառի բաղադրիչները իրար հետ կապվում են զանազան շարահյուսական կապերով, իսկ իրենք՝ բարդ բառերը, մասամբ առաջացել են երբեմնի շարահյուսական կապակցություններից: Ասում ենք մասամբ, որովհետև հայերենում քիչ չեն արդեն եղած կաղապարների նմանակությամբ առաջացած բարդությունները:

Բարդ բառերը, ինչ-որ չափով հարաբերակից լինելով բառակապակցություններին, ունեն նաև ակնհայտ տարբերություններ: Առաջինները ներկայացնում են կառուցվածքային ավելի սերտ միասնություն, քան բառակապակցությունները: Բարդությունները ձևավորվում են որպես մեկ բառ և արտահայտում են մեկ հասկացություն<sup>38</sup>: Մինչդեռ բառակապակցության յուրաքանչյուր բաղադրիչ ունի առանձին քերականական ձևավորում, և նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է յուրահատուկ հասկացություն:

<sup>38</sup> Չի բացառվում, որ առանձին դեպքերում բարդ բառը չի արտահայտում հասկացություն, ինչպես բարդ բառերով արտահայտված շաղկապները (նրպես, որպեսզի, այնուամենայնիվ, այնուհանդերձ, այդուհանդերձ, նաև, քեզ, որովհետև և այլն), եղանակավորող բառերը՝ անավասիկ, քերես, միգուցե, միքե, նույնիսկ, կարծես քեզ, ճաշիկ քեզ, իբրև քեզ և այլն:

Ծիշտ է, կապող ձայնավորը՝ հոգակապը, ձևավորում է բարդության առաջին բաղադրիչը, բայց այն լրիվ տարբերվում է բառի քերականական ձևավորումից (սեղանատուն, հաշվեմատյան, դասացուցակ և այլն)։ Բարդության բաղադրիչները կառուցվածքային-իմաստային միասնություն են կազմում, որից հետևում է, որ վերջին բաղադրիչի ձևավորումը համընկնում է ամբողջ բարդ բառի ձևավորմանը<sup>39</sup>, որը շատ լավ երևում է բարդ բառերի ձևաբանական փոփոխություններն ուսումնասիրելիս։

#### Բարդ բառերի ձևաբանական փոփոխությունները

Բարդությունները ձևաբանական փոփոխությունների ենթարկվելիս ցուցաբերում են մի շարք առանձնահատկություններ։ Առաջին բաղադրիչը ձևաբանական փոփոխությունների նկատմամբ մնում է անտարբեր. այս դեպքում փոխվում է հիմնականում բարդության վերջին բաղադրիչը։ Հոլովվելիս (բարդ գոյականների), խոնարհվելիս (բարդ բայերի) հոլովական ու խոնարհման վերջավորությունները հիմնականում դրվում են վերջին բաղադրիչի վրա։ Ուստի ամբողջ բարդության ձևաբանական փոփոխություններն արտահայտվում են բարդության երկրորդ բաղադրիչի ձևավորմամբ։

Այսպես, օրինակ՝ քուֆ ու մրի, առևտրի, զգեստապահարանի, այրուծիի, ախ ու վախի և այլն։ Ինչպես երևում է օրինակներից, բարդ բառերի բաղադրիչների քերականական բնութագիրը (դեմք, թիվ, հոլով, ժամանակ, եղանակ արտահայտելը) զգալիորեն չեզոքանում է, ընդհանրանում, որի հետևանքով բարդությունները ձևավորվում են որպես մեկ ամբողջական բառ։ Այս տեսակետից յուրահատուկ են համադաս բաղադրիչներով բարդ բառերը (հատկապես վերլուծական կազմությամբ բարդությունները)։ Այսպես՝ ժամանակակից հայերենում բայական բարդությունները խոնարհվելիս համադրական ձևերում փոխում են երկրորդ բաղադրիչը (վազվզեցի, ձգձգեցի, ծակծկեցի և այլն)։ Իսկ վերլուծական ձևերում՝ երկու բաղադրիչներն էլ հավասարապես (քռա-գնացի, պռկվեցի—ընկա, քռեցի—փախա և այլն)։

Անմիօրինակ են նաև ածականների ձևաբանական փոփոխությունները։ Համադրական բարդություններով արտահայտված ա-

<sup>39</sup> Բացառություն են կազմում հայր ու որդի, մայր ու աղջիկ և նման այլ ձևերը։

ծականները ունենում են ածականին բնորոշ համեմատության աստիճաններ, ինչպես՝ լուսապայծառ—ավելի լուսապայծառ—ամենալուսապայծառ, սուսուփուս—ավելի սուսուփուս, ամենասուսուփուս, ճիսսփանջ—ավելի ճիսսփանջ—ամենաճիսսփանջ և այլն:

Վերլուծական ձևերը կարող են արտահայտել բաղադրիչներով արտահայտած հատկանիշի իմաստի խտացում և նրանցով արտահայտված բառիմաստի սաստկացում՝ առանց ունենալու դրական ու համեմատական աստիճանների Այսպես, օրինակ՝ բարձր—բարձր, նոր—նոր, ճեմակ—ճեմակ և այլն:

Ձուգադրական բայերը և դերանուններով արտահայտված բաղադրիչներ ունեցող բարդությունները հավասարապես փոխում են երկու բաղադրիչները. ինչպես՝ զնալ—ճեռաճալ, զնացի—ճեռացա, զնացի—ճեռացար, զնաց—ճեռացավ, ես ու ես, ինձ ու ինձ, քեզ ու քեզ, մեզ ու մեզ, այս ու այն և այլն:

Օրինակները ցույց են տալիս, որ դերանվանական բաղադրիչներ ունեցող բարդ բառերը ենթարկվում են դերանվանական հոլովման: Այսպես, օրինակ՝ ես ու ես, իմ ու իմ, ինձ ու ինձ, մենք ու մենք, մեզ ու մեզ և այլն: Անձնական դերանուններով բաղադրված բարդություններում բոլոր հոլովածները չէ, որ առկա են: Սովորաբար լինում են ուղղականի, սեռականի, տրականի հոլովածները: Առանձին դեպքերում դերանվանական բաղադրություններ բարդությունները (այլևայլ, ուրիշ—ուրիշ և այլն) հոլովվում են ինչպես գոյականները: Այս բարդություններում սովորաբար փոխվում է վերջին բաղադրիչը: Այսպես, օրինակ՝

|               |              |
|---------------|--------------|
| Ուղղ. այլևայլ | ուրիշ—ուրիշ  |
| Սեռ. այլևայլի | ուրիշ—ուրիշի |

Ինքնին հասկանալի է, որ շեքվող խոսքի մասերի համակարգերում հանդես եկող բարդ բառերը զուրկ են ձևաբանական փոփոխություններից, ինչպես՝ շտապ—շտապ, արագ—արագ, մոտ—մոտ, վեր—վեր և այլն:

Բարդ գոյականների հոգնակին կազմելիս նույնպես ձևավորվում է վերջին բաղադրիչը: Այս դեպքում բարդ բառերը հանդես են բերում մի շարք առանձնահատկությունների:

1. Եթե բարդության վերջին միավանկ բաղադրիչը պահպանում է իր իմաստը, ապա բարդությունն ստանում է —եր վերջա-

վորությունը. օրինակներ՝ զբոսավայր—զբոսավայրեր, դեղատոմս—դեղատոմսեր, երկտող—երկտողեր և այլն:

2. Եթե վերջին միավանկ բառը բայի արմատ է կամ բայի իմաստ ստացած գոյական, բարդությունն ստանում է —ներ վերջավորություն՝ առակագիր—առակագիրներ, քարձրախոս—քարձրախոսներ, ճիմնադիր—ճիմնադիրներ և այլն:

3. Երբ երկրորդ բաղադրիչը ն հանգ ունեցող միավանկ բառ է, ապա ամբողջ բարդությունն ստանում է —ներ: Ինչպես՝ դաշտամուկ—դաշտամկներ, շնածուկ—շնածկներ, ձողաձուկ—ձողաձկներ և այլն: Ավելի ճիշտ, հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է ն հանգը: Այդպես է լինում նաև բառաբարդման ժամանակ, եթե առաջին բաղադրիչում հանդես եկող բառը գրաբարում ունեցել է ն, ապա բարդության մեջ այն վերականգնվում է, օրինակ՝ ուսումնասիրել, լեռնաբնակ, մատնաշափ, սերմնացան, հարսնսլխոս և այլն:

#### Բարդ քառերի իմաստային վերլուծությունը

Քանի որ բարդ բառերի բաղադրիչները բարդությունից դուրս առանձին բառեր են կամ էլ այնպիսի բառերի արմատներ, որոնք մեծ մասամբ արտահայտում են հասկացություններ, ապա բարդ բառի իմաստային վերլուծությունը կատարելիս անհրաժեշտ է անդրադառնալ նրա տրամաբանական կառուցվածքին, այն բանին, թե ինչպիսի՞ հասկացություններ կարող են համադրվել բարդության կազմում: Հասկացությունների համադրելիության սահմանափակիչ հանգամանքն առաջին հերթին կրում է իմաստաբանական բնույթ: Եթե նկատի ունենանք, որ հասկացության բովանդակությունը բարդ է, այն առարկայի կամ երևույթի մասին արդեն ձեռք բերված ըմբռնումների, ընկալումների գումար է, ապա հասկացությունների համադրումը, դրա հետ կապված բարդ բառի առաջացումը, հնարավոր է միայն այն դեպքում, երբ կարելի կլինի, թեկուզ նվազագույն չափով, գտնել տրամաբանական կապ երկու հասկացությունների բովանդակության մեջ մտնող հատկանիշների միջև: Բարդ բառերի կազմության օրինաչափություններն ուսումնասիրելիս կարելի է գտնել բարդությունը կազմող հասկացությունների տրամաբանական հարաբերությունների տեսակները, նրանց տրամաբանական կառուցվածքի գլխավոր գծերը: Բարդ բառի բաղադրիչների մեջ ավելի շատ, քան բառա-

կապակցության մեջ, հանդես է գալիս տրամաբանական կապը, որովհետև բառակապակցության մեջ համադրվող բառերի տրամաբանական կապին գումարվում են քերականական հարաբերությունները՝ համաձայնությունը, խնդրառությունը, իսկ բարդ բառերի մեջ բաղադրիչների քերականական կապը մթազնաժ է, և դրանք ավելի շատ կապվում են տրամաբանորեն: Բարդ բառի տրամաբանական կառուցվածքը պարզելիս անհրաժեշտ է իմանալ համադրվող հասկացությունների ծավալը, բովանդակությունը, նրանց միմյանց նկատմամբ ստորադասված կամ համադասված լինելը:

Ըստ հասկացությունների ծավալի կարող են համադրվել.

ա) Եզակի հասկացությունը ընդհանուրի հետ, որտեղ ընդհանուր հասկացությունը հանդես է գալիս որպես հենարան բառ՝ Արշակավան, Վաճառդուխտ, Տիգրանակերտ, Հայկավան, ճյուսիսափայլ և այլն:

բ) Եզակի հասկացությունը եզակի հասկացության հետ: Ինչպես, օրինակ՝ ճյուսիս-ատլանտյան, ճյուսիս-արևմտյան, հարավ-աֆրիկյան, հարավ-արևելք, ճյուսիս-արևմուտք և այլն: Այսպիսի բարդությունները քիչ են և մեծ մասամբ կապվում են աշխարհագրական անունների հետ: Վերջին օրինակներում երկու եզակի հասկացությունները բարդության մեջ իրար համարժեք չեն: Նրանցից առաջին բաղադրիչը, հանդես դալով որպես որոշիչ, սահմանափակում է երկրորդ բաղադրիչով արտահայտված հասկացության ծավալը, քանի որ վերջինս լրացուցիչ կերպով բնութագրվում է առաջին բաղադրիչի կողմից:

գ) Ընդհանուր հասկացությունը համադրվում է ընդհանուր հասկացության հետ: Նման հասկացություններ արտահայտող բաղադրիչներից կազմված բարդ բառերը բավականին տարածված են հայոց լեզվում: Բարդության մեջ այդպիսի բառերը կամ գտնվում են համադասական հարաբերության մեջ (շատ-շատ, արդ ու զարդ, լուսապայծառ, գիտա-տեխնիկական և այլն), կամ էլ առաջին բաղադրիչը լրացնում է երկրորդին (գրասենյակ, դեղնամուգուր, սրտես, մադալսեր, լրաբեր և այլն):

Ինչպես արդեն ասվել է, որոշակի հարաբերակցություն գոյություն ունի բարդ բառերի և նրանց համապատասխան բառակապակցությունների միջև: Շատ բարդ բառեր հեշտությամբ բաժանվում են բաղադրիչների և կարող են փոխարինվել համապատասխան բառակապակցություններով՝ առանց իմաստային նշա-

նակալի փոփոխությունն առաջացնելու Յուրաքանչյուր բարդ բա-  
ռի շարահյուսական փոխակերպի ճշտությունը կարելի է ստուգել՝  
տեքստում օգտագործելու միջոցով: Եթե տվյալ բարդության շա-  
րահյուսական փոխակերպի և համապատասխան բարդ բառի կի-  
րառումը միևնույն տեքստում իմաստային փոփոխություն չի ա-  
ռաջացնում, ուրեմն շարահյուսական փոխակերպը, որն արտա-  
հայտվում է բառակապակցությամբ, հաջող է:

Օրինակներ՝ Թիկունքի գույնը մուգ գորշ է, դեղնառակեզույն  
(դեղնին և ոսկեգույնին տվող) փայլով (վ. Անանյան), Տեսնում էր  
արյունաներկ (արյունով ներկված) սրբրի ահարկու փայլը (Րաֆ-  
ֆի), Աստղագետ→աստղագիտության մասնագետ, Շատ երկրների  
աստղագետներ (աստղագիտության մասնագետներ) արդեն դիտել  
են արհեստական արբանյակը (մամուլ):

Փոխակերպման միջոցով բացահայտվում են բարդ բառի ան-  
միջական կազմիչների միջև եղած փոխհարաբերությունները: Այն  
օժանդակ դեր է կատարում բառակազմական վերլուծության մեջ,  
որը ոչ միայն ցույց է տալիս բառի բաղադրյալ լինելը, այլև որո-  
շում է նրա համարժեքն այս կամ այն շահով, համարժեք, որ  
կարող է փոխարինել բարդ բառին և իմաստային զգալի փոփո-  
խություն չառաջացնել տվյալ տեքստում:

Բարդ բառի ուղղակի փոխակերպները կարող են ոչ միայն  
ծառայել տեքստի վերլուծության և վերարտադրման համար, այլև  
օգտագործվել բառարանագրության մեջ՝ առանձին բառերի բա-  
ցատրությունների և թարգմանությունների ժամանակ: Դրանք կա-  
րող են կիրառվել ինչպես երկլեզվյան, այնպես էլ բացատրական  
բառարաններում: Մի դեպքում բառի բացատրությունն իրենից  
ներկայացնում է տվյալ բառի փոխակերպը նրա բաղադրության  
բացահայտման միջոցով: Ինչպես, օրինակ՝ երկաթազամ բարդ  
բառը բացատրական բառարանում բացատրված է այսպես՝ երկա-  
թե գամերով ամրացրած (ժՀԼԲԲ): Արտահայտչամիջոց—դրակա-  
նության և արվեստի մեջ իրականությունը վերարտադրելու, պատ-  
կերելու գեղարվեստական միջոց (ն. տ.): Գիշերաշրջիկ՝ գիշերը  
շրջող, գիշերը դուրսն անցկացնող, գիշերը թափառող անձ (ն. տ.):  
Մյուս դեպքում բառի բացատրությունը տրվում է թարգմանված  
ձևով:

Իմաստների բացատրության այս միջոցը ոչ միշտ է կիրառ-  
վում, քանի որ բոլոր դեպքերում չէ, որ հնարավոր է լինում բարդ

բառն արտահայտել բառակապակցության միջոցով՝ այս կերպ բացելով բարդության իմաստը: Բացի դրանից, դժվարություններ են լինում բաղադրության ոչ հստակ լինելու պատճառով: Հեշտ է բարդ բառն արտահայտել բառակապակցությամբ հատկապես այն դեպքում, երբ բարդության բաղադրիչները իմաստային փոփոխություն կրած չեն լինում: Այսպիսի դեպքերում բարդության իմաստը մոտ է լինում բառակապակցության իմաստին (ֆաբա-րի→քաջ և արի, դեղնակապույտ→դեղին և կանաչին տվող, հեղանկուն→հեղ և ճկուն և այլն):

Մինչդեռ եխտ ու կաց, աչքածակ, աչքաբաց, սրտաբաց և նման այլ բառերի (որոնց բաղադրիչները իմաստափոխված են) բացատրության ժամանակ նրանց ուղղակի փոխակերպումը հնարավոր չէ կիրառել:

Ինքնին հասկանալի է, որ փոխակերպման մեթոդը կարող է միայն առանձին դեպքերում օժանդակել բառարանագրությանը, քանի որ որոշ դեպքերում բառերի բացատրության համար այն հանձնարարելի չէ:

Շատ հաճախ բարդության կազմի մեջ մտնող բաղադրիչները առանձին բառեր չեն, այլ՝ հիմնական ձևույթներ: Հիմնական ձևույթը բառի իմաստային միջուկն է, հենց նրանով է բառը վերաբերում իրականության այս կամ այն առարկային, երևույթին: Բայց բառի և հիմնական ձևույթի իմաստները չեն համընկնում, քանի որ բառիմաստի մեջ մտնում են նաև քերականական և հուզա-արտահայտչական կողմերը: Այստեղից հետևում է, որ առանձին ձևավորված բառերից կազմված բառակապակցությունը չի կարող լինել այս կամ այն բարդ բառի լիարժեք համապատասխանությունը, եթե նույնիսկ տվյալ բարդ բառն առաջացել է համապատասխան բառակապակցությունից: Բարդ բառի և բառակապակցության հարաբերությունը բազմազան է. ե չի որոշվում միայն նրանց ձևական մերձավորության առկայությամբ կամ բացակայությամբ: Նրանց համար բնորոշ է իմաստային մերձավորությունը, այն տեսակետից, որ երկուսն էլ կարող են արտահայտել այնպիսի հասկացություններ, որոնք վերաբերում են իրականության համապատասխան երևույթներին: Այդ է պատճառը, որ տվյալ բարդ բառին զուգահեռ կարող է լինել նրան համապատասխան բառակապակցությունը:

Շատ հաճախ կողք-կողքի գոյություն ունեն և՛ բառակապակցությունը, և՛ բարդ բառը, սակայն դրանցից նախապատվու-

թյունը տրվում է բարդություններին, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է բարդություններով արտահայտված տերմիններին: Այսպես, օրինակ՝ կռիկակար-կռիկ կարող, մսավաճառ-միս վաճառող և այլն:

Նշված բառակապակցությունները հանդես են գալիս որպես բարդ բառով արտահայտված տերմինների ոճական տարբերակներ: Վերոհիշյալ տերմինները, արտացոլելով բարդ հասկացություններ, ցուցաբերում են տերմինին բնորոշ մենիմաստությունը՝ անկախ այն բանից, նրա բաղադրիչները մենիմաստ են, թե՞ բազմիմաստ (աչխապատվաստ, աչխացավ, ձեռագործ, սրտամկան, քաղցր և այլն): Նշված տերմինների մեջ ընդգծված բաղադրիչները բազմիմաստ են, իսկ տերմինները՝ մենիմաստ:

Ընդհանրապես, բարդ բառի և բառակապակցության համապատասխանությունը վերաբերում է լեզվաբանության երկու բաժիններին՝ բառակազմությանն ու շարահյուսությանը, և այդ համապատասխանության ուսումնասիրությունը կարող է նպաստել բարդ բառերի և բառակապակցությունների փոխադարձ կապի բացահայտմանը:

#### ՀԱՄԱԴԱՍ ՀԱՂԱԳՐԻՉՆԵՐՈՎ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարդ բառերի իմաստային վերլուծությունը ցույց է տալիս, որ բարդության բաղադրիչների փոխհարաբերությունները կարող են լինել համադասական և ստորադասական<sup>40</sup>:

Համադասական փոխհարաբերության դեպքում բարդության մեջ բաղադրիչները համազոր են և միասին կերտում են նոր բառ: Օրինակներ՝ արդ ու զարդ, եռուղեք, ճիստապես, լուսապայծառ, ցախ ու ցրիվ և այլն:

Բաղադրիչների ստորադասական հարաբերության դեպքում բարդ բառի կազմիչներից մեկը շարահյուսորեն գերադաս է մյուսի նկատմամբ: Հայերենում այսպիսի բարդ բառերի իմաստային միջուկը երկրորդ բաղադրիչն է, իսկ առաջինը՝ նրա լրացումն է: Օրինակներ՝ նեղամար, ընթերցասեր, գաղթօջախ, թեթևաբան, իրիկնաժամ, այսօր, տանտիկին և այլն: Այս դեպքում, սովորաբար, առաջին բաղադրիչը կոնկրետացնում է երկրորդ բաղադրիչի

<sup>40</sup> Հմմտ. Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 201—202:

արտահայտած իմաստը՝ նրան բնութագրելով այս կամ այն տեսակետից և յուրովի նեղացնում է նրանով արտահայտած հասկացության ծավալը: Իսկ ամբողջ բարդ բառի արտահայտած հասկացության ծավալն ավելի նեղ է, քան երկրորդ բաղադրիչով արտահայտած հասկացության ծավալը: Շատ հաճախ նրանք միմյանց նկատմամբ գտնվում են սեռի և տեսակի հարաբերության մեջ:

Այսպես՝ զբաղեցնում են բարդության մեջ սեղան բաղադրիչը, որը գերադաս անդամն է, արտահայտում է բավականին լայն հասկացություն, որի տակ ըմբռնվում են բոլոր տեսակի սեղանները՝ սեղան առարկան, նրան բնորոշ էական հատկանիշներով, իսկ բարդության մյուս բաղադրիչը նեղացնում է նրա իմաստը, ցույց տալով միայն սեղանի մի տեսակը, որը նախատեսված է զրեկու համար:

Համադաս բաղադրիչներով բարդություններում վերջիններիս հոդավորիչների փոխհարաբերությունները կրում են բոլորովին այլ բնույթ՝ ստորադաս բաղադրիչներով բարդ բառերի համեմատությամբ: Այս փոխհարաբերությունները շարահյուսական ու իմաստային տեսակետից հիմնականում համանիշ են: Ինչպես, օրինակ՝ եռուզեռ, օր ու գիշեր, ճիսսֆանչ, աղ ու ճաց, կերուխում, ցաֆ ու ցրիվ և այլն:

Տրամաբանական կառուցվածքի տեսակետից համադասությունամբ կապված բաղադրիչներով բարդություններում մեծ մասամբ համադրվում է ընդհանուր հասկացությունը ընդհանուր հասկացության հետ (դեղնաճեմակ, մեծ-մեծ, օր ու գիշեր, բացուխութ, թուֆ ու մուր, ճինգ-ճինգ, ժամ առ ժամ և այլն):

Այժմ տեսնենք, թե կառուցվածքային-իմաստային ինչպիսի առանձնահատկություններ են ցուցաբերում ժամանակակից հայերենի շարահյուսորեն համադաս բաղադրիչներ ունեցող բարդությունները:

#### ՀԱՄԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾ- ՔԱՅԻՆ-ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բաղադրիչների համադասական փոխհարաբերություն ունենում են ինչպես վերլուծական, այնպես էլ համադրական բարդությունները: Երկու դեպքում էլ բարդ բառերի բաղադրիչները

միևնույն խոսքի մասին պատկանող բառեր կամ բառահիմքեր են, որոնք շատ հաճախ իմաստային տեսակետից համարժեք են: Դրանց կապն արտահայտվում է համադասական շաղկապներով, ինչպես, օրինակ՝ ախ ու վախ, անց ու դարձ, աղ ու հաց, ցաֆ ու ցրիվ, հարց ու փորձ և այլն, նախդիրներով (մեկառմեկ, ճեխեճե, գունդ առ գունդ, ֆաղաֆ առ ֆաղաֆ, խառնիխուռն և այլն), հոդակապով (նորանոս, մեծամեծ, ջերմաջերմ, ծանրածանր, շարաշար և այլն): Առանձին դեպքերում բաղադրիչների կապն ապահովվում է միայն նրանց իմաստային մերձավորությամբ, որը դրավոր խոսքում արտահայտվում է գծիկով, ինչպես, օրինակ՝ զուգվել-զարդարվել, ուսումնա-դաստիարակչական, գիտա-տեխնիկական, արագ-արագ, շատ-շատ, ակումբա-գրադարանային, շտապ-շտապ և այլն:

Շարահյուսորեն համադաս բաղադրիչներով բարդությունները հանդես են բերում մի շարք իմաստային առանձնահատկություններ:

Քննենք դրանք առանձին-առանձին:

1. Գոյական-գոյական կաղապարով կազմված բարդ բառերը ընդհանուր առմամբ կարող են արտահայտել առարկա, առարկայական հասկացություն: Ինչպես՝ աղ ու հաց, եռուզեռ, լաց ու կռժ, հայր ու որդի, արդուզարդ, այրուծի և այլն: Սրանք կարելի է բաժանել մի քանի իմաստային խմբերի.

ա) Մարդկային զանազան հոգեմիճակներ արտահայտող բարդություններ, որոնց բաղադրիչները իմաստային մերձավորություն ունեցող բառեր են և իրենց նշանակությամբ չեն հեռանում ամբողջ բարդության արտահայտած իմաստից, միայն բարդության մեջ ավելի խտացված են հանդես գալիս առանձին բաղադրիչների իմաստները, ինչպես՝ ան ու դող, ան ու ռաբսափ, ծափ ու ծիծաղ, լաց ու կռժ և այլն:

բ) Մարդկային կյանքն ու կենցաղային որոշ հարաբերություններ արտահայտող բարդ բառեր՝ ասուլիս, կերուխում, թուֆ ու մուր, ծեծ ու ջարդ, անց ու դարձ, ծաղր ու ծանակ, աղաչանգ-պաղատանգ և այլն:

Այս բարդությունների բաղադրիչներն իրենց իմաստներով կամ համանիշ են, կամ էլ սերտ կապված են միմյանց հետ, որոնք միանալով ամբողջական են դարձնում բարդության բաղադրիչներով արտահայտված հասկացությունը:

գ) Ազգակցական և ամուսնական կապեր արտահայտող բարդություններ: Սրանց բաղադրիչները նույնպես արտահայտում են ամուսնական ու ազգակցական կապեր, ինչպես, օրինակ՝ հայր ու մայր, հայր ու որդի, ազգ ու տոհմ, հարս ու փեսա և այլն:

դ) Զանազան առարկաների և երևույթների հավաքականություն արտահայտող բարդություններ. այս բարդությունների բաղադրիչներն ունեն բազմազան իմաստային ընդգրկում և բարդ բառերի մեջ չեն պահպանում իրենց իմաստները, այլ միասին նշանակում են մի ընդհանուր, հավաքական իմաստ: Ինչպես, օրինակ՝ տուն ու տեղ, վար ու ցանց, շենք ու շնորհք, հավ ու հիվ, աման-շաման, ալաս-փալաս, մարդ-մուրդ, ոսկոր-մոսկոր, հաց-մաց և այլն:

ե) Հոգնակիություն, բազմակիություն արտահայտող բարդություններ՝ պատան-պստառ, գունդ առ գունդ, խումբ-խումբ, փունջ-փունջ, շարք-շարք, դաս-դաս, գույնզգույն և այլն: Դժվար է նկատել, որ նշված բարդությունների բաղադրիչները միևնույն իմաստն ունեն և միանալով կարող են ցույց տալ հոգնակիություն, գործողության ձևը: Նման բարդություններում կարող են զուգադրվել ամենաբազմազան իմաստներ ունեցող գոյականներ:

զ) Գործողության ժամանակային ու տարածական հատկանիշ նշանակող բառեր. ինչպես, օրինակ՝ փողոց առ փողոց, տուն առ տուն, ֆաղաֆ առ ֆաղաֆ, ժամ առ ժամ, բոպե առ բոպե, գիշեր-ցերեկ, օր ու գիշեր: Օրինակները ցույց են տալիս, որ գործողության հատկանիշ արտահայտող բարդությունները կազմվում են ժամանակի և տարածական իմաստ ունեցող գոյականներով: Ընդհանրապես դոյական-դոյական կաղապարով կազմվում են հիմնականում գոյականներ, ինչպես առաջին շորս կետերում նշված բարդությունները՝ ան ու դող, թուփ ու մուր, հայր ու մայր, շենք ու շնորհք, հավ ու հիվ, վար ու ցանց և այլն: Իսկ մնացած երկու դեպքերում գոյականների զուգադրությամբ կազմվում են մակբայներ՝ շարք-շարք, դաս-դաս, փունջ-փունջ, գիշեր-ցերեկ, օր ու գիշեր, ֆաղաֆ առ ֆաղաֆ, ժամ առ ժամ և այլն:

2. Ածական-ածական կաղապարով սովորաբար կազմվում են նոր ածականներ և ցույց են տալիս առարկայի հատկանիշ, ինչպես՝ սուս ու փուս, վեհապանծ, ցաֆուցրիվ, ջերմաջերմ, մեղմանուշ, հիաստանչ և այլն:

Նկատելի է, որ նշված բարդությունների բաղադրիչները կամ նույն արմատի կրկնություններն են, կամ էլ իմաստային մերձա-

վորություն տնեցող բառեր են, որոնք, միանալով մեկ բառի մեջ, արտահայտում են.

Ա) Առարկայի հատկանիշ ցույց տվող բառի իմաստային սաստկացում. ինչպես՝ նոր-նոր, մեծ-մեծ, սուր-սուր, կլոր-կլոր, բարակ-բարակ և այլն: Ածականների բաղադրությամբ բառիմաստի սաստկացում արտահայտող բարդությունները շատ տարածված են հայերենում: Նման բարդությունների բաղադրիչները կարող են արտահայտել.

ա) Առարկաների արտաքին-ձևային հատկանիշներ. ինչպես՝ մեծ-մեծ, ծուռ-ծուռ, սուր-սուր, սև-սև և այլն:

բ) Առարկաների ներքին հատկանիշներ՝ տափ-տափ, թթու-թթու, փաղցր-փաղցր, դառը-դառը, դառնաղի և այլն:

բ) Մարդկանց հոգեկան, մտավոր-բարոյական և խառնվածքի հատկանիշներ՝ ուրախ-ուրախ, ուրախ-զվարթ, ուշիմ-ուշիմ, հրպարտ-հպարտ, լուռ ու մունջ և այլն: Նշված բարդությունների մեծ մասը կիրառվում է որպես մակբայ և ցույց է տալիս գործողության ձևը (ուրախ-ուրախ խոսել, ծուռ-ծուռ նայել, հպարտ-հպարտ փայլել և այլն):

գ) Գունային երանգներ. ինչպես, օրինակ՝ կարմրաշագանակադուլն, կարմրադարչնագույն, կապտականաչավուն, դեղնականաչավուն, դեղնաճեմակ և այլն: Այս բարդությունների բաղադրիչներն առանձին վերցրած արտահայտում են տարբեր դուլներ, որոնց զուգադրությունը ցույց է տալիս առարկայի մի նոր գունային հատկանիշ:

դ) Համի զուգորդումներ. ինչպես՝ փաղցրաթթվավուն, փաղցրմեղր, թթվադառնավուն, դառնափաղցրավուն, դառնաղի և այլն: Համի զուգորդումներ արտահայտող բարդությունների բաղադրիչները ցույց են տալիս առարկայի համը:

ե) Լեզուների անունների միացություններ՝ անգլո-ֆրանսերեն, հայ-ռուսերեն, ռուս-հայերեն, հայերեն-ֆրանսերեն, գերմաներեն-հայերեն և այլն: Ինքնին հասկանալի է, որ նշված բարդությունների բաղադրիչներն անվանում են առանձին լեզուներ:

3. Թվականների բաղադրությամբ կազմված բարդություններն արտահայտում են.

ա) Առարկայի թիվ, քանակ՝ տասնմեկ, ստսնճինգ, երեսուն-երկու, հարյուր փանճինգ և այլն:

բ) Առարկաների բաշխում թվային հավասար քանակով. ինչ-

պես՝ մեկ-մեկ, երկու-երկու, հինգ-հինգ, տասը-տասը, քսան-քսան և այլն:

դ) Առարկաների մերձավոր թիվ. ինչպես՝ մեկ-երկու, երկու-երեք, չորս-հինգ քսան-երեսուն, հիսուն-վաթսուն, վաթսուն-յոթանասուն և այլն: Այս և նման բարդությունների բաղադրիչները քանակական թվականներ են, որոնք միանալով կորցնում են իրենց կոնկրետ իմաստները և արտահայտում են մոտավոր թիվ:

4. Մակբայական բաղադրիչներ ունեցող բարդություններն արտահայտում են.

ա) Տարածական հարաբերություններ, որոնցում համադասական հարաբերությամբ միանում են տարածական հարաբերություններ արտահայտող բառեր, ինչպես՝ դեսուդեն, մեջ-մեջ, դեմդիմաց, դեմուդեմ, վեր ու վար, ներս ու դուրս և այլն:

բ) Գործողության կամ այլ հատկանիշի չափը, նույնպիսի իմաստ ունեն նաև այդ բարդությունների հոգավորիչները. ինչպես, յոթնակ՝ շատ—շատ, քիչ-քիչ, սակավ-սակավ, փոքր-ինչ, հազիվհազ և այլն:

դ) Գործողության ձևը ցույց տվող բարդ բառերի բաղադրիչները ևս արտահայտում են գործողության կատարման ձևը. ինչպես, օրինակ՝ արագ-արագ, զույգ-զույգ, ստեպ-ստեպ, կամաց-կամաց, առանձին-առանձին, շտապ-շտապ և այլն: Մակբայական բաղադրիչներով բարդություններով կազմվում են նոր մակբայներ:

5. Դերանուններով կազմված բարդություններն արտահայտում են.

ա) Առանձնության գաղափար. ինչպես՝ ես ու ես, ինձ ու ինձ, մենք ու մենք, քեզ ու քեզ, մեզ ու մեզ, ձեզ ու ձեզ և այլն:

Այս տիպի դերանվանական բաղադրությունների հոգավորիչները անձնական դերանուններն են և բարդության մեջ պահում են իրենց հիմնական իմաստը՝ դիմային հարաբերությամբ անձ ցույց տալը: Ըստ այդմ, բարդությունը մի դեպքում ցույց է տալիս, որ խոսողն ինքն իր հետ է առանձնանում (ես ու ես, ինձ ու ինձ) կամ առանձնանում է խոսելու պահին իր մոտ գտնվող անձանց հետ միասին (մենք ու մենք):

Մյուս դեպքում, երբ բարդության բաղադրիչները երկրորդ դեմքի դերանուններ են, ամբողջ բարդությունը ցույց է տալիս խոսակցի կամ նրան խոսելու պահին մոտ գտնվողների առանձնության գաղափար՝ քեզ ու քեզ, ձեզ ու ձեզ: Երրորդ դեմքի անձնա-

կան դերանուններով կազմված բարդությունները գործածական չեն արդի հայերենում:

բ) Հոգնակիություն, բազմակիություն (ինչ-ինչ, սա ու նա, այս ու այն, այս ու այդ, այլևայլ, ֆանի-ֆանի, ուրիշ-ուրիշ և այլն):

Ինչպես ցույց են տալիս օրինակները, առարկաների հատկանիշների բազմակիություն արտահայտող բարդությունների բաղադրիչները կարող են լինել ցուցական, հարաբերական և անորոշ դերանուններ: Երբ դերանվանական բաղադրությամբ բարդությունների բաղադրիչները անորոշ ու հարաբերական դերանուններ են (այլևայլ, ուրիշ-ուրիշ, ինչ-ինչ, քանի-քանի և այլն), ապա դրանք անորոշ կերպով ցույց են տալիս առարկա, հատկանիշ, իսկ երբեմն էլ կարող են ցույց տալ մոտավոր քանակ. ինչպես՝ այլ, ուրիշ, ֆանի բաղադրիչները՝ այլևայլ, ուրիշ-ուրիշ, ֆանի-ֆանի բարդություններում:

Դրանց կողքին ցուցական դերանուններով արտահայտված բաղադրիչներ ունեցող բարդությունների մեջ բաղադրիչները ցույց են տալիս.

ա) խոսողին տարածությամբ մոտ և ժամանակով խոսելու պահին մոտ կամ որպես այդպիսին մտածված առարկա, հատկանիշ (ինչպես, այս, սա բաղադրիչները այս ու այն, սա ու նա բարդություններում):

բ). Տարածությամբ խոսակցին մոտ և ժամանակով նրա խոսակից լինելու պահին մոտ կամ որպես այդպիսին մտածված առարկա, հատկանիշ. ինչպես՝ այս ու այդ բարդության այդ բաղադրիչը:

գ) Տարածությամբ առաջին և երկրորդ դեմքերից հեռու առարկա, հատկանիշ, ինչպես՝ այն բաղադրիչը այս ու այն, այդ ու այն բարդություններում: Իսկ ամբողջ կառուցվածքը երկու դեպքում էլ (թե՛ անորոշ ու հարաբերական և թե՛ ցուցական դերանուններով արտահայտված բաղադրիչներ ունենալիս) ցույց է տալիս անորոշ, մոտավոր քանակ, բայց այնպիսի հարաբերությամբ, որ բաղադրության իմաստից երևում է, որ խոսքը վերաբերում է մեկից ավելի առարկաների, հատկանիշների:

Պետք է նշել, որ դերանվանական բաղադրիչներով բարդությունները սահմանափակ թիվ են կազմում, իսկ եղածներն էլ հանդես են գալիս դերանունների համակարգում:

4. Ձայնարկություններով ու բնաձայնություններով կազմաված բարդություններում առկա է ձայնարկությամբ կամ բնաձայնությամբ արտահայտված բառիմաստի սաստկացում:

Դրանցում միմյանց հետ փոխհարաբերության մեջ են մտնում կամային և զգացական վերաբերմունք արտահայտող և բնաձայնական բառեր. ինչպես, օրինակ՝ ախ ու վախ, փսփսոց, դրխկդրխկոց, խշխշոց, սվսվոց և այլն: Այս կաղապարով կազմավում են գոյականներ:

5. Շարահյուսական տեսակետից համազոր բաղադրիչներ ունեն նաև բայ-բայ կաղապարով կազմված բարդությունները, որոնք հայերենում հայտնի են զուգադրական քայեռ անվանումով:

Վերջիններս երկու (երեմն էլ ավելի) գործողություն միասնաբար արտահայտող բայական բարդություններ են, որոնց բաղադրիչները իմաստային տեսակետից մերձենալով, այս կամ այն կերպ պահում են իրենց բառային իմաստները և արտահայտում են ամբողջական գործողություն՝ ներկայացնելով իմաստային ամբողջականություն: Զուգադրական քայեր կազմում են այն բայերը, որոնցով արտահայտված գործողությունների միջև անմիջական կապ գոյություն ունի և, դրանք, լրացնելով մեկը մյուսին, գիտակցվում են իբրև մեկ հասկացություն: Այս բայական բարդությունների բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունները պարզելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համադրվող բայերի իմաստին և այն բանին, թե նրանցով արտահայտված գործողությունների միջև ինչպիսի՞ հարաբերություն գոյություն ունի: Այսպես մոտենալով հարցին, կարելի է տարբերել բայական բաղադրիչներով բարդությունների հետևյալ խումբերը:

Ա) Բարդություններ, որոնք արտահայտում են շարժման գործողություն, սրանց մեջ էլ տարբերվում են հետևյալ ենթատեսակները.

ա) Բարդություններ, որոնց մեջ առաջին բաղադրիչը ցույց է տալիս շարժման, ուղևորման գործողություն, իսկ երկրորդը՝ այդ գործողության հետևանքը. ինչպես՝ անցնել-ընկնել, գալ-ընկնել, գնալ — ընկնել, ելնել-կանգնել, դնալ-կորչել, թռչել-ճասնել և այլն:

բ) Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչը ցույց է տալիս ուղևորման, շարժման գործողություն, իսկ երկրորդը՝ այդ

գործողության նպատակը<sup>41</sup>։ Ինչպես օրինակ՝ գնալ-բերել, գալ-գեկուցել, գնալ-նստել, գալ-տեսնել, վեր կենալ տեսնել և այլն։ Երկու դեպքում էլ առաջին բաղադրիչով արտահայտված գործողությունը նախապայման է երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության կատարման համար։

Բ) Զուգադրական բայեր, որոնց բաղադրիչները համանիշ գործողություններ են արտահայտում, իսկ ամբողջ բարդությունը արտահայտում է բաղադրիչների բայիմաստի սաստկացում<sup>42</sup>։ Այսպես, օրինակ՝ աղաչել-պաղատել, աչքել-զարմանալ, գերվել-տարվել, գոռալ-գռչել, գուգվել-գարգարվել, հիանալ-սքանչանալ, ճալվել-մաշվել, ջարդել-փշրել և այլն։ Սրանց շարքը պետք է դասել նաև այն զուգադրական բայերը, որոնք շնայած համանիշ բաղադրիչներ չունեն, բայց նրանցով արտահայտված գործողությունները շատ կապված են իրենց բնույթով։ Ինչպես՝ ուտել-խմել, երգել-պարել, ավել-թափել, գրել-կարդալ, ասել-խոսել, եփել-թափել և այլն։

Գ) Որոշ բարդություններ արտահայտում են գործողության բազմակիություն։ Այդպիսի բարդությունների առաջին բաղադրիչը որևէ բայ է, երկրորդ բաղադրիչը նույն բայի կրկնավոր ձևն է<sup>43</sup>։ Այսպես, օրինակ՝ գոռալ-գոռգոռալ, դռալ-դռդռալ, տաշել-տաշտաշել շափել-շափափել, խաբել-խաբխաբել, ծախել-ծախծախել, ճվալ-ճվճվալ և այլն։

Դ) Զուգադրական բայեր, որոնք արտահայտում են երևույթների աստիճանական զարգացում։ այդպիսի բարդությունների կազմի մեջ մտնող բաղադրիչներից երկրորդը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը հանդիսանում է առաջին բաղադրիչով արտահայտված գործողության հաջորդ էտապը։ Ինչպես՝ ծել-ծաղկել, ծնվել-մեծանալ, չափել-ձևել, վարել-ցանել, լցվել-թափվել, փնտրել-գտնել, սովորել-ավարտել և այլն։

Ե) Մի ջարք զուգադրական բայեր արտահայտում են գործողության վախճանականություն։ Սրանց առաջին բաղադրիչն արտահայտում է որևէ գործողություն, երկրորդ բաղադրիչը՝ այդ գործողության վախճանը<sup>44</sup>։ Ոչ մեծ տարածում գտած այսպիսի բայական զուգադրությունների երկրորդ բաղադրիչում հանդես են

41 Հմմտ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 192։

42 Հմմտ. Նույն տեղում, էջ 195։

43 Հմմտ. Նույն տեղում, էջ 196։

44 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 193։

գալիս պրծնել, վերջացնել, ավարտել բայերը. ինչպես՝ ծախսել-վերջացնել, բերել-պրծնել, ուտել-պրծնել, խմել-վերջացնել, կար-լավ-ավարտել, գրել-պրծնել և այլն:

2) Զուգադրական բայեր, որոնք արտահայտում են տեղափոխության և դրանց որոշակի ուղղվածության իմաստներ: Բայական այս զուգադրությունների երկրորդ բաղադրիչն արտահայտում է տեղափոխության գործողություն, իսկ առաջին բաղադրիչը՝ այնպիսի գործողություն, որն անցնում է տեղափոխվող առարկայի վրա: Այսպես, օրինակ՝ բռնել-բերել, բռնել-տանել, ծեծել-բերել, փախցնել-տանել և այլն:

Բացի զուգադրական բայերից, բայ-բայ կաղապարով են կազմվում նաև բայական կրկնավորները, որոնք լինում են բնաձայնական (թշթշալ, ֆլֆլթալ, ծվծվալ, սվսվալ, տզտզալ, նըվ-նըվալ, մկմկալ և այլն) և ոչ բնաձայնական. ինչպես՝ ֆաշֆշել, մարմրել, ծակծկել, ձգձգել, տաշտշել, ծալծլել, ծախծխել, խարխրել, քափքփել, ցլցլալ, ջոկջկել և այլն: Դրանք արտահայտում են բաղադրիչների նշանակած գործողության բազմակիություն, տևականություն, ուժգնություն:

Փաստերի քննությունը ցույց է տալիս, որ բայ-բայ կաղապարով կազմված բարդ բառերը համալրում են բայական համակարգը և զգալի տեղ են գրավում ժամանակակից հայերենի բայական բառապաշարի մեջ: Դրանցով արտահայտվում են գործողության կամ եղելության կրկնություն, բազմապատիկություն, ուժգնություն, տևականություն, զարգացում, ուղղվածություն և այլ նշանակություններ:

Ինչպես երևում է ամբողջ վերոհիշյալից, համադասական հարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդությունները կազմվում են գոյականների, ածականների, մակբայների, թվականների, բնաձայնությունների, ձայնարկությունների, բայերի ու դերանունների զուգադրությամբ. ընդ որում, հիշյալ բարդությունների կազմության մեջ ավելի հաճախագեղ են գոյականները, ածականները, մակբայները, բայերը:

Համադասական հարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդությունները տարբեր կերպ են մասնակցում առանձին խոսքի մասերի հարստացմանը:

Բարդությունների այս տեսակով ամենից շատ կազմվում են մակբայներ: Այս տեսակետից մակբայներին զիջում են ածականները, գոյականները, բայերը, այնուհետև թվականները, իսկ դերանունները խիստ սահմանափակ թիվ են կազմում:

Համադասական հարաբերությամբ կապված բաղադրիչներ ունեցող բարդությունների կառուցվածքային և իմաստային սոսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց բաղադրիչները սովորաբար նույն խոսքի մասն են ներկայացնում, որոնք հանդես են գալիս ուղիղ ձևերով. բաղադրիչների թեքված ձևերով կիրառությունները տիպական չեն նշված բարդ բառերի համար:

Օրինակներ՝ առեռուր, անցուդարձ, լայրուծի, ձյուն-ձմեռ, ճավ ու ճիվ, գիշեր-ցերեկ և այլն:

Մյուս կողմից, շատ ավելի հեշտ է հիշյալ բարդությունների շարահյուսական փոխակերպներ տալը՝ բաղադրիչների ստորադասական հարաբերությամբ կապված բարդ բառերի համեմատությամբ:

Այսպես՝ լուսապայծառ բարդության շարահյուսական փոխակերպը կլինի լուսավոր և պայծառ, Խաբադալուկ→Խաբուր և դալուկ, ճիասփանչ→ճիաճալի և սփանչելի, վայելչագեղ→վայելուչ և գեղեցիկ և այլն: Իսկ առեռուր, կեր ու խում, գիշեր-ցերեկ, գուգվել-գարդարվել և նման այլ բառերի շարահյուսական փոխակերպները ինքնըստինքյան հասկանալի են, քանի որ դրանք ներկայացնում են բառակապակցություններ, որոնք մեկ բառի նշանակություն են ստացել:

Դրան հակառակ, ստորադաս բաղադրիչներով բարդ բառերի շարահյուսական փոխակերպներն արտահայտելն ավելի դժվար է (շատ դեպքերում դրանք երկակի են լինում). ինչպես՝ թռիչքուղի→թռիչքի ուղի, թռիչքային ուղի, գվարթաձայն→զվարթ ձայնով, զվարթ ձայն ունեցող, ինֆնարովս→իրենից բխող, ինքն իրեն բխող, դրամարկդ→դրամի արկդ, դրամի համար նախատեսված արկդ և այլն:

#### ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորադաս բաղադրիչներով բարդությունները զգալի տեղ են գրավում հայերենի բառապաշարում: Դրանցում առաջին բաղադրիչը լրացնում է երկրորդի իմաստը: Ընդ որում, գերադաս բաղադրիչը կարող է լինել անվանական կամ բայական: Առաջին դեպքում բարդության բաղադրիչների կազմությունը հիշեցնում է անվանական բառակապակցություն՝ կախյալ որոշիչ, հատկացուցիչ բաղադրիչներով, իսկ երկրորդ դեպքում՝ բայական բառակապակցություն, ուր կախյալ բաղադրիչները խնդիրներն ու պարա-

գանձերն են, Ստորագաս բաղադրիչներով բարդությունների գերադաս և կախյալ բաղադրիչների միջև կարող են լինել գրեթե այն բոլոր հարաբերությունները, որ կան բառակապակցությունների բաղադրիչների միջև:

#### Անվաճառական գերադաս բաղադրիչներով բարդ բառեր

Այս բարդությունների մեջ գերադաս բաղադրիչներն արտահայտվում են գոյականով, իսկ ստորագասները՝ տարբեր խոսքի մասերով: Այժմ տեսնենք թե ինչպիսի ենթատեսակներ ունեն անվաճառական գերադաս բաղադրիչներով բարդ բառերը

#### Որոշիչ-որոշյալի փոխհարաբերությամբ բաղադրիչներով բարդ բառերը ժամանակակից հայերենում

Անվաճառական գերադաս բաղադրիչներով բարդությունների մեջ զգալի տեղ են գրավում որոշիչ որոշյալի<sup>45</sup> շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդ բառերը

Այս տիպի բարդությունների վերջին հզորը սովորաբար գոյական է, իսկ առաջին բաղադրիչը կարող է արտահայտված լինել գոյականով, ածականով, թվականով, դերանունով, դերբայով, որոնք լրացնելով երկրորդ բաղադրիչին, արտահայտում են վերջինիս ցույց տված առարկայի այս կամ այն հատկանիշը

Բաղադրիչների որոշիչ-որոշյալի հարաբերություն ունեցող բարդությունների որոշվող (երկրորդ) բաղադրիչը իմաստային տեսակետից գերադաս է առաջին բաղադրիչի նկատմամբ և ցույց է տալիս հասկացությունների այն շրջանակը, որին պատկանում են ամբողջ բարդությամբ արտահայտված ավելի նեղ ժապավով հասկացությունները: Այլ կերպ ասած, բարդության հիմնական բաղադրիչը հաճախ ունենում է լայն, ընդհանրացնող իմաստ՝ արտահայտելով ավելի լայն հասկացություն, քան ամբողջ բարդ բառի արտահայտած հասկացությունն է: Որոշող հասկացությունն էլ (բարդության առաջին բաղադրիչը) կարող է ունենալ ընդհանուր, վերացական նշանակություն, բայց այդ ընդհանրությունը

<sup>45</sup> Շարահյուսական մակարդակի տերմինները հասկանալ պայմանականորեն, քանի որ զործ ունենք ոչ թե լիարժեք բառակապակցությունների, այլ՝ բարդության բաղադրիչների հետ:

կրում է այլ բնույթ, այնքան, որքան այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե շատերի համար ընդհանուր հատկանիշի հասկացությանը, այլ այն հատկանիշին, որը կարող է որևէ տեսակետից բնորոշել հասկացությունների մի ամբողջ շարք, կոնկրետացնելով վերջիններիս իմաստը և նեղացնելով դրանց ծավալային ընդգրկումը: Այսպես, ճաշասենյակ բարդության երկրորդ բաղադրիչը ցույց է տալիս, որ տվյալ առարկան, որն արտահայտված է բարդության մ, պատկանում է սենյակների դասին, իսկ առաջին բաղադրիչը նշում է տվյալ սենյակի՝ ճաշելու համար նախատեսված լինելը:

Հիշյալ բարդությունների ձևաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշել՝ որոշյալ ընդհանուր կաղապարի մեջ առանձնացնել մի քանի մասնակաղապարներ<sup>46</sup>, որոնցից են.

ա) Գոյական + գոյական կաղապար, որով կազմված բարդություններում գոյականով արտահայտված առաջին բաղադրիչը կատարում է որոշիչի պաշտոն և ցույց է տալիս որոշյալի որևէ հատկանիշը: Այսպես, օրինակ՝ ցախավել, արծաթավարս, լուսաստղ, երկաթուղի, կինոնկար, ֆաբաֆ, ֆաբսիտ, տուն-քանդառան, գայլխոտ և այլն: Գոյական որոշիչ ունեն նաև մի շարք բարդություններ, որոնք բառապատճենումներ են, իսկ առանձին դեպքերում նաև փոխառություններ, ինչպես՝ ցուցանանդես-վաճառք, ֆիլմ-օպերա, բժիշկ-թերապևտ, կինոթատրոն, վագոն-ռետուրան և այլն:

Գոյականով արտահայտված որոշող բաղադրիչ ունեցող բարդություններն իրենց քանակով խիստ զիջում են ածականով արտահայտված որոշիչներն ունեցող բարդություններին:

բ) Շատ տարածված են ածական + գոյական բաղադրության մ բարդությունները, որոնց բաղադրիչները նույնպես նախորդների նման կապված են որոշիչ-որոշյալ հարաբերությամբ: Ընդ որում, նրանցից առաջինն արտահայտում է առարկայի որևէ հատկանիշ, իսկ երկրորդը՝ առարկա կամ առարկայացված հասկացություն, որն ունի առաջին բաղադրիչով արտահայտված հատկանիշը: Այսպես, օրինակ՝ գանգրաներ, խտադեմ, բաբեխիդ, լայնաթիկունք, բաբեձև, բթամիտ, սրամիտ և այլն:

Ածական որոշիչ ունեցող բարդություններում հնարավոր է, որ նույն բառը որպես որոշիչ հանդես գա մի շարք բարդություննե-

<sup>46</sup> Գ. Զաքարյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 115:

րում, ինչպես՝ սևահեր, սևամորուք, սևապոչ, սևազգեստ, սևահոգ, սևամորթ, սևասիրտ և այլն:

Այս երևույթը բացատրվում է ածականի լայն իմաստային ընդգրկմամբ, որը հնարավոր է դարձնում միևնույն ածականի զուգորդումը տարբեր գոյականների հետ, իսկ այդ նշանակում է, որ միևնույն ածականի արտահայտած հատկանիշը կարող են ունենալ տարբեր առարկաներ: Այսպես՝ նուրբ կարող է լինել դեմքը (ներբադեմ), կազմվածքը (ներբակազմ), իրանը (ներբիրան) և այլն:

Մյուս կողմից, նույն բաղադրիչի տարբեր բարդություններում հանդես գալը վկայում է այն մասին, որ տարբեր հասկացություններ ունեն ընդհանուր հատկանիշներ: Որքան շատ է միևնույն բառը հանդես գալիս որպես որոշիչ, այնքան լայն է այն հասկացությունների շրջանակը, որ բնորոշվում են նույն հատկանիշով:

Հնարավոր է նաև, որ միևնույն որոշյալը լինի բարդության հիմնական բաղադրիչ տարբեր բարդ բառերում և բնորոշվի տարբեր որոշիչներով. ինչպես, օրինակ՝ նավ բառով կազմվում են մի շարք բարդություններ (տիեզերանավ, սուզանավ, մոտորանավ, օդանավ, շոգեմուկ և այլն), սենյակ բառով (ննջասենյակ, հյուրասենյակ, նաշասենյակ և այլն):

Այս և նախորդ դեպքը վկայում են որոշիչ+որոշյալ կաղապարի լրացուցիչ բառակազմական հնարավորությունների մասին և ավելի ճկուն են դարձնում բառաբարդման տեխնիկան:

գ) Բարդության գոյականով արտահայտված բաղադրիչի որոշիչը կարող է լինել թվական և արտահայտել երկրորդ բաղադրիչով նշանակած առարկաների, երևույթների քանակը. ինչպես՝ միամիտ, միադեմ, երկսեռ, երկանիշ, եռանալոռ, հնգաթև, հնգամարտ, վեցնիստ և այլն:

դ) Որոշիչ—որոշյալ շարահյուսական հարաբերությամբ են կազմված նաև դերանուն+գոյական կաղապարով կազմված մի շարք բարդությունների բաղադրիչները, որոնցից դերանունով արտահայտված բաղադրիչը (երբ այն ցուցական դերանուն է) կարող է մատնացույց անել երկրորդ բաղադրիչով նշանակված առարկաները, երևույթները, ինչպես, օրինակ՝ այդօրինակ, այդժամ, այդկերպ, այսօր, այդտեղ և այլն: Իսկ երբ բարդության որոշիչ բաղադրիչները անորոշ ու հարաբերական դերանուններ են, ապա այդ դեպքում առարկաների և որպես այդպիսին մտածված երևույթների հատկանիշները ցույց են տրվում:

վում անորոշ կերպով. ինչպես՝ այլադեմ, այլածև, այլասեռ, ինչկերպ, ուտեղ, ուշափ և այլն

ե) Արդի հայերենում կենսունակ են նաև բայահիմք + գոյական և դերբայ + գոյական կառուցվածքն ունեցող բարդությունները (ննջասենյակ, վառելափայտ, գրատախտակ, խաղաճապարհակ, խաղադաշտ, մարզասահ, սալաճատակ, ծխախոտ և այլն): Նման բարդություններում մենք գործ ունենք տարբեր բայահիմքերի և անորոշ դերբայի սեռական հոլովի իմաստների հետ, որոնք բաղադրության մեջ ամենատարբեր կողմերից բնութագրում են բազմազան առարկաներ:

Ինչպես երևում է վերևում շարադրվածից, որոշիչ + որոշյալ ընդհանուր կաղապարով կազմված բարդությունների մեջ զգալի թիվ են կազմում ածական + գոյական կաղապարով կազմված բարդ բառերը: Դա բացատրվում է գոյականի հետ ածականի շատ ակտիվ զուգորդելիությամբ:

Որոշիչ + որոշյալ կաղապարով կազմվում են.

ա) նոր գոյականներ՝ վերնագգեստ, վերնաշապիկ, վրանթիկնոց, տուն-թանգարան, ճեղքվյակ, ճեղքամարտ և այլն:

բ) Ածականներ, ինչպես՝ ֆեֆշաթև, գեղաժպիտ, լայնեզր, դառնահամ, կարմրատուտիկ, օսկեվարս, փափուրտ, շաբամիտ, բարեսիրտ և այլն:

գ) Դերանուններ՝ այստեղ, այդտեղ, այնտեղ, այսչափ, այդչափ, այնչափ և այլն:

Որոշիչ + որոշյալ բառակազմական կաղապարն ունի ընդհանուր իմաստային նշանակություն. դա այն է, որ ուսումնասիրվող կաղապարով կազմված բարդություններում առաջին բաղադրիչը կոնկրետացնում է երկրորդ բաղադրիչի արտահայտած իմաստը, որն ավելի լայն է, քան առաջին բաղադրիչինը: Որոշիչը բնութագրում է որոշյալին այս կամ այն (ներքին հատկանիշի, արտաքին հատկանիշի) տեսակետից: Նման բարդություններում առաջին բաղադրիչը ցույց է տալիս, թե ինչ տեսակետից է դիտվում, առանձնացվում տվյալ առարկան, երևույթը, որի հետևանքով բարդ բառն ստանում է նոր իմաստային երանգավորում, քան ունեն նրա բաղադրիչները, և արտահայտում է այլ հասկացություն: Հիմնականում որոշիչ-որոշյալ շարահյուսական փոխհարաբերության մեջ բաղադրիչներով բարդություններն արտահայտում են հատկանիշներ և այդ հատկանիշները կրող առարկաներ՝ լայնա-

թիկունք, սևագգեստ, կապուտաշյա, միակն, երկսեռ, վերնատուն, վերնագգեստ և այլն:

Որոշիչ-որոշյալ կապակցությամբ բաղադրիչներ ունեցող բարդությունների մեջ առաջին բաղադրիչը մի ընդհանուր իմաստային դաշտ է ներկայացնում, որը կարելի է անվանել հատկանիշի դաշտ: Հնարավոր է առաջին բաղադրիչը ներկայացնել ավելի նեղ ընդգրկում ունեցող իմաստային դաշտերով, որոնք կարող են ցույց տալ հատկանիշների տարատեսակներ: Ընդ որում, որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդության կազմիչները տարբեր կերպ են կապվում իմաստային դաշտերի հետ, և բոլոր բարդությունները չէ, որ կարող են ունենալ իմաստային դաշտերի հեշտությամբ բաժանվող բաղադրիչներ: Իմաստային դաշտերի հեշտությամբ բաժանվող խմբերի մեջ կան մի շարք օրինաչափություններ: Այսպես, ուսումնասիրվող կադավարի մեջ ընդգրկվող բարդությունների առաջին բաղադրիչները կարող են բնութագրել առարկան արտաքին հատկանիշների տեսակետից: Դրանք կարող են պատկանել՝

ա) գույների դաշտին և բնութագրել իրենց գերադաս անդամը ներկայացնող առարկան գույնի տեսակետից. ինչպես՝ կարմրաթև, դարչնագույն, մեմուկակուրծք, դեղնավարս, դեղնամորթ, կապուտաշյա, կարմրամեղ և այլն:

բ) Մավալի դաշտին և արտահայտել առարկայի կամ երևույթի ծավալային հատկանիշներ. ինչպես, օրինակ՝ լայնաթիկունք, մեծամարմին, մեծամիտ, լայնեզր, քարձրավանդակ, քարձրահարկ, նաստամարմին, փոքրամարմին, վիթխարածավալ և այլն:

գ) Բնութագրել առարկան կամ երևույթը արտաքին այլևայլ հատկանիշների տեսակետից. ինչպես, օրինակ՝ սիրունադեմ, սիրունատես, գեղեցկադեմ, գանգրաներ, գեղաժպիտ, գեղատեսիլ, սրածայր, ծուռքաչ և այլն:

Բարդ բառերի կազմի մեջ մտնող մի շարք որոշիչներ կարող են ցույց տալ առարկաների ներքին հատկանիշներ. ինչպես՝ քարեսիրտ, քարեհոգի, քարեհամբույր, ազնվահոգի, ազնվասիրտ, չարամիտ, ախարություն, սլաղարություն և այլն:

Մանրություն—Բարի բառը կարող է ունենալ որոշ բարդություններում նաև լավ իմաստը, որտեղ այն պահպանել է իր հին նշանակությունը, ինչպես՝ քարեծև, քարեհնչուն, քարեծսլիտ, քարետես:

Առարկաների ներքին հատկանիշներ ցույց տվող բաղադրիչներ ունեցող բարդությունների մի այլ խմբի մեջ առաջին բա-

ղաղրիչը կարող է պատկանել համի իմաստային դաշտին և ցույց տալ որոշվող առարկայի ինչպիսի համ ունենալը: Այսպես, օրինակ՝ անուշահամ, ֆաղցրահամ, թթվահամ, դառնակաթիլ. դառնակորիզ, թթվասեր և այլն:

Բարդության մի շարք որոշիչ բաղադրիչներ կարող են մըտնել քանակ ցույց տվող իմաստային դաշտի մեջ. բարդության հիշյալ բաղադրիչը կարող է արտահայտել առարկայի քանակական հատկանիշ, ինչպես՝ ճնգաթե, ճնգամյակ, եռանկյուն, վեցնիստ, երկկողմ, յոթնամյակ, ճնգամարտ և այլն:

Ուրիշ որոշիչներ բնութագրում են առարկան գտնվելու տեղի տեսակետից՝ վերնաշաղիկ, վերնահարկ, ներքնաշաղիկ, ներքնահարկ, մեշտեղ, բարձրավանդակ, բարձրահուն, վերնաշերտ և այլն:

Ծթե խոսելու լինենք որոշիչ+որոշյալ կաղապարով կազմված բարդությունների իմաստային առանձնահատկությունների մասին, ապա պետք է նշել, որ դրանք կարող են ունենալ բաղմապիսի նշանակություններ, որոնք ընդհանուր կերպով կարելի է ներկայացնել այսպես.

1. Առարկաներ նշանակող բարդություններ:

2. Առարկաների հատկանիշներ նշանակող բարդություններ:

Առարկաներ ցույց տվող բարդություններն իրենց հերթին կարող են ունենալ հետևյալ ենթատեսակները.

ա) Թանձրացական հասկացություններ արտահայտող բարդություններ՝ գայլխոտ, տուն-թանգարան, վառելափայտ, հյուրասենյակ, վերնագգեստ, բոխիճուղի, կինոնկար, գաղթօջախ, թթվասեր և այլն:

բ) Վերացական հասկացություններ արտահայտող բարդություններ. ինչպես, օրինակ՝ ճնգամյակ, կիսամյակ, եռամսյակ, ճնգամարտ, բոնցֆամարտ, ճեծանվավազֆ և այլն:

Առարկաների հատկանիշներ ցույց տվող բարդություններն արտահայտում են.

ա) Առարկաների ձևային հատկանիշներ՝ ծուրաթ, սրածայր, լայնաթիկունֆ, հաստաքազուկ, գնդածե և այլն:

բ) Գունային և համի հատկանիշներ. ինչպես՝ սևամորթ, արյունագույն, կարմրաթե, ֆաղցրամարտ, անուշահամ, մեղրահամ, դառնակորիզ, թթվահամ և այլն:

դ) Մարդկանց մտավոր-բարոյական հատկանիշներ. ինչպես՝ ֆառսիք, սրամիտ, ֆաղցրալեզու, բթամիտ, բացսիրտ, մեծահոգի, մեծամիտ, փոքրոգի և այլն:

ե) Քանակական հատկանիշ. ինչպես, օրինակ՝ ճնգաթև, երկանդամ, վեցնիստ, եռանկյուն, եռանատուր և այլն:

զ) Հատկանիշ՝ տարածական ու ժամանակային հարաբերություն. ինչպես՝ այստեղ, այնտեղ, այդտեղ, նույնտեղ, այսժամ և այլն:

է) Բարդությունն արտահայտում է հատկանիշ անորոշ կերպով. ինչպես, օրինակ՝ այլաձև, այլակերպ, այլադեմ, այլասեռ, այլազգի, այլացեղ և այլն:

Որոշիչ-որոշյալ շարահյուսական փոխհարաբերություններ բաղադրիչներով բարդությունները կարող են ունենալ իրենց շարահյուսական փոխակերպները, որոնք շատ հաճախ արտահայտվում են բարդ ածանցավոր ու նկարագրական ձևերով: Այսպես, օրինակ՝ ծխախոտ→ծխելու խոտ, բարեսիրտ→բարի սրտով, բարի սիրտ ունեցող, ճնգաթև←հինգ թևեր ունեցող, եռանկյուն←երեք անկյուն ունեցող, երեք անկյունանի, ձյունագագաթ→ձյունապատ գագաթ ունեցող և այլն:

Պետք է նշել, որ բարդ բառերի ու նրանց համապատասխան բառակապակցությունների (եթե դրանք կան) իմաստային մերձավորությունը բացահայտելիս չկա մի որևէ օբյեկտիվ չափանիշ: Այդ իսկ պատճառով նման դեպքերում միշտ դիմում ենք ինտուիցիային, ըստ որում, բարդ բառերի շարահյուսական փոխակերպները կարող են լինել մեկից ավելի:

Բերենք օրինակներ.

Սակավաջուր—սակավ շուր ունեցող, սակավ ջրով, էծանագին→էծան գնով, էծան գին ունեցող, նրբակազմ—նուրբ կազմով (կազմվածքով), նուրբ կազմվածք ունեցող, դառնաճամ→դառը համ ունեցող և այլն: Իսկ մեծամիտ, դառնածպիտ, ֆաղցրալիզու, առատաձեռն, առատասիրտ, պաղարյուն, տափարյուն, բարձրափիթ և այլ բարդությունների դեպքում մենք բարդ բառի իմաստը արտահայտած շենք լինի, եթե բավարարվենք նրանց շարահյուսական ուղղակի փոխակերպներով: Ինչպես՝ պաղարյուն→պաղ արյուն ունեցող, պաղ արյունով, տափարյուն→տաք արյուն ունեցող, տաք արյունով, մեծամիտ→մեծ մտքով, բարձրափիթ→բարձր քթով և այլն:

Այս բարդությունների մեջ կատարվել են բաղադրիչների իմաստային փոփոխություններ, այդ իսկ պատճառով հիշյալ բարդ բառերի իմաստները ճիշտ արտահայտելու համար անհրաժեշտ է տալ յուրաքանչյուրի համար լրացուցիչ բացատրություններ:

Այսպես՝ բարձրափիթ բառի իմաստն է քիթը բարձր, գոռոզ,

Հպարտ, մեծամիտ: Առատաձեռն—առատորեն բաշխող, տվող,  
լիաձեռն (ԺՀԼԲԲ): Առատասիրտ—սրտաբաց, առատաձեռն.  
(ն. տ.): Բարեխիղճ—պարտաճանաչ, ճշտապահ (ն. տ.):

Նման փաստերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն  
եզրակացության, թե միշտ չէ, որ բարդ բառին զուգահեռ կա-  
րելի է օգտագործել համապատասխան բառակապակցությունը:  
Ի դեպ պետք է նշել, որ հաճախ զուգահեռ լինում են բարդ բառը  
և բառակապակցությունը, բայց հաճախ նախընտրվում է բարդու-  
թյունը՝ ոճական նպատակներով, ինչպես նաև տնտեսման սկզբ-  
բունքի պահանջով, որը գործում է լեզվում:

Իմաստափոխված բարդությունների մեջ զգալի տեղ են գրա-  
վում մարդկանց, կենդանիների, բույսեր անվանող բարդությու-  
ները: Ընդ որում, այդ անվանումները արվում են նրանց այս  
կամ այն հատկանիշի (հագուստի, բնավորության, մարմնի որևէ  
մասի, գույնի և այլնի) հիման վրա և ունենում են որոշակի սուբ-  
յեկտիվ երանգավորում: Նշենք դրանցից մի քանիսը՝ բացբերան,  
ծուռոտ, ծուռթաթ, կարմրատոտիկ, երկաբալանջ, սևապոչ,  
կարմրափորիկ, ճեղմակակուրծք, կարճատոտիկ, մկրատապոչ, եր-  
կաբազի և այլն: Սրանք հատկապես օգտագործվում են խոսակ-  
ցական լեզվում և ունեն ոճական նշանակություն:

Վերաիմաստավորված բարդությունները արտահայտչական  
միջոց են նաև գեղարվեստական խոսքում:

Մեր գրական լեզվում որոշիչ+որոշյալ կաղապարով կազ-  
մված բարդ բառերի ոճական կիրառությունները հավաստելու  
նպատակով հիշատակենք բնագրային մի քանի օրինակներ:

Բայց այն ձորում, ամեն տարի, ամեն գարուն բացվելուն,  
երկու ծաղիկ են հայտնվում՝ երկու կակաչ տխրանուն՝ (ՆՇ):

Այն օրվանից ախարհ եկան կակաչները սրտասև... (ՆՇ):

Ձյունաթափիչ թաց աչքերից աղբյուրներ է հանում նա... (ՆՇ):

Ու վեր ելավ Սիամանթոն իր հոտի հետ դառնաձայն... (ՆՇ):

Բայց այս գարուն Զարեհ բեկն է Մովսեսարի մի լանջին  
Իր յոթնածուխ յուրտը զարկել ինչպես իր սև յափունջին (ՆՇ):

Արագածի, Արարատի հայացքի դեմ սգավոր,  
Սև տուֆակերտ մի պալատի տրամաճանդես դահլիճում,  
Պառկած էր նա... (ՊՍ):

Ա՛խ, վարդապետ, գութ է հայցում  
Տխրադալուկ ամբողջ մի ազգ

Քո սեասուզ սուրբ բերանով.

— Տեր, ողորմեա... (ՊՍ):

Որոշիչ+որոշյալ կաղապարով բարդությունների մեջ կարող է իմաստափոխվել.

ա) Առաջին բաղադրիչը. ինչպես՝ ֆաղցրալեզու, դառնածու-պիտ, տխրանում, ձյունաքարթիչ, դառնածայն, պաղբոց, ւ.րտմա-ճանդես, սեասուզ և այլն:

բ) Երկրորդ բաղադրիչը, որը ավելի քիչ է հանդիպում. ինչ-պես՝ յոթնածուխ, գաղթօջախ և այլն:

դ) Ամբողջ բարդությունը, ինչպես՝ պարզերես, բացճակատ, երկարականգ, բացբերան, ծակաչի, սլաղարյուն, տափարյուն և այլն:

Բոլոր այն դեպքերում, երբ գործ ունենք որոշիչ-որոշյալ կա-պակցությամբ բաղադրիչներով բարդությունների հետ, միշտ ի-մաստային ծանրաբեռնվածությունն ունենում է որոշվող բաղադ-րիչի վրա, իսկ որոշող բաղադրիչը սահմանափակվում է որոշվող բառի հատկանիշը ցույց տալով:

Ինչպես կարելի է համոզվել բերված փաստերի վերլուծու-թյունից, որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերությամբ բա-ղադրիչներ ունեցող բարդությունների մեջ որոշիչները կատարում են նույն դերը, ինչ որ սովորական բառակապակցություններում: Դրանք ցույց են տալիս որոշյալի (որը սովորաբար որևէ գոյա-կան է լինում՝ կոնկրետ կամ վերացական իմաստով) այս կամ այն հատկանիշը:

Որոշիչ+որոշյալ կաղապարով կազմված բարդ բառերը կենսունակ են ժամանակակից հայերենում, նրանցով կազմվել և կազմվում են բազմաթիվ բարդություններ, որոնք հանդես են դա-լիս գոյականների, ածականների, դերանունների համակարգում և հարստացնում են հայերենի բառապաշարը:

#### • Հատկացուցիչ—հատկացյալ կաղապարով բարդ բառեր

Ժամանակակից հայերենում կենսունակ են նաև հատկացու-ցիչ—հատկացյալ շարահյուսական փոխհարաբերությամբ բաղադ-րիչներ ունեցող բարդ բառերը: Ստորադաս բաղադրիչներով այս բարդություններում իմաստային միջուկը դարձյալ երկրորդ ան-

դամն է՝ հատկացյալը, որը սովորաբար արտահայտվում է գոյականով, իսկ բարդություն առաջին բաղադրիչը՝ հատկացուցիչը, ցույց է տալիս գոյականով արտահայտված հատկացյալի վերաբերումը, պատկանելությունը մի այլ առարկայի, որը ներկայացնում է հատկացուցիչը: Այսպես, օրինակ՝ առյուծաբաշ, սառալանջ, սառցաբեկոր, քեատակ և այլն: Այս կաղապարով կազմված բարդություններն իրենց արդյունավետությամբ զիջում են որոշիչ+որոշյալ կաղապարով կազմված բարդություններին, ուստի և ավելի պակաս թվով իմաստային խմբեր են պարունակում: Հստ առաջին բաղադրիչի արտահայտած իմաստի, հատկացուցիչ+հատկացյալ կաղապարով կազմված բարդությունները կարելի է մոտավորապես խմբավորել հետևյալ կերպ.

ա) Շատ բարդություններում առաջին բաղադրիչներն իրենց արտահայտած իմաստով մտնում են բույսերի անունների դաշտի մեջ: Նման բարդությունների երկրորդ բաղադրիչներն արտահայտում են որևէ առարկա կամ որպես այդպիսին դիտված հասկացություն, որը վերաբերում է բուսական աշխարհի այս կամ այն տեսակին: Ինչպես, օրինակ՝ դդմակուրիգ, վաղաքերթ, ծաղկաքերթիկ, ծաղկափռի, ծառաբուն, նաբեջանյութ և այլն: Այս դեպքում գոյականների բաղադրությամբ կազմվում են նոր գոյականներ, որոնք անվանում են բույսերի զանազան բաղադրուցիչ մասեր:

բ) Հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներով կազմվում են նաև մի շարք բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները կենդանիների անուններ են, իսկ երկրորդ բաղադրիչները, ինչպես և ամբողջ բարդությունը, մատնանշում են այդ կենդանիներին վերաբերող զանազան առարկաներ ու երևույթներ: Ինչպես, օրինակ՝ աղվեսաձագ, առյուծակուրյուն, աղվեսագի, աղավնատուն, ագռավաձագ, ագռավաբաժին, ագռավակտուց և այլն:

Փոխաբերական իմաստով գործածվելիս, ամբողջ բարդությունը կարող է արտահայտել տվյալ կենդանուն բնորոշող տարբեր առանձնահատկություններ, որոնք վերագրվում են նաև ուրիշ առարկաների, անձերի. ինչպես՝ առյուծասիրտ, աղավնասիրտ, աղվեսաբուն, կառապնավիգ, աղավնակերպ, ագռավակերպ, ագռավաբաժին և այլն:

գ) Մի շարք բարդությունների առաջին բաղադրիչներն անվանում են մարդու և կենդանիների մարմնի մասեր, իսկ երկրորդ

բաղադրիչները՝ դրանց հետ կապված զանազան հասկացություններ, ինչպես, օրինակ՝ սրտամկան, ատամնացավ, ոսկրածուծ, ոտնաքաթ, գլխացավ, ակնախոռոչ, ականջակոճակ և այլն:

Նման բարդ բառերը նշանակում են մարդկանց և կենդանիների տարբեր օրգանները և նրանց հետ կապված երևույթներ ու հասկացություններ:

Դ) Հատկացուցիչ+հատկացյալ կաղապարով կազմված բարդությունների առանձին բաղադրիչները կարող են արտահայտել բազմազան առարկաներ ու նրանց մասերը, ինչպես նաև բնության երևույթներ: Այս դեպքում ամբողջ բարդությունն արտահայտում է ամբողջի ու մասի հարաբերություն: Այսպես, օրինակ՝ ֆարաբեկուր, հողակտուր, կավակոշտ, կավաշերտ, ածխակտուր, բրոնզափոշի, ձյունաշերտ, կարկտանատիկ, ձյունափաթիլ և այլն:

Ամբողջի և մասի հարաբերությունն արտահայտող այլ բարդությունների առաջին բաղադրիչը կարող է նշանակել զանազան սննդամթերքներ. ինչպես՝ պանրակտուր, մսակտուր, ալրափոշի, բրնձափոշի, գարեհատիկ, բրնձահատիկ և այլն:

Ե) Բարդ բառերի մի այլ խմբում, ինչպես ամբողջ բարդությունը, այնպես էլ դրանց բաղադրիչներն արտահայտում են զանազան ազգակցական հարաբերություններ. ինչպես՝ հորհորայր, հորաֆույր, մորաֆույր, սանահեռ, եղբորորդի, հարսնաֆույր, հարսնեղբայր, քեռայր, քեռեկին և այլն: Վերջին երկու բարդություններում սեռական հոլովածները հնացած են, և դրանց շարահյուսական նշանակությունները համեմատաբար մթազնած են:

Ձ) Մի շարք բարդությունների առաջին բաղադրիչները նշանակում են.

1) Ծրկնային մարմիններ, իսկ երկրորդ բաղադրիչները և ամբողջ կառուցվածքն արտահայտում են երկնային մարմինների տարբեր վիճակներ, փուլեր և դրանց հետ կապված հասկացություններ: ինչպես՝ լուսնեղջյուր, արևապսակ, լուսնապսակ, երկնակամաք, արևաշող, աստղաքույլ և այլն:

2) Անկենդան բնության տարրեր հատվածներ. ինչպես՝ ծովեզր, ծովափ, գետաբերան, գետահովիտ, սարալանջ, լեռնալանջ, լեռնագագաթ և այլն: Նույն խմբատն են արտահայտում նաև նշված կառուցվածքն ունեցող բարդ բառերը: Իսկ երկրորդ բաղադրիչները մեծ մասամբ ունեն տարածական նշանակություն:

է) Բարդ բառերի մի այլ խմբի մեջ առաջին բաղադրիչները ներկայացնում են գրենական պիտույքներ, իսկ ամբողջ բաղադրությունը նույնպես կարող է ունենալ առաջին բաղադրիչի իմաս-

տը կամ կարող է նշանակել այն առարկան, որին վերաբերում է կամ որն իր մեջ է պարունակում առաջին բաղադրիչով նշված առարկան: Իմաստային առումով երկրորդ բաղադրիչը մոտենում է ամբողջ բաղադրության արտահայտած իմաստին: Օրինակներ՝ քանաքանակ, գրչածայր, թղթապանակ, գրչակոթ, ծայրապանակ և այլն:

Հատկացուցիչ+հատկացյալ կաղապարով բարդություններն իրենց իմաստով երբեմն մոտենում են որոշիչ+որոշյալ կազմության բարդություններին, ինչպես՝ առյուծասիրտ, անձրևաջուր, գետաճովիտ, ռսկեգույն, երկնակամար և այլն: Սակայն դրանց շարահյուսական փոխակերպները ցույց են տալիս, որ այդպիսի բարդությունների առաջին բաղադրիչների արտահայտած իմաստում ավելի գերակշռում է պատկանելության, վերաբերության հարաբերությունը, քան թե առարկայի որևէ հատկանիշ արտահայտելը: Այսպես, օրինակ՝ ծովեգր→ծովի եզր, ականջախնցի→ականջի խնցի, մուրաֆուր→մոր քույր, ագռավանուտ→ագռավի ճուտ, ծաղկաթերթիկ→ծաղկի թերթիկ, արհայուդդի→արքայի որդի և այլն:

Նման բարդ բառերի շարահյուսական ուղղակի փոխակերպները հնարավորություն են տալիս նկատելու, որ նշված և նման այլ բարդությունների բաղադրիչները տարբեր իմաստային նշանակություն ունեցող գոյականներ են, որոնք գտնվում են հատկացուցիչ-հատկացյալ փոխհարաբերության մեջ՝ մի դեպքում ցույց տալով պատկանելություն (ագռավաճուտ, արքայորդի, աղվեսագի և այլն), մյուս դեպքում՝ վերաբերում (ականջացավ, ծաղկաքույր, ակնախոռոչ և այլն): Այս կաղապարով, գոյականների բաղադրությամբ, կազմվում են նոր գոյականներ՝ վերևում նշված իմաստներով: Սակայն, ինչպես նախորդ դեպքերում, այնպես էլ այս դեպքում, կան այնպիսի բարդություններ, որոնց ուղղակի փոխակերպները միայն բավական չեն բարդության իմաստն արտահայտելու համար: Բերենք մի քանի օրինակներ.

Աղվեսախաղող բարդության ուղղակի փոխակերպն է աղվեսի խաղող, սակայն այդ բառը նշանակում է չշուշանագգինների ընտանիքին պատկանող ցածր, թունավոր բույս» (ԺՀԼԲԲ):

Աղվեսաբուն — 1. Աղվեսի քուն: 2. Սուտ քուն (ն. տ.):

Առյուծակաթ—1. Առյուծի կաթ: 2. Առյուծի կաթով սնված, քաշ, անվեհեր: 3. Հերոսի, դյուցազնի կաթ (ն. տ.):

Առյուծակորյուն—1. Առյուծի կորյուն՝ ձագ: 2. Քաջի, դյու-  
ցազնի զավակ:

Առյուծամայր—1. Առյուծի մայր, մայր առյուծ: 2. Դյուցազն  
ծնող մայր (ն. տ.):

Այս և նման բաղմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ  
բարդ բառերը կարող են ձեռք բերել փոխաբերական իմաստներ  
և այդպիսի դեպքերում բարդության իմաստը բացահայտելու հա-  
մար անհրաժեշտ է տալ լրացուցիչ բացատրություններ, քանի որ  
ամբողջ բարդության իմաստը չի ստացվում բաղադրիչների ի-  
մաստալին ուղղակի փոխհարաբերությունից:

Բացահայտիչ-բացահայտյալ շարահյուսական կապակցու-  
թյամբ բաղադրիչներով բարդ բառեր ժամանակակից հայերենում  
չկան: Պատճառն այն է, որ բացահայտիչը տրոհվող լրացում է և  
մեծ մասամբ արտահայտվում է բառակապակցություններով՝ լրա-  
ցուցիչ կերպով մեկնաբանելով բացահայտյալի իմաստը: Նման  
հանգամանքը դժվարացնում է բացահայտիչ-բացահայտյալ հա-  
րաբերությամբ կապակցությունները մեկ բառի մեջ միավորելը,  
ուստի հասկանալի է նշված փոխհարաբերություն ունեցող բա-  
ղադրիչներով բարդ բառերի բացակայության պատճառը:

#### Բայական գերադաս բաղադրիչներով բարդ բառեր

Մինչև հիմա մեր ուսումնասիրության առարկան եղել է նա-  
խադասության գոյականով արտահայտված անդամի լրացումնե-  
րին բնորոշող շարահյուսական կապերով բաղադրիչներ ունեցող  
բարդ բառերի իմաստալին վերլուծությունը: Այժմ տեսնենք, թե  
ինչպիսի իմաստալին առանձնահատկություններ ունեն բայա-  
կան գերադաս բաղադրիչ ունեցող բարդ բառերը: Նման բարդու-  
թյունների մեջ բայով արտահայտված գերադաս անդամը ամենա-  
տարբեր փոխհարաբերությունների մեջ է մտնում իրեն լրացնող  
բաղադրիչի հետ: Վերջինս մեծ մասամբ արտահայտված է լինում  
գոյականով, մակբայով, դերանունով: Ժամանակակից հայերե-  
նում շատ տարածված են գոյական+բայ կաղապարով կազմված  
բարդ բառերը, որոնցում գոյականը կարող է կատարել կրող  
խնդրի, կողմնակի ենթակայի, հանգման, մատուցման խնդրի,  
անջատման անուղղակի խնդրի, տեղի պարագայի պաշտոնների  
Բարդության կազմում հանդես եկող բայական անդամը իրեն  
ստորադասվող բաղադրիչի նկատմամբ ունենում է այնպիսի  
շարահյուսական հարաբերություններ, ինչպիսիք ունենում է սո-  
վորական բառակապակցություններում:

Ինչպես հայտնի է, նախադասության բայով արտահայտված անդամին կարող են լրացնել խնդիրներն ու պարագաները: Բարդ բառերում էլ բայով արտահայտված գերադաս անդամը լրացվում է խնդիրներով ու պարագաներով: Այստեղից հետևում է, որ երբ բարդության երկրորդ բաղադրիչն արտահայտվում է բայով, ապա առաջին բաղադրիչը կարող է լինել որևէ խնդիր կամ պարագա:

Իսկ թե ինչպիսի լրացում կընդունի երկրորդ բաղադրիչում հանդես եկող բայը, այդ արդեն կարող է պայմանավորվել վերջինիս բայիմաստով և սեռով: Այսպես, եթե բարդության բայական բաղադրիչը ներգործական սեռի բայ է, ապա առաջին բաղադրիչը կլինի կրող խնդիր: Ինչպես, օրինակ՝ կենսառու, պատառափաղ, պատվարբե, սերմնացան և այլն: Մնացած դեպքերում, երբ երկրորդ բաղադրիչն արտահայտված է շեղոք և կրավորական բայերով, առաջին բաղադրիչները կլինեն տարբեր խնդիրներ ու պարագաներ: Ընդհանուր առմամբ բայական գերադաս բաղադրիչներով կարելի է արտահայտել գործողության հետ կապված առարկաներ + գործողություն և գործողության հետ կապված հանգամանքներ + գործողություն ընդհանուր իմաստային հարաբերությունները, որոնք իրենց մեջ կարող են ընդգրկել մի շարք ենթատեսակներ:

Այժմ քննենք սրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին.

#### Ենթակա + ստորոգյալ կաղապարով բարդ բառեր

Հայերենում կան նաև ենթակա + ստորոգյալ կաղապարով կազմված բարդ բառեր, որոնք շնայած քննում ենք ստորադաս բաղադրիչներով բարդությունների հետ, բայց իրականում ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը ոչ համադասական է և ոչ էլ ստորադասական, այլ ինչպես նշում է պրոֆ. Ս. Աբրահամյանը, հավասարական-վերագրման է<sup>47</sup>: Շարահյուսական մակարդակում հանդես եկող նախադասության գլխավոր անդամների կապակցման այս առանձնահատկությունն ի հայտ է գալիս նաև նման բաղադրիչներ ունեցող բարդ բառերում:

Ինչպես հայտնի է, ստորոգման առկայությունն ինքնին ենթադրում է նախադասության գոյությունը, որը վկայում է այն մասին, որ մենք գործ ունենք լեզվական ավելի բարդ միավորի հետ, քան բառն է: Ստորոգման առկայությամբ նախադասություն

<sup>47</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 288:

ունենալու փաստը հասկանալի է դարձնում, թե ինչու ենթակաստորոգյալ շարահյուսական հարաբերություն ներկայացնող բաղադրիչներով բարդ բառերը սակավաթիվ են հայերենում: Հիշյալ կաղապարը կենսունակ չէ ժամանակակից հայերենի համար. ինչպես՝ էջմիածին, ինչևէ, որևէ, ովևէ, որևիցե և այլն:

Համեմատաբար ավելի կենսունակ են գործողության սուբյեկտ + գործողություն կաղապարով բարդությունները. ինչպես՝ գայլաճալած, ճողմաճալած, արևախանձ, կարկտաճար և այլն: Այսպիսի բարդությունները մեծ մասամբ արտահայտում են բնության երկվույթներ, ինչպես, օրինակ՝ արևածագ, լուսաբաց, արևամուտ և այլն:

Այս և նման այլ բարդությունների առաջին բաղադրիչները գոյականներ են և անվանում են երկնային մարմիններ, իսկ երկրորդ բաղադրիչները բայարմատներ են և արտահայտում են այդ երկնային մարմինների փոփոխությունները, շարժումը: Բարդությունների այս խմբում առաջին բաղադրիչը, բացի կողմնակի ենթակայից, կարող է ունենալ նաև ներգործող խնդրի նշանակություն (նայած թե բարդությունը բացելիս, երկրորդ բաղադրիչն ինչպիսի դերբայով է արտահայտվում): Երբ այն արտահայտվում է կրավորական սեռի դերբայով, ապա գործ ունենք ներգործող խնդրի հետ, իսկ երբ արտահայտված է ներգործական սեռի դերբայով, ապա առաջին բաղադրիչում ունենք կողմնակի ենթակա:

Այսպես, օրինակ՝ արևակեց→արևի կիզած, արևից կիզված, արևախանձ→արևի խանձած, արևից խանձված, կարկտաճար→կարկտի հարած (ծեծած, ջարդած), կարկտից հարված, գայլապատառ→գայլի պատառտած, գայլից պատառտված, գայլաճալած→գայլի հալածած, գայլից հալածված, գայլախեղդ→գայլի խեղդած, գայլից (գայլի կողմից) խեղդված:

Այսպիսի դեպքերում անխուսափելի են բարդ բառերի զուգահեռ փոխակերպները, քանի որ բարդության իմաստը թելադրում է համապատասխան բայերի ինչպես կրավորական, այնպես էլ ներգործական կիրառությունները. բացի այդ, բարդության կազմում հանդես են գալիս հիմնականում բայարմատները, իսկ վերջիններս չեն մատնանշում, թե կոնկրետ ո՞ր սեռին է պատկանում տվյալ բայը:

Գործողության օբյեկտ + գործողություն:

Այս կաղապարով կազմված բարդություններում երկրորդ բաղադրիչն արտահայտված է բայով, որը նշանակում է որևէ գործո-

ղություն, իսկ առաջին բաղադրիչները կարող են լինել տարրեր իմաստներ ունեցող գոյականներ, սակավ դեպքերում նաև դերանուններ, որոնք ծառայում են որպես երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության օբյեկտ, ցույց տալով այնպիսի առարկաներ, անձեր կամ որպես այդպիսիք մտածված երևույթներ, որոնք անհրաժեշտ են տվյալ գործողության կատարման համար և որոնք անմիջապես իրենց վրա են կրում երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողությունը:

Գործողության օբյեկտ + գործողություն կաղապարով կազմված բարդությունների բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են խնդիր-խնդրառու փոխհարաբերության մեջ: Այս կաղապարով հիմնականում կազմվում են գոյականներ (կրակ-մառիչ, մսավաճառ, պանրագործ, խոզաբույծ, ձկնորս, կոշկակար և այլն), ածականներ (մաքրասեր, ագատասեր, պտղատու, բեր-փատու, մսատու, ծիծաղաշարժ և այլն), բայեր (վիրահատել, ծլարձակել, ղասավաճեցնել, ուսումնասիրել, հերթապահել, վարձա-սւրել և այլն):

Առաջին բաղադրիչով արտահայտված օբյեկտը տարբեր կերպ կարող է ենթարկվել կատարվող գործողության ազդեցու-թյանը: Այսպես՝

ա) Առաջին բաղադրիչով արտահայտված առարկան կամ անձը անմիջապես ենթարկվում են տվյալ գործողության ազդե-ցությանը և դրա հետևանքով կրում են այս կամ այն փոփոխու-թյունը. ինչպես՝ փառաշ, կոշկակար, հրձիգ, մարդասպան, հո-ղագործ, ձկնորս, հումակեր և այլն:

բ) Առաջին բաղադրիչով նշվում է այն առարկան, որը հան-դիսանում է երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության արդյունքը. ինչպես՝ հացթուփ, պատշար, բանաստեղծ, առակա-գիր, մատենագիր և այլն:

գ) Գործողության օբյեկտ հանդիսացող առարկան ֆիզիկա-պես ենթարկվում է տվյալ գործողությանը առանց էական փոփո-խություն կրելու. ինչպես՝ նամակաբեր, նամակատար, լրաբեր, ժամացույց, մաքրասեր, հուսահատ, երախտագետ, փորձագետ և այլն:

Ըստ առաջին բաղադրիչի արտահայտած իմաստի գործողու-թյան օբյեկտ + գործողություն կաղապարով բարդությունները կա-րելի է խմբավորել մի շարք իմաստային դաշտերի մեջ: Նշենք դրանցից մի քանիսը.

ա) Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները սննդամթերքների անուններ են, որոնք անմիջականորեն անհրաժեշտ են երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության համար: Ամբողջ բաղադրությունն ընդհանուր առմամբ նշանակում է անձի անուններ ու կենդանիներ, որոնք այդ սննդամթերքների սպառողներն են կամ իրացնողները: Ինչպես, օրինակ՝ հացակեր, խմորակեր, մսակեր, մսավաճառ, հաբեջրավաճառ և այլն:

բ) Մի շարք բարդությունների առաջին բաղադրիչները զանազան կենդանիների անուններ են, երկրորդ բաղադրիչն արտահայտում է այդ կենդանիների հետ առնչվող գործողություններ: Ամբողջ բարդությունն այս դեպքում ևս նշանակում է անձի անուններ, որոնք իրագործում են երկրորդ բաղադրիչներով արտահայտված գործողությունը: Ինչպես՝ արջասպան, առյուծածն, ձկնորս, այծարած, կովկիթ, ոչխարաբույծ, խոզաբույծ և այլն:

գ) Բարդությունների մի այլ խումբ արտահայտում է մարդու հոգեկան, մտավոր ու բարոյական գործունեության հետ կապված անձեր ու հատկանիշներ. երկրորդ բաղադրիչները ցույց են տալիս մտավոր ու բարոյական և նման այլ կարգի գործողություններ, իսկ առաջին բաղադրիչները՝ դրանց հետ կապված առարկաներ ու որպես առարկա դիտված հասկացություններ: Այսպես, օրինակ՝ աշխատասեր, ընթերցասեր, նշտապան, խաղաղասեր, հալեցագործ, հոգատար, դասավանդել, մատենագիր, արձակագիր և այլն:

դ) Կան մի շարք բարդություններ, որոնց առաջին բաղադրիչներն ընդգրկվում են երկնային մարմինների և բնության երևույթների իմաստային դաշտի մեջ, իսկ երկրորդ բաղադրիչները ցույց են տալիս դրանց համապատասխան գործողություններ: Ամբողջ կառուցվածքն այս դեպքում արտահայտում է երկնային մարմիններն ու բնության երևույթները ուսումնասիրող անձեր, դրանք չափող, կարգավորող գործիքներ ու սարքավորումներ և ընդհանրապես դրանց հետ կապված հասկացություններ: Այսպես՝ աստղագետ. տիեզերագետ, ձմեռնագույծ, անձրևաբեր անձրևաչափ, անձրևախափան, ամսյաճալած և այլն:

ե) Արվեստի տարբեր բնագավառների հետ կապված զանազան առարկաներ և որպես այդպիսին մտածված հասկացություններ են արտահայտում մի շարք բարդությունների առաջին բաղադրիչներ: Նման բարդությունների երկրորդ բաղադրիչներն արտահայտում են դրանց հետ կապված մտավոր ու բարոյական

գործողություններ, իսկ ամբողջ բարդությունը ցույց է տալիս տվյալ գործողությունը կատարողին: Ինչպես, օրինակ՝ թափեա-  
սեր, դերակատար, դեքստան, երաժշտասեր, ջութակահար, դա-  
նակահար, փողահար և այլն:

#### Գործողության հանգման առարկա+գործողություն

Բարդ բառերի բաղադրիչների իմաստային վերլուծությունը բացահայտում է նաև գործողության և նրա հետ առնչվող առար-  
կաների ու հանգամանքների այլ կարգի հարաբերություններ,  
որոնցից մեկն է գործողության և վերջինիս հանգման առարկա-  
յի հարաբերությունը:

Այս կաղապարով կազմված բարդություններն առանձնապես մեծ թիվ չեն կազմում: Դրանք հիմնականում արտահայտում են մարդկանց ու զանազան առարկաների հատկանիշներ և հանդես են գալիս ածականի հարացույցում: Առաջին բաղադրիչները կա-  
րող են արտահայտել:

ա) Երկնային մարմիններ և բնության երևույթներ՝ երկնա-  
հաս, հովիկ, երկնամեծ, երկնաճուլ, խավաբառվոր, ցրտադի-  
մացկուն և այլն:

բ) Մարդու մտավոր ու ֆիզիկական զարգացման հետ կապ-  
ված երևույթներ. ինչպես, օրինակ՝ շափահաս, ուսումնավարժ,  
գրավարժ և այլն:

Երկրորդ բաղադրիչները մի դեպքում ցույց են տալիս ուղե-  
վորման դործողություն, որը հանգում է առաջին բաղադրիչով  
արտահայտված առարկային (երկնահաս, հովիկ, երկնամեծ,  
շափահաս և այլն), այլ դեպքերում բարդության երկրորդ եզրը  
կարող է արտահայտել մտավոր, ֆիզիկական ու հոգեկան գոր-  
ծունեության հետ կապված գործողություն. ինչպես, օրինակ՝  
գրավարժ, ուսումնավարժ, ցրտադիմացկուն, խավաբառվոր և  
այլն:

Գործողության հանգման առարկա+գործողություն կաղա-  
պարով կազմված բարդություններում առաջին եզրը ունի տրա-  
կան հոլովի նշանակություն:

#### Գործողության անջատման առարկա+գործողություն

Հայերենում կան բարդություններ, որոնց բաղադրիչներն ար-  
տահայտում են գործողության և այն առարկայի հարաբերությու-

նը, որից անջատվում է գործողությունը: Ինչպես, օրինակ՝ հողածին, հրածին, սրտաբույս, աղբյուրաբույս և այլն:

Նման կառուցվածք ունեցող բարդ բառերում առաջին բաղադրիչը կարող է արտահայտել.

ա) Այն առարկան, որից բաժանվում, հեռանում է նրա հետ որևէ ձևով կապված առարկա՝ սրտաբույս, վարդախույս, ինճնաբույս, աղբյուրաբույս, կենտրոնախույս և այլն:

բ) Այն առարկան, որից ծագում, սերում է մի բան. ինչպես, օրինակ՝ ջրածին, հողածին, կենդանածին, թթվածին և այլն:

Նշված բարդությունների առաջին բաղադրիչները կարող են անվանել երկնային ու երկրային զանազան մարմիններ (հողածին, ալեագուրկ, ջրածին, լեռնախույս), մարդու և կենդանիների օրգանիզմների հետ կապված հասկացություններ. ինչպես՝ սրտաբույս, ինճնաբույս, կենդանածին և այլն:

Բարդությունը բացելիս՝ շարահյուսական փոխակերպում առաջին բաղադրիչը դրվում է բացառական հոլովով. ինչպես, օրինակ՝ լեռնախույս→լեռներից խուսափող, սրտաբույս→սրտից բըխող, կենդանածին→կենդանուց ծնված և այլն:

Ինչպես երևում է օրինակներից, ուսումնասիրվող կաղապարով կազմված բարդությունների գերադաս բաղադրիչն արտասույտում է այնպիսի մի գործողության գաղափար, որն ունի ծագելու, սերելու, ինչպես նաև մի բանից զրկվելու, մի բանից հեռանալու իմաստները:

Գործողության անջատման առարկա+գործողություն կաղապարով կազմված բարդություններն արտահայտում են տարբեր անձերի անուններ, առարկաներ (հողածին, ջրածին, թթվածին, գործագուրկ, հողագուրկ և այլն) և առարկաների հատկանիշներ (սրտաբույս, վարակագործ, ինճնաբույս, կենտրոնախույս, գունագուրկ և այլն):

Հասկանալի է, որ դրանք կարող են հանդես գալ ինչպես գոյականների, այնպես էլ ածականների համակարգում:

#### Գործողության կատարման միջոց+գործողություն

Բավական թվով բարդություններ են կազմվում գործողության կատարման միջոց+գործողություն կաղապարով, որոնցում բարդության առաջին եզրը ցույց է տալիս.

ա) Այն առարկան, որի, որպես նյութի, գործադրմամբ կա-

տարվում է գործողությունը. ինչպես, օրինակ՝ քիթեղապատ, նրկաբազադ, կավածեփ, ապակեպատ, ջրաբույժ և այլն:

բ) Այն առարկան, որով, որպես գործիքով, կատարվում է գործողությունը: Այսպես, օրինակ՝ վրձնաներկ, նետաճար, ասեղնագործ, մեքենագիր, մատիտանկար, դաշունաճար և այլն:

Բարդությունների այս խմբում ստորադասվող բաղադրիչները կարող են անվանել.

ա) Զանազան շինանյութեր, մետաղներ. ինչպես՝ կավածեփ, ավազապատ, աղյուսաշար, ֆաբաշեն, ապակեպատ, նիկելապատ, ոսկեզօծ և այլն:

բ) Մարդկային տարբեր զգացումներ, ապրումներ (սիրաշահել, սիրասուն, հուսախաբ, հուզումնալից և այլն):

գ) Երկնային լուսատուներ, օդերևութաբանական երևույթներ, հող, շուր, օդ. ինչպես՝ ամպաբոլ, աստղազարդ, աստղառատ, ձյունածածկ, մշուշապատ, ջրաբույժ, օդասուն, ջրաբքի և այլն:

դ) Բույսեր. ինչպես, օրինակ՝ ծաղկազարդ, բաղեղապատ, վաղաշատ, կանաչապատ, ծառագեղարդ և այլն:

Այսպիսի բարդություններում երկրորդ բաղադրիչն արտահայտում է այնպիսի գործողություն, որն իրագործվում է առաջին բաղադրիչում արտահայտված առարկայի միջոցով:

Գործողության կատարման միջոց + գործողություն կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ, որոնք ցույց են տալիս առարկաների հատկանիշներ:

Այս բարդությունների մեջ առաջին բաղադրիչն ունի գործիական հոլովի իմաստ: Առանձին դեպքերում առաջին բաղադրիչը կարող է ունենալ նաև բացառական հոլովով դրված բաղադրության անուղղակի խնդրի նշանակություն և ցույց տալ, թե ինչպիսի նյութերից է պատրաստված, բաղկացած տվյալ առարկան: Նման դեպքերում բարդ բառի շարահյուսական փոխակերպը երկիմաստ է:

Այսպես, օրինակ՝ մետաղակերտ→մետաղից (մետաղով) կերտված, ֆաբաշեն→քարից (քարով) շինված, բրնձաձուլ→բրոնզից (բրոնզով) ձուլված, տուֆաշեն→տուֆից (տուֆով) շինված, կավաշեն→կավից (կավով) շինված և այլն:

Խնդրառու ածականը բարդության գերադաս բաղադրիչ

Փաստերի քննությունը ցույց է տալիս, որ խնդիր-խնդրառու շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներով բարդություն-

ների գերադաս անդամը՝ երկրորդ եզրը, հիմնականում բայ է կամ բայարմատ, իսկ առաջին եզրում հանդես են գալիս գոյականներ։ Նման շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներ կարող են ունենալ նաև գոյական + ածական կաղապարով կազմված բարդ բառերը, որոնցում առաջին եզրը (արտահայտված գոյականով) դառնում է երկրորդ եզրի (արտահայտված ածականով) լրացումը։ Նման դեպքերում գործ ունենք ածականի խնդրառության յուրահատուկ դրսևորման հետ, որը հանդես է գալիս բարդ բառի սահմաններում։ Ածականով արտահայտված բաղադրիչը իր իմաստին համապատասխան ստանում է այս կամ այն խնդիրը։ Ինչպես, օրինակ՝ ռոտարիկ, խելագուրկ, ջրառատ, ակնաճանո, մտամոլոր, անձեռնախառն և այլն։ Ինչպես հայտնի է, հայերենի բառաբարդման առանձնահատկություններից մեկն է գերադաս բաղադրիչի երկրորդ եզրում հանդես գալը։ Չնայած դրան, որոշ դեպքերում գերադաս բաղադրիչն ընկնում է առաջին եզրում. ինչպես, օրինակ՝ լիաճույս, առատաջուր, արձակաճեռ<sup>48</sup>, լիաքուրմուճ, լիաթոճ և այլն։ Նման կազմությունները Մ. Աբեղյանը համարում է հունարենի ազդեցության հետևանք<sup>49</sup>։

Բարդության գոյական բաղադրիչը կարող է լինել նաև հանգման անուղղակի խնդիր՝ ակնամանո, սիրարժան, պատվարժան, ճիշարժան և այլն։ Սրանց զուգահեռ հունարան կազմությամբ ունենք՝ արժանապատիվ, արժանաճիշատակ, արժանաճավատ և այլն։

Շատ քիչ դեպքերում առաջին բաղադրիչը լինում է անջատման անուղղակի խնդիր՝ աղագուրկ, արմաաղագուրկ, ձայնաղագուրկ, վնասաղագուրկ և այլն։

Խնդրառու ածականի պահանջով բարդության կազմում հանդես եկող ստորադաս բաղադրիչը ունենում է տարբեր հոլովական նշանակություններ։ Այն կարող է ունենալ.

ա) Տրական հոլովի նշանակություն՝ պատվարժան, սիրարժան, ակնաճանո, ճարգարժան և այլն։

բ) Բացառական հոլովի նշանակություն. ինչպես՝ վարակագեռ, ակնագեռ, խելագուրկ և այլն։

գ) Գործիական հոլովի նշանակություն՝ սաղարթախիտ, արցունքախառն, բուրումնալի և այլն։

<sup>48</sup> Սրանք կարելի է մեկնաբանել նաև որպես առատ ջուր, արձակ ճեռ ունեցող։

<sup>49</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 202։

Մի շարք բարդություններում առաջին բաղադրիչի իմաստը երկակի է հասկացվում՝ այն կարող է ունենալ ուղղական, բացառական, գործիական հոլովների նշանակություն: Ինչպես՝ աչա՝ գեղ→աչքերը (աչքերով)՝ գեղեցիկ, ջրառատ→ջուրը (ջրով)՝ առատ, խելապակաս→խելքը (խելքից)՝ պակաս, ռաբրաբիկ→ռոքը (ռոքով)՝ բոբիկ և այլն:

Խնդրառու ածականի հետ համադրվող բաղադրիչն արտահայտում է բազմազան իմաստներ. նշենք դրանցից ամենագործածականները.

ա) Մարդու օրգանիզմի զանազան մասեր և մարդկային մտածողության ու բարոյականության հետ կապված հասկացություններ, զգացումներ նշանակող բառեր կամ բառարմատներ: Ինչպես, օրինակ՝ ռաբրաբիկ, աչագեղ, հարգաբժան, սիրաբժան, մտամուռ, պատվաբժան և այլն:

բ) Բույսեր և նրանց բաղկացուցիչ մասերը նշանակող բառեր ու բառարմատներ՝ սաղաթախիտ, արմատագուլ, ծառախիտ և այլն:

Նման բարդությունները, ինչպես նաև բարդության երկրորդ բաղադրիչները, արտահայտում են առարկայի հատկանիշի գաղափար:

Բարդ բառերի մեջ կան նաև կապական գերադաս բաղադրիչներ ունեցող բարդություններ, որոնցում ի հայտ է դալիս կապի խնդրառությունը: Նշենք դրանցից մի քանիսը՝ այսուհետև, այնուհետև, գյուղամեջ և այլն:

Վերոհիշյալից հետևում է, որ բարդ բառերի կազմում, բացի բայից, որպես խնդրառու բաղադրիչներ, կարող են հանդես գալ նաև ածականներն ու կապերը, իսկ խնդիրներն արտահայտվում են առարկա կամ որպես առարկա մտածված երևույթներ նշանակող խոսքի մասերով. ավելի ճիշտ, վերջիններս մեծ մասամբ գոյականներ են՝ տարբեր հոլովական կիրառություններով կամ էլ գոյականաբար կիրառված այլ խոսքի մասեր: Ինչպես, օրինակ՝ լավատես, վատատես, վատաբանել և այլն: Օրինակներում փոխանուն ածականները (լավը, վատը) լրացնում են բայական բաղադրիչներին (լավատես→լավը տեսնող, վատատես→վատը տեսնող, վատաբանել→վատը խոսել և այլն):

Բարդությունների բայական բաղադրիչները, բացի խնդիրներից ունենում են նաև պարագա լրացումներ, որոնք ցույց են տա-

լիս գործողության հետ կապված հանգամանքներ: Պարագաները բնութագրում են գործողությունը ձևի, չափի, քանակի տեսակետից, ինչպես նաև ցույց են տալիս գործողության կատարման տեղը, ժամանակը, պայմանը, հիմունքը և այլն:

Բարդության մեջ գործողության հատկանիշներ, հանգամանքներ մատնանշող բաղադրիչները կարող են արտահայտվել այնպիսի խոսքի մասերով, որոնք իրենց իմաստներով հնարավորություն ունեն բնութագրելու գործողությունը վերոհիշյալ հատկանիշների տեսակետից: Այս առումով շատ գործածական են մակբայներն ու ածականները: Պարագայական հարաբերություն ցույց տվող բաղադրիչը կարող է արտահայտվել նաև գոյականով, բայց այնպիսի գոյականով, որն իր իմաստով համադրելի է բայական բաղադրիչի հետ, որպես պարագայական լրացում: Այսպես՝ տարածական իմաստ արտահայտող գոյականները բարդության մեջ ունեն տեղի պարագայի նշանակություն. ինչպես, օրինակ՝ անդնդակորույս, գետնատարած, լեռնաբնակ, տիեզերասլաց, փառաբանակ և այլն: Մի շարք գոյականներ էլ, որոնք ունեն ժամանակի իմաստ, հանդես գալով բարդության կազմում, զուգադրվում են բայական բաղադրիչի հետ՝ արտահայտելով վերջինիս նշանակած գործողության ժամանակը: Ինչպես՝ գալուցանացան, աշնանացան, գիշերագնաց, գիշերաշրջիկ և այլն:

Այժմ քննենք բարդության մեջ հանդիպող պարագաների տեսակները և տեսենք, թե ինչպիսի կաղապարներով են դրանք հանդես գալիս:

#### Գործողության տեղ+գործողություն

Այս կաղապարով կազմված բարդությունների առաջին բաղադրիչները ցույց են տալիս գործողության, եղելության տեղը: Դրանք, ընդհանրապես արտահայտելով տեղ, տարածական հարաբերություններ, կարող են ունենալ ներքին, իմաստային տարբերություններ.

ա) Կարող են ցույց տալ այն տեղը, ուր կատարվում է գործողությունը՝ ջրասույզ, ծովասույզ, երկնաբնակ, ետամնաց, մոխրաթավալ, անդնդակորույս և այլն:

բ) Այն տեղը՝ դեպի ուր ուղղված է գործողությունը, ինչպես՝ վերելք, վայրէջք, առաջադիմ, ետադարձ, առաջընթաց, վայրընթաց և այլն:

գ) Այն տեղը, որտեղից սկսվում է գործողությունը, շարժումը. այսպես, օրինակ՝ տեղափոխվել, լեռնաբուխ, երկնահոս, երկրաբուխ և այլն:

դ) Այն տեղը, տարածությունը, որի վրայով, միջով, մոտով, վերևով կատարվում է առարկայի շարժումը, գործողությունը, Օրինակներ՝ գետնասող, գետնաֆարշ, ջրագնաց, օդագնաց, ջրաֆափանց և այլն:

Գործողության տեղ+գործողություն կաղապարով կազմված բարդ բառերի երկրորդ բաղադրիչները նշանակում են շարժման, ուղևորման և այլ կարգի գործողություններ, իսկ ամբողջ բարդությունը ցույց է տալիս առարկայի հատկանիշ, Այս կաղապարով հիմնականում կազմված են ածականներ:

#### Գործողության ժամանակ+գործողություն

Մեծ մասամբ ածականներ ու գոյականներ են կազմվում գործողության ժամանակ+գործողություն կաղապարով բաղադրված բարդություններով. ինչպես՝ գիշերագնաց, գիշերախոս, վաղաճառ, գարնանացան, կանխավճար և այլն:

Հեջտ է նկատել, որ այս կաղապարով կազմված բարդությունների առաջին եզրում հանդես եկող բառերն ու բառարմատներն արտահայտում են ժամանակի գաղափար (դրանք մեծ մասամբ ժամանակի մակբայներ են կամ այնպիսի գոյականներ, որոնց բառիմաստում առկա է ժամանակի գաղափարը):

Որոշ բարդություններում ժամանակի իմաստ է արտահայտում նաև նոր ածականը, զրանցում վերջինս ունի ոչ վաղուց, այլ միայն վերջին ժամանակներս մի բան անելու կամ լինելու նշանակություն: Այդ իմաստային առանձնահատկությունը հնարավոր է դարձնում նոր ածականի համադրելիությունը որոշ բայերի ու բայահիմքերի հետ: Ինչպես, օրինակ՝ նորակառույց, նորափթիթ, նորածիլ, նորեկ, նորաբնակ և այլն:

Ժամանակի իմաստ կա նաև առաջին բառի արտահայտած բառիմաստի մեջ, որը և հաղորդվում է դրանով կազմված բարդություններին. ինչպես՝ առաջնախոս, առաջնեկ, առաջնակառույց և այլն:

Ընդհանրապես ժամանակի պարագան ունի իմաստային տարբերակներ՝ կարող է արտահայտել գործողության կատարման ժամանակը, գործողության ժամանակային սկզբնակետն ու

վախճանակետը: Բայց բարդության մեջ նշված իմաստային ներ-  
րերանգները անորոշալի են, քանի որ բառակապակցության հնա-  
րավորություններն այս տեսակետից ավելի ճկուն են՝ բարդ բա-  
ռերի բաղադրիչների ներքին կապի համեմատությամբ:

#### Գործողության ձև-գործողություն

Բարդության կազմում լրացում բաղադրիչը լինում է նաև  
ձևի պարագա, որը ցույց է տալիս գործողության կատարման ձևը՝  
վերջինիս ներքին ու արտաքին հատկանիշները: Ինչպես, օրինակ,  
ֆաղցրախոս, ներաճյուս, արդարադատ, արագաշարժ, դանդաղա-  
խոս և այլն:

Ձևի պարագան բարդության մեջ արտահայտվում է.

ա) Հատկանիշ արտահայտող բառերով, ինչպես՝ արագա-  
վազ, ծանրաշարժ, բարձրախոս, դժվարամարս, դյուրահալ և այլն:  
բ) Առարկա և որպես առարկա մտածված երևույթներ արտա-  
հայտող բառերի գործիական հոլովով՝ բոնցֆահար, թեալոդ, շար-  
ֆացան, ականատես, ոտնահար և այլն: Ինչպես երևում է օրինակ-  
ներից, ամբողջ բարդությունն արտահայտում է առարկայի իմաստ  
և հատկանիշի իմաստ:

Հիշյալ բարդությունների առաջին բաղադրիչները լինում են  
ածականներ (մեծախոս, դյուրաշարժ, ներաճյուս), մակբայներ  
(արագաշարժ, դանդաղաշարժ, ծանրաֆալ և այլն) ու գոյական-  
ներ (մատնանիշ, ականատես, թեալոդ և այլն): Իսկ երկրորդ բա-  
ղադրիչը միշտ արտահայտվում է տարբեր իմաստներ ունեցող բա-  
յրով ու բայարմատներով: Դրանք կարող են ցույց տալ շարժման  
տարբեր տեսակներ.

ա) Մեխանիկական շարժում՝ ծանրաշարժ, բոնցֆահար, ոտ-  
նահար, թեալոդ և այլն:

բ) Մտավոր ու հոգեկան գործողություններ՝ արդարադատ,  
դժվարահաճ, բարձրախոս, ֆաղցրախոս, դժվարահաղորդ և այլն:

գ) Ֆիզիոլոգիական շարժում՝ ականատես, դժվարամարս,  
դյուրամարս և այլն:

Վերոհիշյալ բաղադրիչների համադրությամբ կազմվում են  
նոր գոյականներ՝ շարֆացան, թեալոդ, բարձրախոս, ականա-  
տես և այլն, ածականներ՝ դյուրամարս, դժվարահալ, արագաշարժ,  
ծանրաշարժ, արդարախոս և այլն, բայեր՝ ազատագրվել, թերա-  
զնահատել, հավասարակշռել, թերակշռել և այլն:

### Գործողության շափ+գործողություն

Մյուս պարագան, որը բարդ բառի մեջ կարող է լրացնել գերադաս անդամին, շափի պարագան է։ Վերջինս ցույց է տալիս իմաստային միջուկ հանդիսացող բաղադրիչով արտահայտված գործողության շափը։ Ինչպես, օրինակ՝ կիսակառույց, շատախոս, կարճատև, քաղմաշարշար, սակավախոս և այլն։

Այդ բարդությունների առաջին բաղադրիչները հիմնականում արտահայտվում են՝ շափի մակրայներով՝ հաճախադեպ, շատախոս, սակավախոս և այլն։ ածականներով՝ բարձրախոս, կարճատև, երկարակյաց, երկարախոս և այլն։ Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե ինչ խոսքի մասով է արտահայտվում, այսպիսի բարդ բառերի առաջին եզրը ցույց է տալիս բարդության երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության շափը։ Վերջին բաղադրիչը կարող է արտահայտել։

ա) Գործողություն տարբեր առարկաների նկատմամբ, ինչպես՝ կիսակառույց, կիսախուփ, կիսակատար և այլն։

բ) Մտավոր ու հոգեկան, ֆիզիոլոգիական գործողություններ՝ քաղմաշարշար, քաղմատանջ, շատախոս, բախոս, երկարակյաց և այլն։ Այս դեպքում ամբողջ կառուցվածքն արտահայտում է առարկաների զանազան հատկանիշներ։ Ինքնին հասկանալի է, որ դրանք հանդես են գալիս ածականների համակարգում։

### Գործողության պատճառ+գործողություն

Ածականներ են կազմվում նաև գործողության պատճառ+գործողություն կաղապարով։ այսպես, օրինակ՝ սիրատու, վշտաբեկ, վշտամոռմոռ, սիրաբոբոբ, հոգնատանջ և այլն։

Նկատելի է, որ նման բարդություններում գործողության կամ եղելության պատճառը ցույց տվող բաղադրիչներն արտահայտում են մարդկային զգացումներ, ապրումներ, իսկ երկրորդ բաղադրիչն արտահայտում է հոգեկան տարբեր գործողություններ։

Մյուս պարագաները՝ հիմունքի, պայմանի, նպատակի, զիջման, միասնության, բարդ բառի կազմում հանդես չեն գալիս, քանի որ ամեն շարահյուսական կապակցություն չէ, որ հնարավոր է արտահայտել բարդությամբ։

Ստորադասական հարաբերությամբ կապված բաղադրիչներ ունեն նաև հարադրական բայերը, որոնցում գերադաս անդամն է բայական բաղադրիչը: Այս բայական բարդությունները ևս հանդես են բերում բաղադրիչների այնպիսի փոխհարաբերություններ, որպիսիք ունեն մինչև այժմ քննված ստորադաս բաղադրիչներով բարդ բառերը:

Արդեն ասվել է, որ բոլոր բարդ բառերը չէ, որ ունեն իրենց համարժեք բառակապակցությունները, եղածներն էլ առանձին դեպքերում առաջացնում են երկդիմություն: Վերջինիս պատճառն այն է, որ բարդությունների իմաստային վերլուծությունը կատարելիս հիմնականում դիմում ենք ինտուիցիային, որը բացարձակ չէ և աչքի չի ընկնում օբյեկտիվությամբ: Դրա հետևանքով միևնույն բարդ բառը հաճախ արտահայտվում է տարբեր բառակապակցություններով, և դրանց տակ հասկացվում են տարբեր իմաստներ:

Ինչպես, օրինակ՝ լավատես 1. լավը, լավ բան տեսնող: 2. լավ տեսնող: Ջրառուն 1. Ջրով սնվող: 2. Ջրի մեջ սնվող: Ջրածին 1. Ջուր ծնող (ստեղծող): 2. Ջրի մեջ ծնված, 3. Ջրից ծնված: Կովկիթ 1. Կով կթելը: 2. Կով կթող: Տխրադալուկ 1. Տխուր և դալուկ: 2. Տխրությունից դալկացած: Հոգնատանջ 1. Հոգնած և տանջված: 2. Հոգնածությունից տանջված և այլն:

**ԲԱԶՄԱԶԵՎՈՒՅԹ ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԲԱՂԱԴՐԻԶՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բայական հարադրությունների մեջ հաճախ են հանդիպում բաղմաձևույթ բարդություններ: Սրանցում սովորական են երեք, երբեմն էլ ավելի արմատներից կազմված բարդ բառերը. ինչպես՝ ել ու մուտ անել, ավան քալան անել, ծանր ու թեթև անել, ան ու սալաքալ ցցել, վայրիվերո խոսել և այլն: Բացի հարադրական բայերից բաղմաձևույթ կարող են լինել նաև այլ խոսքի մասեր: Երկուսից ավելի արմատներից կազմված բարդություններով արտահայտվում են հատկապես թվականները, ինչպես՝ հարյուր տասներեկ, հարյուր երկու հարյուր քսանմեկ, վեց հարյուր երեսուներկու և այլն:

Երկարմատ բարդ բառերի նման բազմարմատ բարդություններում ևս բաղադրիչները կապված են լինում համադասությամբ և ստորադասությամբ: Ինչպես, օրինակ՝ հազար ինն հարյուր ք-

սան, ճարձուր տասնվեց, գրադարանավար, չրաղացֆար, ավտո-  
պանետամաս, ճեռախոսակայան և այլն:

Երկուսից ավելի արմատներից բաղադրված բարդ բառերի  
վերլուծությունը կատարելիս բարդ կառուցվածքը նախ բաժա-  
նում ենք անմիջական կազմիչների, որից հետո վերջիններս ենք  
ենթարկում ձևույթային վերլուծության: Նման բարդութունների  
բաղադրիչները հաջորդաբար լրացնում են միմյանց, եթե բարդու-  
թյան բաղադրիչների կապը ստորադասական է: Այսպես՝ գա-  
րեջրավաճառ բարդության առաջին բաղադրիչը ուղիղ խնդիր է  
երկրորդ (վաճառել) բաղադրիչի համար, այնուհետև բարդու-  
թյան առաջին եզրը ներկայացնող գարեջուր բարդ բառն իր հեր-  
թին բաժանվում է գարի-ա-ջուր կազմիչների, որոնք կապված են  
որոշիչ-որոշյալ շարահյուսական կապով: Նույն ձևով ավտոպա-  
նետամաս կառուցվածքում անմիջական կազմիչները կապված  
են հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական կապով, իսկ պա-  
նետամաս բաղադրիչի հոգավորիչները՝ որոշիչ-որոշյալ կապակ-  
ցությամբ:

Համադաս բաղադրիչներով բարդ բառերի շարահյուսական  
կապն ավելի պարզ է. ինչպես՝ ճարձուր տասնհինգ, ճազար երկու  
ճարձուր ֆսան և այլն:

Հնարավոր է, որ միևնույն բարդության ներսում առկա լինի  
թե՛ ստորադասություն և թե՛ համադասություն: Այս դեպքում  
բարդության հիմնական կազմիչների կապը ստորադասական է,  
իսկ առաջին եզրում հանդես եկող բարդ բաղադրիչի կազմիչների  
շարահյուսական կապը համադասական է: Այսպես, օրինակ՝ շուտ  
ու մուտ գալ, ճարց ու փորձ անել, լավ ու վատ անել, ներս ու  
դուրս անել, վեր ու վար անել և այլն:

Կասկածից վեր է, որ երկարմատ բարդ բառերը կազմում  
են հայերենի բարդութունների գերակշռող մասը, իսկ երկուսից  
ավելի արմատներից կազմվածները՝ փոքր մասը միայն:

Բազմաձևույթ են նաև բարդ ածանցավոր բառերը, որոնցում  
բացի մեկից ավելի հիմնական ձևույթներից, առկա են նաև ա-  
ծանցները: Վերջիններս հիմքերի համեմատությամբ ունեն ակըն-  
հայտ իմաստային տարբերություններ: Նրանք բարդութունը բա-  
ղադրող արմատների նման չեն արտացոլում իրականության  
այս կամ այն երևույթը, անմիջականորեն կապված չեն նրա հետ:  
Ածանցները միայն իրենց հատուկ վերացականությամբ անուղ-  
ղակի կերպով ընդհանրացնում են իրականության փաստերը:

Բարդ ածանցավոր բառերից հայերենում ավելի տարածված են վերջածանցավորները, որոնցում վերջածանցները կատարում են իրենց դասակարգող դերը: Քանի որ վերջածանցները մեծ մասամբ կապվում են որոշակի խոսքի մասերի հետ, ապա որևէ վերջածանցի միացումը այս կամ այն հիմքին նշանակում է նաև բարդ բառի վերագրումը այս կամ այն խոսքի մասին:

Հայերենում կան համաբանությամբ առաջացած շատ բարդություններ, բայց ակնհայտ է նաև բառաբարդման պատմական կապը բառակապակցությունների տարբեր տիպերի հետ: Մինչդեռ ածանցումը կատարվում է համաբանության միջոցով և զուրկ է որևէ շարահյուսական հարաբերությունից:

Ինչպես էլ առաջացած լինի բարդ բառը, այնուամենայնիվ նրա բաղադրիչները գիտակցվում են որպես արմատական ձևույթներ, որոնց մեջ առկա են առավել կամ պակաս շափով մթագնած շարահյուսական փոխհարաբերություններ: Հենց որ դադարում է բարդության բաղադրիչների այդպիսի գիտակցումը՝ այսինքն բարդ բառի առանձին հիմնական ձևույթներից բաղադրված լինելը, բարդ բառը դառնում է ածանցավոր կամ պարզ: Այսպես, երբեմնի բաղադրյալ համարվող ռչինչ (ոչ+ինչ), այժմ (այս+ժամ), մյուս (մի+ևս), զեռդ (զի+արդ) և այլ բառերը իրենց հոդավորիչների առանձնության գաղափարի մթագնամբ, ժամանակակից հայերենում գիտակցվում են իբրև պարզ (արմատական) բառեր: Բառակազմական համակարգի զարգացումը նման դեպքերում բերում է կառուցվածքային ձևերի փոփոխություն, նրանց կառուցվածքային-իմաստային հարաբերությունների փոփոխություն: Սակայն միշտ չէ, որ այդ զարգացման հետևանքը լինում է բաղադրյալ կառուցվածքի լրիվ պարզեցումը՝ ընդհուպ մինչև արմատական բառի առաջացումը: Այլ դեպքերում բարդ բառի բաղադրվածությունը պահպանվում է, և բաղադրիչներից մեկն ու մեկը ենթարկվում է իմաստային փոփոխության (կորցրնում է նյութական իմաստը և ձեռք է բերում վերացական նշանակություն): Նման դեպքերում լեզվի զարգացումը հանգեցնում է բարդ բառերից պարզ ածանցավոր բառերի առաջացմանը, այլ կերպ ասած, բարդության մի բաղադրիչը վերածվում է ածանցի: Բառարմատներից ծագած ածանցները կրել են իմաստի, որոշ դեպքերում նաև ձևի փոփոխություններ: Բառարմատների ածանցների վերածվելու աստիճանը կախված է այն բանից, թե որքան է իմաստափոխվել արմատը, որքանով է հեռացել

սկզբնաղբյուր հանդիսացող բառից և հանդես եկել սպասարկու-  
ղերով: Բերենք այս ճանապարհով առաջացած ածանցների մի  
քանի օրինակներ:

—Արկ ծագել է գրաբարյան արկանել (գցել, նետել, դնել) բա-  
յի արմատից, նույն իմաստը պահպանված է նաև ածանցի մեջ:  
Այս ածանցով գոյականներից կազմված են բայեր (անվանարկել,  
առաջարկել, դատարկել, ձեռնարկել, խնկարկել, սակարկել, փոր-  
ձարկել և այլն):

—Արկ արմատով ժամանակակից հայերենում ունենք արկ,  
արկած բառերը:

—Արաբ գրաբարյան առնել (անել) բայի անցյալ կատարյալի  
արմատից է ծագել: Եթե նախորդ դեպքում արմատը (արկ), որ-  
պես այդպիսին, դեռևս գոյություն ունի ժամանակակից հայերե-  
նում, ապա առն արմատը նախկին անել իմաստով ժամանակա-  
կից հայերենում պահպանված չէ, մի հանգամանք, որն ավելի է  
նպաստում նշված արմատի իմաստային մթագնմանը:

Այս և նման բազմաթիվ փաստերը վկայում են բառաբարդ-  
ման և ածանցման ակնհայտ կապի մասին, այն մասին, որ լեզ-  
վի մեջ ածանցների առաջացման կարևոր միջոցներից մեկն է  
բարդության որոշ կազմիչների (բառերի և բառարմատների) դե-  
րի փոփոխումը, նրանց ձևական փոփոխությունները, իմաստի  
փոփոխությունը կամ մթագնումը: Երբ այդպիսի փոփոխության է  
ենթարկվում բարդության երկրորդ եզրը (որը հայերենի բառա-  
բարդման օրինաչափությունների համաձայն, բարդության իմաս-  
տային կենտրոնն է), ապա բնական է, որ նա չի կարող պահպա-  
նել իր իմաստային գերակշռությունը: Նման դեպքերում իմաստա-  
յին կենտրոնը փոխադրվում է առաջին բաղադրիչին, որն իր հեր-  
թին դառնում է նոր բաղադրության (պարզ ածանցավոր բառի)  
հիմնական մասը՝ արմատը:

Ի դեպ, պետք է նկատել նաև այն, որ ավելի շատ ածանցա-  
կան իմաստ ձեռք են բերում բարդությունների վերջին բաղադրիչ-  
ները. ընդամենը մեկ ածանց (-անդր) ունենք, որն առաջացել է  
առաջին բաղադրիչի՝ անդր բառի իմաստի մթագնման հետևան-  
քով, մնացած դեպքերում ընդհանուր, վերացական իմաստ ձեռք  
են բերել բարդ բառերի վերջին բաղադրիչները: Այս երևույթը կա-  
րելի է բացատրել այսպես. հայերենում մեծ տեղ են գրավում այն  
բարդությունները, որոնց մեջ երկրորդ բաղադրիչը ավելի լայն  
հասկացություն է արտահայտում, քան առաջին բաղադրիչը: Եթե

այդպես է, ուրեմն լայն հասկացություն արտահայտող բառն ունի նաև լայն իմաստային ընդգրկում, այստեղից էլ հետևում է, որ այդ բառերը ավելի հեշտությամբ կարող են ձեռք բերել ընդհանուր իմաստներ (որը բնորոշ է ածանցին), քան ավելի նեղ իմաստային ընդգրկում ունեցող բառերը:

Բարդ ածանցավոր բառերի քննությունը պարզում է, որ հաճախ բարդությունների կազմիչները առանց ածանցների տվյալ կառուցվածքում գոյություն ունենալ չեն կարող: Այս հատկապես վերաբերում է երկրորդ բաղադրիչին. ինչպես՝ սրտանմլիկ, դերասան, սուտասան, ածխահանույթ, մագնիս, նավաշինարան, հեղանկուն և այլն: Այլ դեպքերում բարդ հիմքից կազմվում են նոր բառեր ածանցների միջոցով. ինչպես՝ հրաբխային, գլխացավանք, ծովանկարչություն, ռազմադաշտային, դասակարգային, հրաձգային և այլն:

Ածանցված բարդությունների համապատասխանությունը բառակապակցություններին շատ հաճախ բացակայում է կամ դառնում է ոչ հստակ, որը դժվարացնում է բաղադրիչների իմաստային-տրամաբանական կապի բացահայտումը:

Մյուս կողմից, նկատելի է, որ ավելի շատ ածանցվում են երկարմատ կազմությամբ բարդ բառերը՝ անբարեհնչունությունից ու երկարաբանությունից խուսափելու համար:

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ — Ա. Բակունց

ԱԽ — Ա. Խնկոյան

ԺՀԼԲԲ — Ժամանակակից հայոց (եզվի բացատրական բառարան (հ. 1, 1969)։

ՀՀ — Հ. Հովհաննիսյան

ՀԹ — Հ. Թումանյան

ՀՇ — Հ. Շիրազ

ՊՍ — Պ. Սևակ

ՍԽ — Ս. Խանզադյան

ՆԴ — Նար-Դոս

ՆԴՄ — ՆԱՐ-ԴՈՍ («ՄԱՀԸ»)

Մ — Մուրացան

ВЯ—Вопросы языкознания

КС—Кибернетический сборник

МСС—Морфологическая структура слова в языках различных типов  
(сборник)